



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Lln

1324

1999 5

Ա Զ Գ

Առ Հոգաբարձու

ՔԱՀԱՆԱՑՆ



43803-16

Ա Զ Դ

ԱՌ ՀՈԴԱԲԵՐՁՈՒ

ՔԱՂԱԿԱՆԵՑ

ԻՒՐ ՊԱՇՏՈՆԻՆ ԵՐԵԲ ՊԱՐՏՔԵՐՈՒԽ ՎՐԱՅ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՅ

ԱՏԵՓԱՆ Վ. ՄԵԼքԻՍԵԴԵԿԵԱՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐՆՈՅ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՏ. Ա. Դ. ՊԱՐՏՔԱՆԱՆ ԵԽ ԸՆ.

8288-62

9-

1877

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Սուրբ Քահանայ զքքին մեջ քահանայի մը պարտուց, առարինութեանց¹, և գործոց վրայ լստ բաւականի խօսած ըլլալով այս տէտրակիս միջոցաւ, երկու խօսք ալ քրիստոնէական վարդապետութեան մեկնութեան, քարոզի, և խոստվանութեան վրայ խօսիմ, որոնք ոչ միայն քահանայական պաշտօնին երեք զիխաւոր զբաղմունքներն են, այլ նաև քահանայական սրբութեան և կատարելութեան հետ ներքին յարաքերութիւն ունին. Ուստի յարգելի եղբարակիցներուս դիմութեան և նաևատացելոց ալ օգտին նամար այս երեք նիւթերու նըկատմամբ քանի մը ազդարարութիւններ Տիւպուա կանոնիկոսին «Հոգծնական Եռաւու-
ուն + անաւոյ» զքքեն ևս ուրիշ քարո-
յական զքքերէ քարգմանելով կը նրա-
տարակեմ, որոնք այնչափ աւելի նար-
կաւոր են, որչափ որ երկար փորձա-
ռութեամբ ապահովցած ըլլալով, անոնց

ՀԲ. 1324

(1324-աշ)

զանցառութիւնը ամենամեծ վճասներու կրնայ առիր եւ պատճառ ըլլալ :

Հոգաբարձու քահանային վերոյիշեալ երեք զբաղմունքները անտարակոյս ամենակարենոր են, եւ կոյր է ով որ առաջին նայուածքով չի տեսներ զայն բայց այս այլ յայտնի է որ այս նիւթերու վրայօր անքիւ եւ գեղեցիկ ճառեր կան գդերին մէջ տարածուած . Ո՞ր տիրացուն աստուածաբանութեան եւ սուրբ գրոց նարկ եղած գրեանքը ձեռք բերելին վերջը , չի շանար ստանալու նաեւ այն գրքը Երբ , որոնք քահանային տգիտներուն կրութեան . խոսովվանաբանին մէջ ամփիոնին վրայ , եւ քրիստոնեական սորվող տղայոց հետ ունեցած պաշտօնին վրայ կը խօսին : Անոր նամար ինձի ուրիշ բան չի մնար ընելու , երեք ոչ որիշներուն ընդարձակօրեն եւ գերազանցաբար գրածները նամառ.օտիս ընթերցողներուն ներկայացունել ի փառս միոյն Աստուծոյ :



ԳԼՈՒԽ Ա.

Մեկնութիւն քրիստոնեական վարդապետութեան—ինչպէս ընելու է որ տղայոց դիւրին եւ օգտակար , եւ մեզ այ արդիս նաւոր ըլլալ :

1. Նախ եւ յառաջ պէտք է որ այս պաշտօնին վերջին աստիճանի կարեւուրութեանը վրայ համոզավնք . բոլոր քահանայական կեանքերնուդ մէջ ասկէց աւելի օգտակարը չեք կրնար վարել . զգուշանալու է ասիկայ երկրորդական խնդիրներուն կարգը դասելէ . եւ կամ քարոզութեան պէս հանդիսաւոր բան մը չըլալուն պատճառու . բանի տեղ չի դնելու . վասն զի այս պաշտօնը վարելու ատեննիդ , քովերնիդ տղոցմէ զաս ուրիշ մէկը պէտոր չգտնէք , որոնք որ ուզածնուդ պէս չեն կրնար հանճարներուդ բարձրութիւնը յարգել : Ասանկ մատածող եւ հետեւարար ալ ասանկ վարուող քահանայ մը յայտնի կ'ընէ որ , վրան եռամնդեան եւ ոչ ստուերը կը դանուի , եւ Աստուծմէ խստութեամբ դատուելու արժանի է :

2. Երբէք չի մոռնաք որ տղիտութիւնը սուրբ կրօնքներուս պատիժ ու պատուհանն է . սովորաբար ոմանք այս ամենասուրբ եւ ծշմարիտ կրօնքը կը հալածեն , եւ ուրիշները կը թողուն , եւ շատ մը մարտ

գիկ ալ անտարբերաբար կը վարուին . ու
րուն միմիշայն պատճառն այս է որ , սոյն
ողորմելիներուն առաջին կրթութիւնը՝
քրիստոնէական վարդապետութեան մէջ
կրթութիւնը թերի եղած է , զանց առ-
նուած է : Ըստ պատշաճի եղած քրիստո-
նէականին մեկնութիւնները առաքինու-
թեանց սերմն են բոլոր կենաց համար ,
եւ խողի յանդիմանութեան պատճառ յե-
տոյ փրկութեան ճանապարհը թողու փոր-
ձութիւնը զգացողներուն համար :

Յ. Ֆողովրդապետութիւնը , ուր որ
պաշտօն կը վարէք , եւ որուն վիճակն
վրայ այնպէս սրտանց կը հառաչէք , դու-
ցէ ուրիշ միջոցաւ չի նորոգուի , եթէ ոչ
միայն քրիստոնէականի պատշաճ մեկնու-
թեամբ : Ծերերը , ողո՞րմելիներ , կրօնա-
կան կրթութիւն մը չունեցան . ձեր խը-
րանները չեն կրնար այս պակասութիւնը
լեցունել . քրիստոնէականի մեկնութիւն-
նիդ անոնք կ'անարդին . ամբողջ շնչը
ձեզը ըստած եւ կործանելու վրայ է . հի-
մերէն նորոգուելու կարօտ է : Տղայք ,
ահաւասիկ ապագային մեծ յոյսը , աղաքը
կրթեցէ՛ք քրիստոնէականի բարի եւ պատ-
շաճ մեկնութեամբ :

Դ. Բայց այս մեկնութիւննիդ առանց
պատրաստութեան կրնա՞ն արդեօք աղէկ
ըլլալ : Քրիստոնէականի դասերնիդ որպէս
զի օգտակար ըլլան , աւետարանի մեկ-
նութիւններէն շատ աւելի աշխատանք

կ'ուղեն . թէեւ աղէկ ընելու համար ժա-
մանակ ուսում եւ դործադրութիւն պէտք
է , սակայն եղո՞ւկ թշուառութեան , ո-
րովիետեւ մինակ տղայոց կը խօսուի , քրիս-
տոնէականի դաս մը տալու կ'երթըցուի
առանց վայրկեան մըն ալ մտածելու , խօ-
սելու դիւրութեան վրայ վստահացած , բա-
նի տեղ խօսքեր կ'ըսուին , եւ խեղճ տր-
դաքը սնունդ առնելու տեղը՝ անօթի
տուներնին կը դառնան :

Ե. Կ'ուղէ՞ք աղուոր եւ պաղաւէտ քր-
իստոնէական ընել , չափէն աւելի սէր
մը կապեցէք այս պաշտօններուդ վրայ ,
եւ իթէ առ այս բնական հակում մը չու-
նիք , Աստուծմէ ինչըցէք զայն ամենա-
սուրը կուսին միջնորդութեամբը : Աիրե-
ցէ՞ք նաեւ տղայքը , բայց մաքուր եւ
սուրը սիրով յԱստուած , եւ Աստուծոյ հա-
մար : Դուք արդէն դիտէք թէ Ցիսուս Քը-
րիստոս ո՛չչափ կը սիրէք զանոնք : Եթէ
դուք զանոնք սիրէք , անոնք ալ զձեզ կը
սիրեն . այնուհետեւ հարդ չըլլար որ ծր-
նողք զիրենք պատժեն քրիստոնէականի
խաւելու համար , յօժարութեամբ վաղե-
լով կուգան , եւ այն ատենը սիրոյ ճշմա-
րիս յարաքերութիւն մը կը տիրէ մէջեր-
նիդ : Ո՞հ , այն մատղաշ տղայոց ըրած քր-
իստոնէականի դասերնիդ : Ո՞րչափ հոգ
կը տարուի սիրուած անձի մը վրայ , եւ
ո՛չչափ աշխատանք եւ նեղութիւն յօժար
սրտով կը կրենք մեղի սիրելի անձ մը

վոտնդէ ազատելու համար : Գրիստոնէականի աղէկ դաս մը յաւիտենական վոտնդներէ կրնայ ազատել այս անմեղ աղաքքը :

6. Տղայոց մէջ գտնուած ատեննիդ վեհանձն եւ ծանրաբարոյ եղիք, որպէս զի խստութիւն բանեցընելու չի կարօսիք . այնպէս վարուեցէք որ, ըստ պահանճման հարկին կարող ըլլաք զանոնք զսպել, եւ անուշ փարմունքով ալ անոնց սէրը ձեզի դրաւեցէք : Տղոցմէ եւ աշակերտներէ առելի խորամանկ բան չիկայ . առաջին օրուընէ իրենց վարպետներուն տկար կողմը դիտելու եւ գտնելու համար : Հարիւր անդամ այս դէպքը դիտելու առիթը ունեցայ առանց խելք հասցունելու . բայց ստուդիւ փորձուած բան մըն է : Ո՞վ կ'ուզէք եղիք, ես յառաջուց ձեզի կը գուշակեմ . աղաքը քրիստոնէականին առաջին դասին կը հասկընան թէ արդեօք կրնան խաղի ետեւէ ըլլալ . անհնազանդիլ եւ ծուլութեան ձամբան բռնել եւ այն թէ ո՛չ : Ուստի ամենամեծ զգուշութիւն այնպէս վարուելու, որ առաջին դասերէդ տղայը հասկընան որ հետերնիդ կատակ չըլլար . այլ ուշիմ հնագանդ եւ ուսումնասէր ըլլալու են :

7. Նատ մը բարեսրտութիւն ցոյց տուէք, որպէսզի համօզուին թէ կը սիրէք փոքրիկ հօտերնիդ, եւ անոնց մէջը գտնուելնուդ համար ալ մեծ զուարձութիւն մը կ'զգաք: Նատ անդամ ըսէք իրենց, եւ մանաւանդ

քրիստոնէականի դաս տալու եռանդներովդ ապացուցէք խօսքերնուդ ամկեղծութիւնը : Երբ զմէկը պատժելու ատիպուիք, հասկըցուցէք որ մաքերնիդ միայն ուղղելն է զիրենք, եւ նոյն խակ պատժելու ատեննիդ ալ իմացուցէք որ սրտերնուդ բարութիւնն է, որ զձեզ կ'սափիպէ զիրենք ուղղելու, եւ թէ խստութիւննիդ զայն քօղով մը ծածկեր է, բայց բոլորովն մերժած չէ :

8. Կոպիտ կամ վշաացուցիչ խօսք մը ամենեւին բերաններէդ չելիէ եւ ոչ ալ կատակներ եւ ծաղրածութիւններ ընէք : Տղաքը միայն սիրելով գոհ մի ըլլաք, այլ տեսակ մը սիրալիր յարգութիւն ցոյց տալու է իրենց, երբէք խօսակցութեան մէջ եղակի գու չըսելով Յանցանքը որչափ ծանըր ըլլայ ամենեւին ծեծելու չէ, պատժելու ուղղուած յանցանքին ծանրագոյնը գուք չընէք : Այս աեսակ պատժոց հետեւութիւններն շատ անդամ վտանգաւոր եղած են թէ կրօնքի եւ թէ անոր պաշտօնէից:

9. Պարտասրեցէք աշկերտնիդ բառ առ բառ քրիստոնէականը սորվելու . ասիկայ կարծածներէս շատ աւելի հարկաւոր է : Ասկից զատ, կարելի եղածին չափ պահանջելու էք որ, դասերնին կարենան անսըլիսալ եւ առանց ընդհատութեան սորվիլ : Այսպէս սորվածները մտքերուն մէջ կը տպաւորուին, եւ թէպէտ դեռ տղայ ըլլալով առանց խորհրդածութեան

եւ թութակի պէս կ'ըսեն դասերը . սաւ կայն տարիքնին առնելով զգօնութեամբ քրիստոնէականի սորված կէտերուն վրայ կը խորհրդածեն , որոնք դեռեւս մտքերէն չեն հանած : Զի մոռնաք այս կարեւոր յանձնարարութիւնը :

10. Ամէն կերպիւ հոգ տանելու էք որ , քրիստոնէականի մեկնութիւնիդ բացայտ եւ պարզ ըլլայ , եւ բառ մըն ալ չանցնիք առանց հասկցնելու . եւ գիտութիւնիդ կեղծելով , իբրև թէ միտքը տղոցմէ սորվելու ջանացէք : Քրիստոնէականին բացայայտ տեղերը կարդալով՝ դուք ձեզի հարցուցէք որ , մի՛ գուցէ միշակ խելք մը դեռեւս հասկնալու դժուարին եւ մթին տեղ մը գտնէ քրիստոնէականին մէջ : Եթէ այսպէս չընէք , կըրթել կարծած ատենինիդ անկիրթ կը թողուք , գոնէ սորվեցուցածնիդ պակասաւոր եւ անկատար բան մը կ'ըլլայ : Ո՛րչափ քրիստոնէականի վարպետներ յիմարութեամբ համոզուած են որ , իրենք քրիստոնէականը հասկնալուն համար աղուաքն ալ պէտք է հասկնան :

11. Կարելի եղածին չափ ջանալու է որ տղաքը ըսածնիդ հասկընան , եւ երբէք ուրիշ նիւթի անցնելու չէք , մինչեւ որ ապահով չըլլաք որ , մեկնութիւննիդ կատարելապէս տղաքը հասկըցած են : Ասոր վրայ ապահով ըլլալու համար միայն աւելի կը թուած ու խելացի տղայոց հարց-

մունք ընելով գոհ ըլլալու չէք . այլ մանաւանդ թէ այսպիսի ատեն աւելի բթամիտներն ընտրելու էք : Հարցմանց ատեն խօսքերնիդ փոխեցէք իմաստը ճիշդ պահելով , բայց խօսքերը տարբեր ըլլալով տուած պատասխաններէն կը հասկընաք թէ իմաստը հասկըցե՞ր են թէ ոչ :

12. Ահաւասիկ ամենակարեւոր ծանուցում մը , զոր կ'ուզէի որ քրիստոնէականին ամեն երեսին վրայ զլխագրով տպուած ըլլար . որպէս զի քահանան միշտ աչքին առջեւ ներկայ ունենան : Քէ լիսուցէ՛ + եւ շար իսուցուցէ՛ + գրեթէ մեծաւ մասսամբ շատախօս կ'ըլլան քրիստոնէական սորվեցուողները , որն որ մեծ զեղծում մըն է . կը կարծէ՞ որ տղաքը կարող ըլլան մրտքերնին պահել այն երկայնաբանութիւնները , որոնցմով քրիստոնէականի մեկնիչի պաշտօնը թուլով քարոզիչ կը դառնաք : Կը կարծէ՞ որ այս մատղաշ եւ խորհըրդածութենէ զուրկ տղաքը կարող ըլլան ձեր երկայն վաստաբանութեանց ուժը հասկընալ , եւ անվերջանալի ապացոյցնիդ լսել : Իրենց շարժմունքներէն , կերպերէն , ծիծաղներէն եւ մէկզմէկ կը ծմթել ներէն չէ՞ք անդրադառնար որ , բոլորովին ուրիշ բաներու գացեր է խելքերնին և կ'ուզէ՞ արթնցունել ուշադրութիւննին և Ասկէց աւելի դիւրին բան չկայ : Ընդհատեցէք խօսքերնիդ եւ հարցմունք մը ձգեցէք մէջ աեղը՝ առանց իմացունելու որու-

ուղղուած ըլլալը , եւ կը տեսնէք որ անմիջապէս ոտքի կ'ելեն ամէն այն փոքր գլուխները , ցնդում , աղմուկ , եւ շփոթութիւն չուտ մը կը փարատի , եւ ծանրութիւնը ձեռք առնելով կատարեալ լը-սութիւն մը կը տիրէ , եւ ինչո՞ւ համար Վասն զի իւրաքանչիւր ոք խօսելուն կարգը իրեն գալէն կ'ակնածի :

Բայց անանկ է նէ , գուցէ ըսէք . լուռ կենալու ենք , եւ այսչափ տղայոց մէջը հարկ կ'ըլլայ միայն նիւթականաբար ներկայ գտնուիլ : Ո'չ երբէք , բայց սովորականէն ալ աւելի քիչ խօսելու է , եւ միւայն տղայոց պատասխաններուն մէջ եղած սխալները ուղղելու համար խօսելու է : Բոլոր ձեր ճոռոմաբանութիւնները աւելի օգտակար կրնային ըլլալ , եթէ զատ զատ յօդուածի բաժնէիք , եւ իւրաքանչիւր յօդուած ալ զատ զատ հարցմունքներու նիւթ ընէիք , որոց ստիալելու էք աշակերտները , որ պատասխաննեն : Այս ոճը իրենց յարատեւ ուշադրութիւնը կը գրաւէ , եւ չատ օգտակար կերպով խելքերնին կը կրթէ , ուստի կը կրկնենք . Քիւիսուցէ+ Եւ շատ խօսեցուցէ+ :

13. Կրցածնուդ չափ մէջերնին նախանձաւորութիւնը գրգռեցէք , պատույ տեղ որոշեցէք , փութաշանութեան կէտեր ցրուեցէք , — վարձք խօստացէք — տղայոց՝ մէկը միւսին դէմ առարկութիւններ ընել առէք այնպիսի կէտի մը վրայ , ու

րուն վրայ կը փափազիք որ , աւելի լուսաւորուին , եւ աւելի աղէկ ըմբռնեն , յաղթողին պարզ եւ մը խօստացէք . նախանձաւորութիւնն աւելի տղայոց սրտին վրայ աղդող բան չիկայ :

14. Պատրաստ ունեցէք պատմական եւ բարի օրինակ ըլլալիք ընտիր դէպքեր եւ վէպեր . տղաքը փարտեցունելու է որ յօժարութեամբ եւ սիրով մտիկ ընեն այն իրենց պատմած դէպքերդ , վամն զի հաշզիւ թէ առաջին խօսքը սկսած , նոր եւ զուարձալի բան մը լսելու փափազը բողոք ուշադրութիւննին կը գրաւէ : Անոնց ցնորումը տեսածնուուդ պէս յառաջուց ըսէք որ , գեղեցիկ պատմութիւն մը ունիք իրենց ընելիք ուստի հարկ է որ . մինչեւ վերջը աղէկ մտադրութիւն ընեն . այս պատմութիւնը այն բարոյական յորդորակէն վերջը զուրցելու է , զորն որ ամէն քրիստոնէականի գասէ վերջը անխախտ ընելու է , եւ որն որ այն դասին իրբեւ մէկ հետեւութիւնը ըլլալու է : Այս յորդորակը հայրական ձեւով եւ օծութեամբ ընելու է , եւ կրկնելու է որ զիրենք միշտ աճեցուն սիրով մը կը սիրէք :

15. Երգերը զանց չընէք . ասիկայ տըղայոց շատ հաճելի է , զիրենք կ'ելեք-տրականացունէ , եւ ցնդումնին կ'արգելու . հօդ տարէք որ քանի մը երգեր երանուց սորվին , որպէսզի անվայել երգերու տեղ զանոնք երգեն , որն որ ժողովրդա-

պետութեան մէջ միշտ բարի օրինակ կ'ըլ-
լայ : ժողովեցէք երբեմն երբեմն կամ
ժողովրդապետանոցը , եւ կամ ուրիշ յար-
մար տեղ մը անոնց աղուոր երգեր սոր-
վեցունելու , եւ երգել տալու համար :
Ամենուն ալ երգել տուեք միայն բաղա-
ձայնները զատելով , որ ուրիշներն ալ չի
չփոթին , եւ դիւրին երգեր սորվեցունե-
լու հոգ տարեք : Ընդհանրապէս խօսելով
զանց առնելու է այն երգերը որ դիւրու-
թեամբ չեն կրնար սորվիլ . երգերը բազ-
մութեան համար շնուած են , եւ ոչ թէ
անհատներու , որ բազմութեան վրայ աղ-
դեցութիւն մը չեն ըներ :

16. Զեզի գործակից վարժապետներու
եւ վարժուհիներու հետ խօսքերնիդ մէկ
ընելով ինսպրեցէք որ մասնաւոր ջանքով
հոգ տանին քրիստոնէականին վրայ , ցոյց
տալով անոնց՝ տղայոց կրօնական կրթու-
թեան վերջն աստիճանի կարեւորութիւ-
նը : Նատ անգամ վարժապետը ժողովր-
դապետին վրայ կը ճգէ . եւ ժողովրդա-
պետն ալ վարժապետին ըրածէն զոհ կ'ըլ-
լայ , որն որ բացարձակապէս խոյս տալիք
ապառաժ մըն է : Խւրաքանչիւր ոք այն-
պէս աշխատի տղայոց քրիստոնէական
կրթութեան վրայ , իրրեւ թէ առանձին
ըլլար առանց օդնական մը ունենալու +
կրօնական նիւթերու մէջ կրթութիւնը
երբէք չափազանցութիւն չի գիտեր :

17. Վերջապէս ամեն կերպիւ ջանալու

է այս նախնական կրօնական կրթութիւնը
կարելի եղածին չափ աղէկ ընելու , եւ
կրօնական սկզբունքը տղայոց մատղաշ
մտքերուն մէջ ցանելով , Աստուծոյ ահն
ու երկիւղը , առաքինութեան սէրը . մեղ-
քէն դարշութիւնը փափուկ սրաերուն մէջ
անջինչ կերպով գրոշմելու է , որպէս զի
յետոյ ատենին պտղաբերէ . եթէ կարող
ըլլար քրիստոնէականի մեկնութիւնը ժո-
ղովրդապետութեան մէջ յարատեւաբար
կարգաւորել , առաջին անգամ Յիսուս առ-
նող տղաքը առաքինութեան մէջ հաստա-
տելու համար , շատ մեծ բարիք մը ըրած
պիտոր ըլլար բոլոր հասարակութեան Աս-
տուծոյ մեծագոյն փառք մը ճարելով . եւ
հոգիներուդ ալ անպատմելի միխթարու-
թիւն մը : Տուն մը հաստատուն չի կրնար
ըլլալ , եթէ հիմը խախուտ ըլլայ . քրիս-
տոնէական վարդապետութեան ուսումը՝
սորովովն Աստածպաշտութեան շէնքին
հիմն ըլլալով , ամէն ճիգ թափելու է որ,
հաստատուն ըլլայ այս հիմը , որպէս զի
անով յետոյ բարեպաշտ եւ առաքինի ժո-
ղովուրդ մը ունենաք այլոց բարի օրինակ,
ձեղի ալ երջանկութեան պատճառ :

(164)

28288-62



ԳԼՈՒԽ Բ.

Քարոզ—նորին չափազանց հարկաւորութիւնը—քարոզին նիւրը—շինելու եւ տայլու եղանակը—գործնական կանոններ:

18. Ամէն բանէ յառաջ քարոզութեան կարեւորութիւն, մանաւանդ անտնօրինելի հարկաւորութեան վրայ համոզուելու ենք, Անհաւաններու դէմ մաքառիլ, ազատամիտները սոսկացունել, մեղաւորները դարձի բերել, արդարները քարութեան մէջ հասաւել, բոլոր աշխարհք սուրբ ընել, շարունակ ցոյց տալով դժոխքը բոլոր իւր անարկութեամբ, արքայութիւնը բոլոր իւր երանութեամբ, ասկից աւելի կարեւորագոյն ի՞նչ կրնայ ըլլալ: Իրաւցունէ ուսմունքներուս աշխատութիւններուս, եւ բոլոր մեր սիրոյն հնարագիտութեան արժանաւորագոյն բան մը չունինք:

19. Այս Աստուածային պաշտօնը ըստ ինքեան անսահմանարար օգտակար է, եւ եթէ մեր ձեռքն անօգուտ կ'ըլլայ, պատճառը չարաչար դործածենիս է. մենք կերպով մը զայն կ'աւրենք, կը փոխենք եւ մեր վաս տրամադրութիւններով կ'այլակերպենք զայն:

Զանանք սուրբ ըլլալու, եւ այն ատենը երեւելի քարոզիչ կ'ըլլանք: — Առաջին ազդարարութիւնը որ կուտամ՝ կ'ըսէ

Հ. Ալ Ժէօն, աղէկ քարոզ տալու համար, աղէկ մտածական աղօթք ընելն է. երկրորդը աղէկ աղօթք ընելն է. երրորդը, չորրորդը, ասաներորդը, աղէկ աղօթք ընելնէ: — Ո՞ Յիսուսէն աւելի աղէկ քարոզ կուտար, եւ ո՞վ անոր պէս աղօթք կ'ըսէր: Եւ հանէր շէեւէն է գլուխ յաջնաւորութեան է լւառ յիւնեաց: (1) Եւ ելեւաւ ժնաց ըստ սպառաւութեան է լւառ յիւնեաց: (2)

Սուրբն Տոմինիկոս՝ այս նախանձաւոր քարոզիչը, որուն բաղմաթիւ ժողովուրդներ ետեւէն կ'երթային, այնչափ հակեալ եւ յարատեւ էր աղօթքի որ, Տոլովաքաղաքաբին եւ ուրիշ բնակած վանքերուն մէջ, չէին կրնար գիտնալ թէ ո՞րն է անոր սենեակը, վասն զի եկեղեցիներուն դասերն եին իր սենեակը, իր ուսումնարանը, իր գրատունը, եւայլն սիրեցեալ եղբարք. հոն միայն կրնանք սորվիլ աղէկ քարոզութեան արհեստը:

20 Ապսպրած աղօթքս նախանձաւորութեան կրակը կը բորբոքէ, եւ այս կրակով սրտերը Աստուածային սիրուլ կը վառէք: Աղէկ մը քննեցէք դուք գձեղ: Սըրտերնիդ արդեօք եռանդով լեցո՞ւն է: Մեղաւորաց ողորմելի վիճակին վրայ մտածելու ատեննիդ՝ սրտերնիդ կը շարժի: Արդեօք զանոնք դարձի բերելու համար մեծ զոհողութիւններ ընելու յօժարութիւն կը զդա՞ք: Այս ողորմելիներուն աղէկութեաւ: (1) Դ. աւ. Դ. 42 (2) Դ. աւ. Խ. 39:

նը եւ օգախն համար կը համարձակի՛ք մեծ-
կակ գումար մը ծախելով՝ առաքելութիւն
մը ընել , յորմէ կը հախուի շատերուն յա-
փառենական փրկութիւնը : Բայց առանց
նախանձաւորութեան ի՞նչպէս կ'ուղէք
քարոզ տալ : Ի՞նչ պիտօր ընէք ամպիռնին
վրայ , դուք սառած ըլլալով ի՞նչպէս կըր-
նաք ուրիշները բորբոքել : Գացէ՛ք , գա-
ցէք եռանդ վնասուելու , եւ քիչով ալ գոհ
մի՛ ըլլաք , այլ շատ եռանդ , բորբոքուած
եռանդ , եւ այսուհետեւ ելէք ամպիռնը ,
ան ատենը միայն կրնաք գործ տեսնել :

24. Աշխարհէս միշտ հեռու վախէ՛ք ,
եւ ամենեւին մի՛ երենաք եթէ ոչ ձեր
ընտանեկան խրամներով զանիկայ սուրբ
ընելու համար . զորն որ հեղութեան , եղ-
բայրսիրութեան , եւ անկեղծութեան սի-
րուն առաքինութիւնները շատ աղէկ գի-
տեն պատրաստել : Ասիկայ ժողովրդա-
պետներուն կը վերաբերի , բայց եթէ դուք
միայն քարոզչութեան եւ խոստվանահայ-
րութեան պաշտօնը կը վարէք . եթէ զոր
օրինակ առաքեալ էք , առանձնութիւն-
նիդ երբէք չի թողուք , եթէ ոչ խոստո-
վանարանը մտնելու , եւ կամ ամպիռնը ել-
լելու : Առանձին վարքերնիդ ո՛րչափ ան-
ձանօթ ըլլայ , այնչափ աւելի յարդ ու-
պատիւ կ'ունենաք ժողովրդեան քով , շատ
աղէկ կըսէ առակը թէ , ծառայէ ճը հա-
մար ճէ՛ ճարշ Նէ կայ : Վասն զի ո՛րչափ
երեւելի մարդ ըլլայ , աշխարհք անոր մի-

այն մեծագործութիւնները կը ճանչնայ ,
բայց ծառան անոր տկարութիւններն ալ
դիմէ :

22. Ամէն կերպիւ ջանալու է սուրբ գը-
րոց եւ աստուածաբանութեան հմուտ ըլ-
լալու , անանկ որ բերաննիդ բացածնուուդ
պէս՝ ժողովուրդը հասկընայ որ կեանքեր-
նիդ քարոզի այս երկու գանձատանց մէջ
մաշեր էք , առանց սուրբ գրոց՝ ձեր քա-
րոզները ջիլերէ եւ մկանունքներէ զուրկ
անկինդան կմախսը մը կ'ըլլան : Շառաջ իւն-
դանէ (1) պիտոր չգտնուի անոնց մէջ : Առ-
անց բարոյական եւ տեսական աստուա-
ծաբանութեան խորին հմտութիւն մը ու-
նենալու ո՛չ ճշդութիւն կրնանք ունենալ
եւ ոչ ալ ճշմարտութիւն , երբեմն կրնանք
յանդուզն նախադասութիւններ դուրս
տալ , երբեմն նաեւ ներեւտիկոսական , ո-
րուն ուրիշ բան չի պակսիր , եթէ ոչ յա-
մառութիւն մը :

23. Ասոնցմէ զատ նաեւ հոգեւոր գրր-
քերը ձեռքէ ձգելու չէք , չէք գիտեր թէ
այսպիսի զքերը կարգալով ի՞նչպիսի ան-
գին նիւթեր կրնաք շահիլ գեղեցիկ քա-
րոզներու եւ խրամներու համար : Երբոր
մէկը այն հոգեւոր առածներով դլուխը եւ-
ցուցած կ'ըլլայ , այնպիսի անհաւատավի
գիւրութեամբ կը խօսի , որ ինքն ալ չի
կրնար գիտնալ թէ ուսկի՞ց ժողված ըլլայ
այնչափինքնակամլեզուին ու պոկունքնե-
(1) Սառանդ . Բ. Գ.

բուն վրայ վաղող գեղեցիկ խորհրդածութեանց բազմութիւնը, եւ ուրիշ բարեսպաշտ հեղինակ մը կարդալով, զմեզ շարժող խորհրդածութիւնը հոն ալ կը գրտնենք. զոր օրինակ կրանատա, Աւանիկանիք, Բարիկուէզ, Ալեղեան, եւ ասոնց նման ուրիշ հոգեւոր գրքեր, որոնք մէկ երկու անդամ կարդալով գոհ ըլլալու չէք, այլ շարունակ ձեռքերնիդ գանուելու են, եւ չի մոռնաք կարգաւորեալ տեարակ մը շինելու, որուն մէջ նշանակէք այբբենի կարգաւ՝ ննթերցմանց մէջ հանդիպած աւոր խորհուրդները եւ խորհրդածութիւնները :

24. Մէկը քարոզ տալու հրամանը ընդունածին պէս պէտք է որ պատրաստուի, եւ շատ չուշացնէ այս սուլը պաշտօնին դորձադրութիւնը, ըստ որում եթէ մէկը վախիրու է, փորձը կը սորվեցնէ թէ որ չափ ուշացունէ այնչափ աւելի վրան կը տիրէ վախիկոտութեան ախտը, ֆանի քանի անդամ նոյն անոնք որ քարոզչութեան մէջ կրթուած են, եթէ ատեն մը առանց քարոզ տալու անցունեն առանց ամպիոնը ելլելու, շատ նեղութիւն եւ տադնապ մը կ'զգան ամպիոնը երեւնալու, եւ դժուարաւ կը յաղթեն բոլորովին քարոզչութենէ հրաժարելու փորձութեան :

Ամենեւին քարոզ չի տալու խորհուրդը, մէկ քարոզչութեան ձիրքը ունեցած աւենը, սատանայական փորձութիւն մըն

է, որուն ամենայն քաջութեամբ դէմ զընելու է, երեւակայելով զնիսուս Գրիտոս, որ ականջնիս ի վար կ'ըսէ, ճնացէ՛ + այսունեւու, աշակերտեցէ + շամենայն հենանուններ . . . Ուսուցչէ նոյն . (1)

ԶՅ. Քարոզիչները երեք մեծամեծ փորձութեանց ենթակայ են, ծուլութեան, ամբարտաւանութեան, եւ նախանձու :

Ծուլութիւնը կ'արգելու ստէպ ամպիոնը ելլելու, ուսկից յանախ երեւնալովշատ բարիքներ կրնայ ընել, եւ կամ յանձնապաստանութիւն բերելով, կ'ընէ որ ամպիոնը ելլէ առանց բաւական պատրատութեան :

Ամբարտաւանութիւնը երեւելի եւ համբաւաւոր տեղեր քարոզելու բաղձանքը կ'ազդէ, եւ օգտաւէտ նիւթերը մէկով ձգելով միայն պերճ եւ շքեղ նիւթեր ընտրելու, կը թելազդրէ, իւր ոները յղկելու կը ստիպէ, որպէս զի փայլուն եւ պայծառ երեւութով ունկնդիրներէն գովասանք շահի . Վերջապէս ամբարտաւանութիւնն է, որ կը գրգուէ զքարոզիչը այս աստրածային պաշտօնին միջոցաւ անձնական փառք եւ պատիւ որսպու, եւ քարոզելէն վերջն ալ ասդին անդին կ'առաջնորդէ, ուր ընդունայն գովասանաց որս մը ընել կը յուսայ :

Նախանձը, չար ամբարտաւանութեան անիծեալ ծնունդը, եթէ մտիկ ընող մը ըլլ (1) Մատի. ԽԸ. 19.

լայ, կը համոզէ, զոր օրինակ, ժողովրդակետ մը չթողլու իւր հոդաբարձուներուն որ քարոզ տան. վախճառվ որ մի՛ գուցէ ժողովուրդը ըսէ որ իրմէն աւելի աղէկ քարոզ կուտան: Ուրիշ մըն ալ կըսափէ պարսաւելու իւր եղբայրը. որուն քարոզչութեան համբաւը տարածուելու մկան ըլլայ: Նոյնպէս նախանձն է որ լսելով որ այս ինչ քարոզիչը ունկնդիր չէ ունեցած. կամ այս ինչ պարագայի մէջ ալ պատիկ ինկած է. մեծ հաճոյք մը զդալ կուտայ:

Կ'ուգեմ յուսալ որ քահանայից եւ ոչ մէկը այս վատ զգացմանց գերի եղած ըլլայ. բայց անիկայ, որ այս երեք ախտերուն, եւ կամ անոնցմէ մէկուն ալ տարուած է, ուրիշն քարոզելէն յառաջնախ ութօրեայ կրթութեամբ ինք իրեն քարոզելու կարօտութիւն ունի, եւ ի՞նչ պէս կրնայ յուսալ որ Յիսուս Քրիստոս ուզէ զինքը իրեւ իր ամենամեծ ողորմութեանց գործիք մը եւ միջոց մը գործածել:

26. Ի՞նչ տեսակ քարոզ տալու է: Եթէ ժողովրդապետէք, սովորական քարոզնիդ պէտք է վարդապետական ըլլան: — Վարդապետական քարոզ կամ խրատ կ'ըսուի անիկայ, որն որ միեւնոյն ատեն թէ՝ կըրթական եւ թէ բարդական կ'ըլլայ, որն որ երիտասարդ քարոզիչներու չի յարմարելը, եւ որուն մէջ այջողելու համբար զի-

տութիւն, մտածական եւ հանձարեղութիւն պէտք են:

Այսպիսի խրատներու մէջ յայտնի, ճիշդ եւ կարգաւորեալ խօսքերով զատ զատ մեկնելու է Առաքելական հանդանակին յօդուածները, Աստուծոյ եւ Եկեղեցոյ պատուիրանները, սորոր խորհուրդները, եւ Տեառն մերոյ Յիսուսի Քըրիստոսի, եւ ամենասուերը կուսին վարուց հատածները, գլխաւոր մահու չափ մեղքերը, տէրունական աղօթքը. ահաւասիկ վարդապետական քարոզներու կամ խըրատներու կատարեալ ընթայք մը:

Ժողովրդապետ մը, որ այս կարգը չի բռնել, եւ այս տեսակ խրատներու տեղ՝ իր ժողովրդեան պերճախօսութեանց ստուերազգիեր կը ներկայացունէ, որուն մէջ բարոյականի միայն մէկ կէտ մը մեկնելու յօժարելով. իւր ունկնդիրները Քըրիստոնէական վարդապետութեան ամենակարեւոր կէտերուն մեծ մասէն կատարեալ ծոյլ կը մնան. եւ ինքն ալ իւր ամենասրբազն պարտուց դէմ կը պակսի: Եթէ ժողովուրդը կրթութեան տեղ, զոր մէկը տալու պարտաւոր է, ժողովրդապետին քարոզներուն մէջ ուրիշ բան չի զանէ, եթէ ոչ ամուլ պերճախօսութեան զժուարամարս հատածներ, որով իւրեց ժողովուրդը, տղիտութեան մէջ ընկըրտմած կը թողու. վայ ան ժողովրդապետին, որ այսպիսի տղիտութեան մը

պատճառ ինքն ըլլալը ճանչնալ չուզեր :
 27. Ապա ուրեմն ճառերէ բոլորովին հրաժարելո՞ւ է : Ոչ, ամենեւին, այլ երեմն երբեմն ընելու է, շատ ալ վայելուչ բան է, մեծ հանդիսի օրեր խրատի մը պարզութիւնը այնչափ չի յարմարիր, որ չափ որ ճառի մը շքեղութիւնը . եւ ասիկայ ընտանեկան խօսակցութեանց կամ խրատներու միակերպութիւնը կը վերցունէ, եւ պայմանի օրերը շատ աղէկ կ'ըլլայ օտար քարոզիչ մը հրաւիրել :

Սյափիսի քարոզներ մեծ պահոց ալ կը արմարին, որուն մէջ շատ աւելի օդտակար գտայ քանի մը ժողովրդապետութեանց մէջ ի գործ դրուածը, այսինքն մեղաւորա դարձին համար՝ խրատներու աղօթից իննօրեայ ջերմեանդութիւն մը : Ասիկայ շատ մը դարձերու առիթ կուտայ, եւ ըստ պատշաճի ալ ժողովութեանց աղէկ Զատիկի մ'ընելու կը պատրաստէ :

28. Բայց սքանչելի քարոզներ կ'ուզէ՞ք: Առաքելութեան գացած քահանայ մը կասչեցէք ժողովրդապետութիւններուդ մէջ առաքելութիւն մը ընելու ամենամեծ բարիքը ճարերու համար : Սիրեցեալ եղարք, եթէ ումանց պէս հակակրութիւն մը կ'ըզդաք այս առաքելութեանց դէմ, կ'աղաչեմ որ շուտով եւ ցմիշա մէկդի ձգէք : Լուցեցէ՞ք: Զեղի մօտ եղած եկեղեցոյ մը մէջ առաքելութեան ջերմեռանդութիւնը կատարուած ատեն՝ խոստովանարան մը

աւզեցէք . եւ հոն խոստովանահօր պաշտօնով դիտեցէք, որ երեք օր չի քշեր, եւ նախապաշարումնիդ ամբողջապէս կը փարապի Արբապղծութեան եւ ուրիշ մեղքերու մէջ խստացած մեղաւորները պիտօր տեսնէք որ դարձած կուլան ու կը հառաջն . այնչափ վրէժինդիրներու Եկեղեցին ելած ատեննին՝ թշնամիններուն հաշտութեան ձեռք երկնցունենին . այնչափ անիրաւ յափշտակութեանց հատուցումը տեսնելով պիտօր ըսէք որ մենք առաքելութեան մը ինչ ըլլալը դեռ եւս չէինք գիտեր :

29. Երկինօսութիւններն ալ շատ օդտակար են եւ ժողովուրդն ալ կը համին ներկայ գտնուելու : Ընդհանրապէս խօսելով մեծ քաղաքներու այնչափ յարմար չեն, որչափ որ աւաններու եւ գիւղերու: Այսպիսի երկինօսութեանց մէջ ամէն կերպիւ ջանալու է խոյս տալու կոպիտ խօսուածքներէ: Եւ ծաղրածու կատակներէ . եւ շատ մը առարկութիւններ ընելով խըրատիչ քահանան շվոթելէ :

Ժագովրդապետութեանց մէջ գանուած եղբայրութեանց համար ալ հոգեւոր եւ բարեպաշտական խրատներու ընթացք մը բաւական օգուտ կրնայ բերել հաւատացելոց, ջերմեռանդութիւննին շատցունելով . առաքինութիւնը եւ բարեգործութիւնը աւելի սիրցնելով, ախտն ու մուռութիւնը ատելի ընելով, հաւատքը աւե-

ի ծաղկեցոնկելով, եւ մեղաց չարու-
թիւնը աւելի յայտնելով,

30. Գանք հիմա քարոզը շինելու վը-
րայ : Ի՞նչ նիւթ ընտրելու է : Քարոզնիդ
կատարեալ չեն ըլլար, եթէ հաւատոյ մա-
սունքներու եւ բարոյականը չի պարունա-
կեն : Կատարեալ քարոզներու ընթացքնե-
րը քննեցէք, երեւելի եւ համբաւաւոր
քարոզիչներու հելինակութեամբ պնդեցէք
հաւատոյ մասանց վրայ մանաւանդ անոնց
որոց դէմ անհաւատներն աւելի կը խօսին:
Խմասուն եկեղեցականի մը հետ խորհը-
դակցեցէք, տեսնելու համար թէ արդիւնք
բերած փաստերնիդ զօրաւոր, համոզիչ
եւ կարգաւորեալ են :

Խոկ բարոյականին նկատմամբ թէ եւ
ընդարձակ ասպարէզ մը ունիք . սակայն
ամեն նիւթ ալ հաւասարապէս օգտակար
չի կրնար ըլլալ : Միշտ այնպիսի նիւթեր
ընտրելու է, զորոնք որ խղճով եւ ա-
ռաջի Աստուծոյ, քարոզ տուած ժողո-
վըրդեան աւելի օգտակար կը կարծէք :

Անօգուտ բան է, զոր օրինակ, այն-
պիսի ախտի մը դէմ քարոզ տալ, որն որ
քարոզած աելերնիդ չի գտնուիր : Անդամ
մը եկեղեցւոյ մը մէջ մարդկային նկատ-
ման դէմ զօրաւոր քարոզ մը լսեցի, մին-
չեւ այս ամսին գերի եւ ոչ մէկ անձ մը
կրնար գտնուիլ : Ուստի շըսէք թէ — այս
ի՞նչ գեղեցիկ նիւթ է, շատ աղուոր քա-
րոզ մը կրնամ շինել ասոր վրայ . եւայն :

— մինչդեռ եթէ ընտրած նիւթերնիդ
աղուոր է, ես կրնամ ըսել որ ժողովրդ-
գեան աւելի օգտաւէտ նիւթերկան : Ար-
դեօք զոհարներու մէջ ընտրութիւն ընելու
ստիպուած ըլլալով միթէ աւելի պայծառը
կ'ընտրէիք, եթէ զիտնայիք որ զինը ա-
մենէն աւելի ստորին է :

31. Զօրաւոր փաստերով քարոզեցէք
կրօնից ամենամեծ ծշմարտութիւնները,
մեղքը . դարձը ուշացընելը, հոգւոյ փրկու-
թիւնը, մահը, դատաստանը, դժոխքը,
արքայութիւնը, քաւարանը, Աստուծոյ
ողորմութիւնը, արդարութիւնը . եւայն:
Տեսակ մը նորելուկ քարոզիչներու պէս
մի վարուիք, որոնք դժոխքին կրակները
մարած չեն կարծեր ալ նէ, այսու ամենայ-
նիւ այս աւուր օրս ալ անոնց վրայ խօսիլը
պատշաճ չեն սեպեր, իբրեւ թէ Ցիսուսի
Քրիստոսի աւետարանը եւ անոր խստու-
թիւնը պէտքը չէր որ իննեւտասմներորդ
դարուն մէջ քարոզուէր : Ուրեմն ամենայն
համարձակութեամբ եւ առաքելական ոճով
քարոզեցէք այս երեւելի ծշմարտութիւն-
ները . բայց նայեցէք որ չափը չանցնիք,
ճիշդ եղիք չափազանց ճիշդ : Հիմակուան
ըսած ծշմարտութիւններս առանց ճեր ե-
րեւակայական յաւելուածներուն, արդէն
ինքիրենցմէ բաւական ահարկու են :

32. Քարոզը գրելը աւելի աղէ՞կ է թէ
ոչ : Այո՛, եւ ոչ : Ասիկայ պարագաներէն
կախում ունի :

Երիտասարդ էք, զրեցէք, եւ առանց վայրկեան մըն ալ տարակուսելու զրեցէք։ Հաւատացէ՛ք ինձ, սիրելի եղբարք, բառեկամ մըն է որ ձեզի այս խորհուրդը կուտայ։ Դուք նիւթէն աւելի երեւակայութիւն ունիք, այսինքն դեռ եւս մթերասոցներդ լեցուն չէ։ Դուք ուրիշ բան մը չունիք, եթէ ոչ բնական գիւրութիւն, տրամադրութիւն, եւ երեւակայութիւն մը նթէ յառաջ երթալով, երեւակայութիւննիդ իր վառվունութիւնը կորսընցընելու ատեն, ձեր քարոզչութեան սկիզբը դրած ըլլաք, յետոյ մեծ խեղճութեան մէջ կ'ինաք։

Բայց, (ըսածս մտիկ ըրէք,) եթէ երկար ատենէ ՚ի վեր քարոզչութեան պաշտօնը կը վարէք, եթէ խորին ուսմունք մը ըրած էք սուրբ գրոց, Աստուածաբանութեան, հոգեւոր գրոց, երեւելի քարոզիչներու, եթէ փորձով սովորութիւն կամ վարժութիւն մը ստացած էք, եթէ դադավարնիդ աղէկ մը մարսեր, երեւակայութիւննիդ սանձեր, աշխարհքը՝ առանց մէջ մտնելու, եւ մարդկային սիրար՝ առանց անող տկարութեանցը ենթարկուելու, կարդացեր էք։ Եթէ վերջապէս այս ամէնքէն դուրս նշանաւոր բարեպաշտութիւն մը, եւ խօսելու ալ մեծ դիւրութիւն մը ունիք, կ'ըսնեմ որ չէ թէ գրելը բոլորովին թողուք։ այլ միայն ճառերու կմախքով քարոզալու կրնաք դոհ ըլլալ, Աղէկ որոշուած

յատակագիծ մը շինեցէ՛ք մտքերուդ մէջ գլխաւոր խորհրդածութիւնները ամէնքը իրենց տեղը զետեղելով։ Քարոզնիդ համարձակութեամբ սկսելու համար՝ աղէկ կ'ըլլայ որ յառաջաբանը գրի առնուք, եւ ունկնդիրներուդ վրայ զօրաւոր ազգեցութիւն մը ընելու, եւ անոնց ուշադրութիւնը բոլորովին զրաւելու համար, դարձեալ շատ աղէկ կ'ըլլայ որ բոլոր վերջաբանն ալ գրէք։ Կարծեմ որ նոյնը ընելու էք նաեւ քարոզներուդ մէջ զետեղելիք կարեւոր վկայութիւններու նկատմամբ, որոնցմով կը յուսաք արտաքոյ կարդի աղջեցութիւն մը ընելու։ Բայց միշտ այնպէս կարգաւորելու էք, որ քարոզի փաստաբանութեան ատեն եռանդով բորբոքուած, եւ միայն երեւակայութեամբ կառավարուած ատեննիդ կարող ըլլաք զուրցել առանց շփոթելու միտքերնիդ ինկած՝ գրածներէդ աւելի աղուոր բաներն ալ։

33. Եթէ յանպատրաստից խօսելու ձիրքը չունիք, կամ եթէ շատ քիչ ունիք, զրեցէ՛ք քարոզնիդ, ապա թէ ոչ ունկընդիրներուդ անտանելի կ'ըլլաք, մանաւանդինչ ինչ օրեր, Վասն վի ըսածնիդ հասարակ բաներ պիտոր ըլլան, եւ անոնք ալ մեծ զժուարութիւն զդալով պիտոր զուրցէք։ Բաւական չէ։ ըսածնիդ երթալով պիտի տկարանայ, եւ միշտ մի եւ նոյն բաները կրկնելու պիտոր սահպուիք։ Արդ

ունկնդիրներուն համար մեծ պատիժ մըն
է այս յանպատճառատից քարոզ տուողնե-
րուն սովորական ախտը :

Իւրաքանչիւր ոք, ինչ որ ալ ըլլայ իւր
իւելքին եւ մտաց աստիճանը, իրեն սեպ-
հական գաղափարներու կարդ մը ունի,
ուսկից որ երբէք չի հեռանար, եւ քա-
րոզին նիւթը ինչ ալ ըլլայ, ինքը միշտ
իւր վարժութեան մէջ կիյնայ, Ունկնդիր-
ները չափէն աւելի կը զզուին, եւ շատ
անգամ զարմանալին այն է որ, ունկնդրաց
մէջ ամենատպէտներն ալ վերահասու ըլ-
լալով այս անվերջանալի կրկնումներուն,
կը պարսաւեն զայն :

34. Քարոզին ըսուածքը ի՞նչ տեսակ ըլ-
լալու է : Խի՞ստ թէ քաղցր, զրգոիչ թէ
անուշ եւ սրտաշարժ Յայտնի բան է որ
ասիկայ թէ եւ նիւթին բնութենէն կա-
խում ունի . սակայն այսու ամենայնիւ
իւրաքանչիւր ոք տեսակ մը ախորժակ ու-
նի, եւ ամեն քարոզներու մէջ իւր բնա-
ւորութիւնը յայտնի կ'ընէ : Քաղցրաբարոյ
մարդ մը չի կրնար խիստ քարոզ տալ, եւ
խստակեացն ալ անուշ խօսք մը չի կրնար
բաել : Ամեն մարդ իւր բնաւորութեանը
ճետեւելու է, ինքը զինքը ցոյց տալու է.
այսինքն բնական կերպով վարուելու է :

Խստաբարոյ քարոզիչը՝ անուշութիւն
ցոյց տալու ատենը կը շիռմի, եւ իր սիր-
ար շարժած չըլլալով չի կրնար երբէք ու-
րիշին սիրտը շարժել : Խսկ ընդհակառակն

քաղցրաբարոյ քարոզիչն ալ սոսկում եւ
զարհուրանիք պատճառեմ ըսելու ատեն,
գուցէ ժողովրդեան միայն ծալլը շարժէ,
ոչ ոք կրնայ համոզուիլ իւր կրթի ելլե-
լուն վրայ : Ուստի կը կրկնեմ իւրաքան-
չիւր ոք իւր բնաւորութեան աղեցցու-
թեանը հետեւի :

Այսու ամենայնիւ կարծեմ որ չափա-
զանց խիստերը շատ աղէկ կ'ընեն, եթէ
ըսուրովին անուշ չէ, գոնէ երբեմն սիրոյ
եւ համակրութեան նշաններ ցոյց տան ի-
րենց ունկնդիրներուն, որոնք իրմէ այս-
պիսի մարդասիրութեան ցոյցեր տեսնելու
վարժած չըլլալով, չեն կրնար չի շար-
ժիլ, եւ երախտագիտ չըլլալ :

Խսկ խաղաղասէրք ալ երբեմն մէկոր
թուլու են իրենց չափազանց քաղցրու-
թիւնը . եւ գործնեայ եւ բան եղանակ
մը գործածելու են, քարոզին նիւթը այն-
պէս պահանջած ատենը, ոճախողիրք վին-
քը վերջին աստիճանի անուշ տեսնելու
վարժած ըլլալով . այսակէս սիրով կար-
ծեն որ քարոզած ձամարտութիւնները վեր-
ջին աստիճանի կարեւ սուրութիւն մը ունե-
նալէն զատ, զարհուրելի ալ պէտք է ըլ-
լան, որ առանց քաղցրութենէն եւ չա-
փաւորութենէն հեռանալու չը կարենան
զուրցուիլ :

35. Սովորաբար կ'ըսուի որ այս ինչ քա-
րոզիչը խորին է, միւսը վեր ի վերոյ բան
մը, ուրիշ մը ամենեւին նիւթ չունի .

ուաքելական քարողիչները սովորաբար ա-
ւելի սաստկութիւն ունին քան թէ խո-
րին հմտութիւն . եւ այլն. եւ այլն. ըստծ
մեկնեմ :

Ըստ իմ կարծեցս երեք տարբեր տե-
սակ քարողիչներ կան , որոնք աւետա-
րանական ճշմարտութիւնները տարբեր ե-
ղանակաւ կը ճառեն . տարբեր կերպով
խորհրդածենուն համար :

Առաջները խորունի կերպով կը մոտա-
ծեն այս ճշմարտութիւնները . աղէկ ու-
սում մը կ'ընեն անոնց վրայ . եւ վարդա-
պետօրէն կը մեկնեն , գրեթէ փիլիսոփայ
-աստուածաբան-քրիստոնէական կերպով :

Երկրորդները այս ճշմարտութիւնները
վեմ աստուածաբանութեան լուսով չեն
ընենք , բայց ըստ բաւականի բացայաց
կերպով կը ներկայացնեն ժողովրդեան
քրիստոնէութեան՝ աստուածաբանական եւ
բարոյական վարդապետութիւնը , եւ զա-
նոնք ընդունելու եռանդեամբ կը քաջա-
լերեն :

Կ'երջապէս երրորդները չեն ճառեր ,
այլ հարեւանցի մը կը դպչին , եւ ցոյց
տուածներուն պէս մնոտի ճոռոմաբանու-
թեամբ ժողովարդը կ'ապշեցնեն , կամ
աղուոր եւ սիրուն պատկերներու սրան
մը կը ներկայացնեն երեւակացութեան
եւ կամ մէկ խօսքով երկայն եւ տիրա-
զին ճառերով կ'աշխատին սրտերը շար-
ժելու :

Ի՞նչ ըսելու է այս երեք աեսակներուն
վրայ :

Ըստ իմ կարծեցս , ընդհանրապէս խօ-
սելով առաջինը ժողովրդեան յարմար չէ ,
այլ մանաւանդ չէ թէ կանանցմէ ըն-
տրուած . այլ խորին ուսմունք ըրած եւ հա-
սարակէ վեր հանձնարով զարգացած մարդո-
կանցմէ կազմուած ընտիր ունկընդրու-
թեան մը կը յարմարի . եւ այսպիսի ուն-
կընդիրներու ալ խօսելով , պատշաճ է եր-
բեմն վարդապետութեան ցամաք եւ ատ-
ոապելի անսութիւնները մէկդի ձգելով ,
ունկընդիրները այն սուրբ լեռը հանել ,
ուր Յիսուս Քրիստոս աստուածային պար-
զութեամբ կը մեկնէր ամենաբարձր ճշշ-
մարտութիւններն ալ : Առաջին աեսակը
այս կերպի վերածելով կրնայ Աստուծոյ
կառուց եւ հոգեց վրկութեան օգտակար
ՇԱԱԼ : Սակայն խումբերու սիրով շարժե-
լու անկարող կը մնայ , ըստ որում սովո-
րաբար վարդապետութենէ ընկճուած կ'ըլ-
լան :

Երկրորդ աեսակը բոլորովին ժողովը-
դական է , աղէկ է , մանաւանդ թէ ա-
մենալաւ է , մասնաւորապէս եթէ առա-
ջին աեսակին ճշութեանը եւ կարգին
հետ միատեղ երրորդին վառվունութիւնը
բանաստեղծութիւնը եւ իդձը ունենայ :
Այս աեսակն է որ իրաւամբ ի գործ կը
դնեն քարոզիչները , այս աեսակ ճարտա-
րախօսութեամբ է որ ամբողջ ժողովուրդ-

ներ կը համոզեն, կը չարժեն եւ կը դարձու-
նեն, նոյն այս թեթեւ մը չափաւորուած,
եւ քիչ մը պարզած եւ ընտանեցած տեսակն
է, որ քարողներու եւ ժողովրդավետա-
կան խրատներու կը պատշաճի :

Երրորդը ո՞չ հաստատութիւն մը ունի,
եւ ոչ ալ օգուտ մը . քիչ մը եղանակի
պերծութիւն, լիզուած ոներ, եւ պտուղ-
ներու պակասութիւնն ալ լեցունող ա-
ռատ ծաղկներ :

36. Թէ եւ խիստ ընաւորութեան տէր
ալ ըլլաք, այսու ամենային դգուշանա-
լու էք դառն եւ կծու յանդիմանութիւն-
ներով. եւ մանաւանդ թշնամական անձ-
նաւորութեամբ չի վշտացունելու յուն-
կընդիրները : Քանի քանի անդամ եկեղե-
ցեաց կամարները այսպիսի ատելի անձ-
նաւորութեանց արձագանքը հնչեցին, որ
զժողովուրդը կը զայթակղեցունեն, եւ
ժողովրդապետին դէմ անհաշտելի թշնա-
մութիւններ կը հանեն :

Աստուծոյ սիրոյն համար, հեռու կեցէք
եւ բացարձակապէս մերժեցէք ձեզմէ թէ
ուզզակի եւ թէ անուզզակի անձնակա-
նութիւնները. խղճահարութեամբ այս կա-
նոնը բռնեցէք իբրեւ թէ մասնաւոր ուխտ
մը ըլլայիք, եւ եթէ եկեղեցւոյ մէջ
աչքերուդ առջին պատահած անկարգու-
թիւն մըն ալ ուզզելու ստիպուիք հոգ տա-
րէք անուշութեամբ ընելու, զունկնդիր-
ները չի վշտացնելու համար :

37. Որո՞նք են ոճին գլխաւոր յատկու-
թիւնները :

Ոճը պէտք է որ պարզ ըլլայ եւ բա-
ցայայտ՝ այնպէս, որ ունկնդիրք դիւրու-
թեամբ հասկրնան : Քարոզ մը շմբելու
ատեն (կըսէ չայրն լը ծէօն) մտածեցէք
թէ արհեստաւոր մը կամ արհեստաւորու-
նի մը ի՞նչ պտուղ կրնայ քաղել ձեր քա-
րոզէն : Մեծ սխալ մըն է ունկնդիրնե-
րուն մէջ քսան, երեսուն հատ բանիբուն
անձննք գոն ընելու համար ամբողջ ժո-
ղովրդեան մը ծոմ պահել տալ : Հաւա-
տացէք, որ մեծամեծ եւ գիտնական մար-
դիկ չափէն աւելի գոն կ'ըլլան այն քարո-
զիչը մտիկ ընելով, որն որ եռանգուլ լե-
ցուն ժողովուրդ մը կը կրթէ եւ կը շար-
ժէ, թէեւ պարզ եւ ժողովրդական քա-
րոզով մը :

Ոճը պէտք է որ զարդարուն ըլլայ, բայց
այնպէս, որ զարդարանքը պարզութեան
վմաս մը չտայ, բայց եթէ չը կարենայ
զարդարուիլ առանց մթին ըլլալու . եւ
կամ եթէ չը կարենայ բացայայտ ըլլալ
առանց մէկդի ձգելու ամեն զարդարանք
առանց վայրկեան մը տարակուուելու, ա-
մեն զարդարանքը զոհելու է պարզութեան,
ինչպէս որ ըրաւ սուրբ Օդոստինոս, որն
որ օտար բառ մը գործածեց բռւն բառէն
խոյս տալու համար, որն որ չէր կրնար
գործածել առանց երկդիմի ըլլալու :

Ոճը պէտք է որ բնական ըլլայ, առանց

շինծու արհեստի, կամ պաճուճանաց : Պէտք է որ կարճառօս ըլլայ՝ ըսել ինչ որ պէտք է միտքը կատարեալ կերպով հասկըցնելու համար : Չափէն աւելի համառօտութիւնն ալ կը լինասէ բացայայտութեան, եւ ո՞ւ ցամաք կը ծգէ, որ անախորժ կուգայ՝ Խոկ ընդհակառակն բուն իմաստը մեկնելու համար ալ գործածուած երկարութիւնն ալ կը յոդնեցունէ, եւ կը ձանձրացնէ միջին համբան բռնեցէք, եւ ասիկայ հաստատուն կանոն մը ըրէք ձեզի :

38. Բանաստեղծութեան վրայօք ի՞նչ ըսելու է :

Նախ կրսեմ, որ շատերը այս նիւթին վրայ՝ շատ շփոթ գաղափար մը ունին . տեսակ մը զղուելիք բանսատեղծութիւն կայ, որն որ բարեբախտաբար երես ելելու չի համարձակիր, եւ կը կայանայ բառերուն Ֆիշդ միտքը արհեստով մը այնպէս փոխելուն մէջ, հաղար փափուկ գոյներով զանոնք ներկելով, եւ այնչափ պահուածանօք զանոնք յարդարելով այնպիսի փաղաքշանքներով զանոնք զարդարելով, եւ այնչափ լուսով պատելով, որ ունկնդիրներուն աչքերը կը լիացունէ, ոմանք կը ծիծաղին, մինչդեռ միւսները կուլան, եւ ժողովրդեան մեծ մասը գլուխնին շարժելով, եւ ուսերը վեր ու վար ճգելով, կը համեցունէ, որ չի գիտեր թէ ամպինչն իրենց ի՞նչ լեզուով կը խօսուի : Այս տեսակ բանսատեղծութեան վրայ չէ խօսքը.

ասիկայ դատուեցաւ եւ մեռաւ . եւ կը յուսամ որ երբէք ալ յարութիւն չառնուք : Ուսափ ո՞րն է այն բանաստեղծութիւնը, որ քարոզներուն գեղեցկութիւն մը տալով : Եւ ունկնդրաց ալ ախորժելի ըլլալով մեծ օգնութ կ'ընէ :

Քարոզի մէջ գործածուելիք բանսատեղծութիւնը պէտք է որ բացայաց ըլլայ, խօսքերը ընդունայն զարդարանքներով բեռնաւորուած չեն, այլ բնական դիրքի մէջ զանոնք կը ներկայացունէ, եւ ըսածը կ'ուզէ գունաւորել, եւ այս նպաստակաւիրեն համար շատ աղէկ կուզան սովորական նմանութիւններ, անսովոր ենթադրութիւններ եւ խօսքեր . որոնք գուցէ ամպիոններու մէջ երբէք արտաքերուած չըլլան, միայն թէ բաւական ըլլան կը մտածմունքը յլացածին պէս ներկայացունելու : Վառվուոն ու զօրաւոր է, չծաշափման մէջ թափանցող, մեկնութեան մէջ նախատիպ, նկարագրութեանց մէջ ծաղրալից, եւ վերջապէս այս կարգէ գուրս խօսակցութեան ատեն ունկնդիրները այլ եւայլ զգածմունքներով գրաւուած կը ըլլան, որ նշանացի մէկդմէկու կը հարցունեն թէ ի՞նչ տեսակ խօսակցութեան կերպ է, աղէ՞կ է թէ վատ, զոլութեան թէ պարսաւանաց արժանի, Բայց քարոզիչը բոլորովին անհոգ ունկնդրաց դատաքննութեան վրայ՝ իր ընթացքը կը շարունակէ, արագ, վատան, եւ համարձակ . եթէ անդունդի

մըն ալ հանդիպելու ըլլայ ուրախ է որ
գծուարութեան մը յաղթելու առիթը ու-
նենալու համար յարձակմամբ իր նպատա-
կին կը դիմէ զոյդ ոտքով անդունդին վը-
րայէն կը թոչի :

Արդ՝ այս տեսակ բանաստեղծութիւնը
միւսէն տարբեր չէ։ Այս բանաստեղծու-
թեան սկիզբը Վիկտոր Հիւկոյին պար-
տական է, որն որ շատ մը հետեւողներ
ունի ինչուան նաեւ քարոզիչներու մէջ
ալ։ Ես կը կարծեմ որ, այս բանաստեղ-
ծութիւնը կրնայ յարմարիլ քարոզներու,
մանաւանդ թէ գրաւորական ընտրու-
թեամբ մետաղին զուտը անպիտանէն ջո-
կելով՝ կրնայ օգտակար ըլլալ քարոզնե-
րու :

Բայց խորշելու է այն երկար բանաս-
տեղծութիւններէ, որոնք քանի մը երես
կը գրաւեն, մինչդեռ երկու խօսքով կըր-
նան միտքերնին բացայացել, որն որ
միշտ աւելի գովկելին է։ Ուստի մեր օրե-
րը գործածուած բանաստեղծութեան մէջ
օգտակարն ալ կայ, միայն թէ ընտրողու-
թեան կարօտ է, գործը ժամանակին յանձ-
նուած է, անոր համար չշտապինք եւ
ծաղրելիութենէ զգուշանանք :

39. Դառնանք մենք մեր աղդարարու-
թեանց։ Երբ կ'ուզէք քարող մը չինել,
նախ քննելու էք թէ կարողութիւն ու-
նի՞ք, եթէ գրելու հակակրութիւն մը
կ'զգաք, եթէ այնպիսի նիւթական հի-

ւանդութիւն մը ունիք, որ խելքերնիդ
կամ բարյականներուդ վրայ ալ ազդէ,
եթէ զրիչը մատուցներուդ մէջը երկար
ատեն կը պտըացնանէք առանց միտքերուդ
մէջ մտածմունք մը, գաղափար մը գա-
լու, եւ եթէ գաղափար մըն ալ ունիք։
բայց զայն աղէկ մը արտայայտելու կեր-
պը չէք գաներ, հաւատացէք, շատ աղէկ
է որ գործքերնիդ քիչ մը ատեն կախ թո-
ղուք։ Կտոր մը բան գրելու համար շատ
ժամանակ պիտոր կորսնցունէք, գուցէ
մտքերնիդ ցնորած ըլլայ. գուցէ նախա-
պաշարմունքէ մը տափնապած ըլլայ, գու-
ցէ մոռցած ըլլաք չերմեռանդ աղօթք մը
ընելու, Աստուծմէ լոյս եւ աշխատու-
թիւններուդ վրայ ալ անոր օրնուութիւն-
ները ընդունելու համար, որն որ ամենա-
կարեւոր բան մըն է, եւ զանց ընկելու չի
գար։ Եթէ այս վայրկենական անկարո-
ղութիւննիդ հոս վերը յիշուած պատճառ-
ներուն մէկէն յառաջ եկած է, հոգ տա-
րէք երեւակայութիւննիդ արթընցնելու
պերճաբանութեան հատածներ կարդալով
որն որ կարող ըլլայ սրտերնիդ շարժելու,
Ուկերերանի, Պօսուէի, Սէնիէրի գը-
րուածքներէն թերթ մը երկուք կարդա-
լը երբեմն, շատ աղէկ հետեւութիւն ու-
նեցաւ :

40. Բայց վաղուան օրը տեսարանը բո-
լորովին փոխուած կրնայ ըլլալ, եւ այս
աւուր ցուրտին ու սառոցներու բորբո-

քուած կրակ մը յաջորդէ , որ կը պաշարէ , կը բորբոքէ , եւ սրտերնիդ կը վառէ , դուք անմիջապէս գրիչը ձեռք կ'առնուք . . . կամաց . . . գրիչը ձեռք յառած աղօթքի գիմեցէք , եւ միշտ աղօթքի , եւ կը տեսնէք որ գրիչներդ շատ աւելի արձակ կը յառաջանայ . եւ աւելի ճարտարախօս կ'ըլլայ :

Հիմայ սկսէք դրելու , բայց նախ բընագիր մը վնառեցէք որովհետեւ ըստ իմ կարծեաց բնագրէ հրաժարելու չէ , թէ եւ ուսանք զայն հնութիւն մը կը կարծեն , եւ ինչու համար մենք գրուածքնիս վերսագրով մը զարդարելու չենք . ինչպէս որ կ'ընեն , ու կը զարդարեն աշխարհայնք իրենց գրուածոց ճակաար : Հոգ տարեք , որ բնարուած բնագիրը ճառել ու զած նիւթերնիդ նշանակէ , մանաւանդ ջանացէք որ նիւթերնիդ անկէց յառաջ դայ՝ ինչպէս որ բոլողը սերմէն կը ծընափ :

Տէկդի ձգեցէք երկայն յառաջաբանները , ունկընդիրք յառաջաբանին ատեն ըստածներուդ մտադրութիւն չեն տար , ուրիշ բան չեն ըներ , եթէ ոչ լոկլու պատրաստուիլ . ու հանգիստ դիրք մը բռնել , մերթ աջ , եւ մերթ ձախ նայուածք մը տալով , վերջապէս աթոռին կամ բազմոցին վրայ կը տեղաւորին , քանի մը անդամ հագալով հազիւ թէ կը պատրաստուին մտիկ ընելու ինչ որ քարովիչը պի-

տի ըսէ յառաջաբանը լմնալէն վերջը : ինչո՞ւ ուրեմն երկարցունել քարողին մէկ մասը , որ շատ քիչ արդիւնք մը կ'ընայ ունենալ՝ ինչո՞ւ համար այնչափ ճապաղիլ , որ ունկնդիրները քարովին առաջին մասը կարծելով համբերութիւննին հատնի , եւ ձանձրանան հասկնալով , որ դեռ յառաջաբանն է , զորն որ շատոնց լմնցած կը կարծէն , կարելի եղածին չափ շուտով առաջարկեցէք որոշած կէտերնիդ՝ առանց երկար ատեն ունկնդիրներուն միտքը վարանման մէջ թողլու՝ թէ արդեօք քարոզը ի՞նչ նիւթի վրայ պիտոր տրուի , մինչեւ որ բաժանման կէտերը չը յիշուին :

Ա. Բաժանման գալով , ընել պէ՞տք է թէ ոչ : — Այո՛ : Աղէ՞կ է շատ ընել : — Ո՛չ : Անել լաբիւրինթոսներու մէջ մի՛կորսըւիք . ուր որ ունկնդիրներդ ետեւներէդ չեն կրնար գալ , ի՞նչ օգուտ ունի այս չափ բաժանմանց , եւ կրկին բաժանմանց ժանուցումը , որն որ քարովներուդ ցեղագրական ծառի մը կերպարանքը կուտայ , որու վրայ մինչեւ հինգ տասը եւ գուցէ քսան աստիճան կը համրուի : Երկու կամ շատ շատ երեք հաստատուն եւ նիւթալից խորհրդածութիւններ իմացուցէք եւ առաջարկեցէք , յետոյ մէկիկ մէկիկ զանոնք մեկնելով կարգաւ յառաջ գացէք : Այսպէս ամէն բան կարգի կը մըտնէ , եւ ունկնդիրներդ ալ գոհ կ'ըլլան :

Խսկ վերջաբանին գալով զգուշացէ՛ք ,

մանաւանդ յանկարծախօսութեանց մէջ ,
ութը տասը հատ մէկզմէկու չի կարկը-
տելու կը լւշնշնէ ըսեներէդ վերջը քսան
վայրկեան մըն ալ մի շարունակէք , ուն-
կընդիրները ասկից աւելի յոդնեցունող
բան չի կայ , եթէ ոչ այնպիսի վախճանի
մը ծանուցումը , որ երբէք չի համիր :
Հոգ տարէք , որ վերջաբանութիւննիդ
ազդու ըլլայ՝ վառվուն եւ խորին ազդե-
ցութիւն մը ընէ :

42. Գանք հիմայ քարոզ տալու առթիւ-
ունենալիք վարմանց վրայ՝ որուն նկատ-
մամբ այնչափ բաներ ունէի ըսելիք , եթէ
համառօտութեան սահմանս ներելու ըլլար:
Ամպինը երթալու համար՝ ամենելին չա-
ճապարէք . հոգ տարէք որ վերջին աս-
տիճան ամփոփ ըլլաք , պարկեշտ , ներմե-
ռանդ՝ եթէ կարելի ըլլար հրեշտակային
եռանդեամբ , երկրպագութիւն մը ընելով
Սրբութիւն սրբոցին , սրտերնիդ Յիսուսի
սրտին մէջ զրէք իբրեւ աւանդ մը սրտե-
րուդ հետ միացունելով բոլոր ունկնդիր-
ներուն սրտերը . ժողովրդեան մէջէն ան-
ցէք առանց մէկուն նայելու . ծանրու-
թեամբ մը մօտեցէք ամպինըն , եւ կրկին
ամփոփած աղօթքի զբաղեցէք :

Կատարեալ խաղաղութիւնը տիրելուն
պէս սկսէք . բայց ի՞նչպէս : Պոկունքնե-
րուդ շարժիւլը կը տեսնեմ , բայց կը խօսիք
թէ ո՞չ . — կը ի՞սկէ : Բայց մննք բան մը
չենք իմանար . մի գուցէ կանոն մը ըլ-

լայ որ յառաջաբանին ամենեւին վանկ մը
չը լսուի : Այսպէս պէտք է ըսել , երբ կը
տեսնուի որ՝ քարոզիչը մասնաւորապէս
ձայնը անանիկ կը ցածցունէ որ բան մը չի-
մացուի , եւ ոչ ամպինին քովը գտնուող-
ներէն . աւելի զարմանալին այն է , որ եր-
րեմն այսպէս կամաց խօսող քարոզիչը ,
մէյ մըն ալ յանկարծ կ'սկսի կայծակինման
որոտալու , զգուշանանք այսպիսի պակա-
սութենէ մը , որն որ բնական չէ :

43. Գարող շինելու վրայօք խօսած ա-
տեն ըսածն հիմայ նորէն կրկնեմ . բնական
վարմունք մը ունեցէք , աղէկ արտաքե-
րեցէք ամեն բառ , մանաւանդ վերջին
վանկերը , ամէն մէկ արտաքերութեան ի-
րեն պահանջած ուժը տալով . համարձակ
խօսեցէք , բայց առանց յանդգնութեան
եւ ժպրհութեան , ձեռքի շարժմանց վրայ
մի՛ մտածէք , բայց ծաղրելի շարժմունք-
ներէ ալ զգուշացէք , բնական եւ պատշաճ
ըլլան , ինչպէս նաև կեցուածքնիդ ալ
բնական ըլլայ եւ ոչ թէ բռնի , նայուածք-
նիդ ունկնդիրներուն ամբողջին վրայ դառ-
նայ . եւ ոչ թէ մասնաւոր անձանց ; ամ-
պինին եղերքին մի՛ կրթընիք :

Ահաւասիկ քարոզութեան վերաբերեալ
գլխաւոր կանոնները . բայց այնչափի ան-
գամ այս կանոններուն դէմ կը պակսին .
որ հարկաւոր կը սեպեմ հոս գլխաւոր թե-
րութիւնները յեշելու :

44. Նախ եւ առաջ մենաձայնութենէ

զգուշացէք, ուսկից աւելի ձանձրացու ցիշ բան չիկայ: Ոմանք իրենց քարողները գրեթէ միակերպ շարժմունքով եւ մի եւ նոյն ձայնով կ'սկսին եւ կը լինան, առանց պղտիկ փոփոխութիւն մըն ալ ընելու. գրեթէ վանատուններու եւ դպրոցներու սեղանատանց ընթերցման նման:

Ոմանք ալ երկու երեք ձայնի շարժում հազվու ունին, բայց ըստ որում շարունակ մի եւ նոյն են, եւ հաւասար ընդհատութեամբ կը կրկնուին, ասոնք ալ տեսակ մը մենաձայնութիւն կը կազմեն, որ չուզողին ալ քունը կը բերէ: Ինչպէս չեն հասկնար, որ բնութեան աւելի հակառակ բան մը չի կրնար ըլլալ՝ եթէ ոչ երեք քառորդի չափ մի եւ նոյն ձայնով խօսիլ, երկու երեք անփոփոխ հնչիւններով.

Այսպիսի քարոզիչներու կարգը ենթադրենք այնպիսին, որ բարեկամին մէկուն հետ նիւթի մը վրայ վիճելով շատ մը զուարթութեամբ եւ վերջին աստիճանի բնական կերպով կը խօսի, խօսակցութեան վրայ կը տիրէ: Վէճին նիւթը կը պարզէ: իւր կարծիքը կը յայանէ: զօրաւոր եւ համոզիչ փաստերով կը հաստատէ, ազդուութեամբ եւ ճշտութեամբ կը բացայացէ: եւ յետ այնորիկ հակառակորդին առարկութիւնները կը հերքէ: եւ այս ամէն բան ձայնի բնականութեամբ եւ տարրերութեամբ: անանկ ալ բռնկած է որ կարծէք թէ քանի մը վայրկենէն ամ-

ալիքնն ելլելիքը մոռցերէ: կը ծանուցանին. կը թողու զբարեկամը, եկեղեցին կ'երթայ, ամպիտոնը կ'ելլէ, ձայնին բնականութիւնը կը կոսընցունէ, մենաձայնութիւնը կըսկսի: Այս ի՞նչպէս կրնայ ըլլալ:

45. Ուրիշները տկար եւ թոյլ կերպ մը ունին քարոզութեան, ձայներուն հնչման բարձր աղերսարկու տկար եւ ողբալի եղանակ մը կուտան, որուն որ բոլորովին հակառակ է բնութեան: Եկեղեցիներուն եւ տուներուն գռները մուրացիկ աղքատներու ողբիչ ձայներուն կը նմանի: Անմաց պէս աչքերը երկինք սեւեռած կամ գըլմըները միակերպ մէկ ուսերուն վրայ կըթընցուցած, այս կերպով ալ կ'ըսեն իրենց ամբողջ ճառը:

46. Խակ ունանք ալ չափազանց եռանդեամբ լեցուն, որոնք կը կարծեն թէ ճառերնին ճառ չըլլար, եթէ միկրուն մինչեւ վերջը չի պոտանու անանկ որ քարոզէն վերջը ձայներնին կը մարի: ունինդիրները խլացած են: իւրաքանչիւր ոք կարեկից կ'ըլլայ քարոզչին, կարծելով որ շատ աշխատած ըլլայ, բայց ոչ ոք անոր ըսածէն օգուտ քաղելու կը մատծէ: Երեւեալի բժիշկ մը, որ մը այս տեսակ քարոզչի մը հանդիպելով, ըստ որ քարոզի ատեկն քարոզէն աւելի իր միտքը զբաղած էք այն փորձութեանց վրայ: որոնց կընար ենթարկութէ քարոզիչը: Ահ, միթէ ա՞յս տես-

սակ խօսելով սրտերը կը շահուին , մա-
նաւանդ թէ աւելի հեռացունելու եւ պա-
ղեցնելու յարմար միջոց մը չէ՝ արգեօք :

47. Նատերն ալ ձայներու բարձրութե-
նէն զատ՝ բոլոր մարմիննին եւ անդամ-
նին ալ մշտատեւ շարժման մէջ կը պա-
հեն , զիրենք տեսնելով կարծես թէ կալ-
վանացած ըլլան , ոտքերով ամպիոնին
յատակը , եւ ձեռքերով ալ եզերքը կը
ծեծեն , մարմիննին կը ծոփի կը շտկի
դարձեալ շուտով ծուելու համար , կար-
ծես թէ ունկնդրաց հետ կ'ըմբշամարտին
ի՞նչպիսի թշուառութիւն : Ալրեցեալք ,
Յիսուս Քրիստոս արգեօք այս տեսակ կը
խօսէր :

48. Բայց տեսակ մը անձինք ալ ոչ
այնչափ կը պոռան եւ ոչ ալ կը շարժին ,
այլ այն աստիճան արագութեամբ կը քա-
ռողեն , որ մարդ չի կրնար ըստանին ըմ-
բռունել , երբեմն ալ սաստիկ շտապենուն
համար բառերը գէշ կը հնչեն , եւ իրենք
ալ վերահասու եղած ատեննին դարձեալ
շուտով կը կրկնեն զայն , որ զունկնդիր-
ները կը յոդնեցունէ :

Ինչո՞ւ համար այսչափ շտապում . ասի-
կայ այն աշակերտաց նմանիլ մըն է , որոնք
կրցածնուն չափ կը կրկնեն սորված դա-
սերնին . այս տեսակ արուած քարող մը
ի՞նչպէս կրնայ շարժել զունկնդիրները ,
ի՞նչպէս չեն տեսներ , որ սստուածային
բանէն աւելի ծանր , եւ աւելի մէծ քան

մը չիկայ . նոյն իսկ Աստուծոյ տանը մէջ
քարոզուած Յիսուսի Քրիստոսի ճշմարտին
Աստուծոյ աչքին առջեւ , եւ անկէց քանի
մը քայլ հեռու Աստուծոյ պաշտօնեալին ,
Աստուծոյ մը արեամբ գնուած մեղաւորաց
ամբողջ ժողով մը վրկելու համար : Եւ
ի՞նչպէս կրնան գոնէ իրենք իրենց ըսել ,
որ քահանայն պէտք է միշտ ժողովրդեան
քարոզէ , աւեատարանէ , աստուածային
պատգամները սուրբ ծանրութեամբ եւ
պարկեշտութեամբ :

49. Բայց ոմանքը ալ հակառակ ծայրը
կ'իման , այնպիսի գանդաղութեամբ խօս-
քը բերաններնէն կը հանեն որ Յովի երա-
նելիին պէս մարդկանց ալ համբերութիւնը
կը հատնի :

Այսպիսի դանդաղութեան վարժած ըլ-
լալով , կը կարծեն որ , այն ալ քարոզու-
թեան յարմար եղանակ մը ըլլայ , ուստի
անկից չեն բաժնուիր : Ամեն բառեր մէկ-
ըզմէկէ բանուած են չնչառութեամբ
եւ զդալի ընդհատութեամբ : Ոճ մը կը
ակսի , արդէն ժողովաւրդը գիտնալով ըսե-
լիքը՝ կը կանխէ զինքը եւ անկէց յառաջ
ալ վերջ կուտայ յաւիտենական ոճին . Բայց
պարապ քան , բառ մըն ալ աւելի շուտ
զուրցել տալու անկարող են . յայտնի է
որ այս տեսակ քարոզութիւն մը ո՛չ ե-
ռանդ , ոչ շարժում , ոչ ալ զորութիւն
ունենալով միշտ զունկնդիրները կը ծան-
քացունէ :

50. Կը գտնուին քարողիչներ , որոնք համարձակ , եւ զրեթէ յանդուզն , առանց զգալու , կարծէք թէ աներեսութիւն մը ունին . չսկսած՝ ունկնդիրներուն վրայ ընդհանուր եւ մասնաւոր նայուածքներ կը ծգեն այնպիսի համարձակութեամբ , որ կարծես թէ , ըսէին յէղէ չէն+ չընար : Եւ իրօք նայուածքնին հաստատուն է , ճակատնին բարձր , խօսքերնին յանդուզն , եւ բոլոր վարմանց մէջ այնչափ քիչ պարկեշտ եւ անշնորհք , որ ամենաանհոգ ունակնդիրներն ալ կը վշտանան : Կը հարցունեմ որ այս տեսակ վարմունք մը քահանայի մը արժանապատուութեան կամ առաքելոյ մը ջերմեռանդն վարմանց կը պատշաճի՞ :

Ե1. Ուրիշներն ալ հակառակ ծայրը կ'անցնին : Չափազանց վախկուտ են : Խեղճ գառնուկներ , ամպիոնը զիրենք այնչափ կը վախցունէ , որչափ որ պատժական ատենի մը մէջ յանցաւորաց համար որոշուած նստարանը , երեանին դեղնած , պոկունքնին գունաթափ , սրունքները չեն բռներ կայնելու , ծընկուըները մէկդմէկու կը դարնեն , անկարելի է որ քարոզն ալ այս ընդհանուր վհատութենէն չի վնասուի , եւ իրօք ալ տկար կ'ըլլայ՝ ընդհատած , եւ ունկնդրաց վրայ ալ ազդեցութիւն մը ընելու անկարող :

Երիտասարդ եղբայրակիցք իմ , (որովհետեւ սօվորաբար երիտասարդներն են ,

որ այսպիսի վախու մը կ'ենթարկուին ,) սիրտ առէք . ձեզի պէս քանի՛ քանի երկչուններ սքանչելի քարոզիչ եղան : Աղօթք ըրէք . եւ շատ աղօթք ըրէք Աստուծոյ , որ ձեզի քաջութիւն տայ , եւ հոգ տարէք երկիւղին մնութի գաղափարներուն հաւատոյ վեմ խորհուրդները յաջորդել տալու :

Ե2. Կան այնպիսիներն ալ , որ իրենք գիրենք չեն ճանչնար , կ'ուղեն օծութիւն ունենալ մինչդեռ իրենց ըսուածքը բոլորովին զուրկ է անկէց :

Ճառասացութեան մէջ շինծու եւ կեղծ եռանդէն աւելի պաղ եւ սառած բան չի կայ . խարէութիւնն է ունկնդիրները շարժելու կարծիքը ունենալ , երբ եւ ոչ դուք խակ շարժած կ'ըլլաք . պարապ տեղ գէպ ի երկինք կը վերցունէք աչքերնիդ ալ , թեւերնիդ ալ , աստուածային ողորմութիւնը հրաւերելու , եւ խօսքերնիդ ալ տեսակ մը մեղլածորան անուշութեամբ կը ծածկէք , բոլոր ունկնդիրներնիդ եւ անոնց մէջ ամենապէտներն ալ կը տեսնեն , եւ շուտառվ կը հասկընան թէ արդեօք սրտերնիդ ալ խօսքերուդ եւ շարժուածքներուդ հետ համաձա՞ն է թէ ոչ : Եւ երբ այս անհամաձայնութիւնը տեսնեն այնչափ աւելի կը պաղին , որչափ որ դուք աշխատիք զանոնք շարժելու : Այսպիսի քարոզիչները նաեւ յաճախ խօսքեր կ'ուղեն : առ Աստուած , եւ առ ամենասուրբ Կոյսը : Այս հուանդուն վակարդիչները երբ մէկը սրբա-

բար շարժած է , ստէպ գերազանց արդիւնքներ կ'ունենան . բայց պրտէ չըղիսած եւ պաղ կերպով զուրցուած ատենին , լսողներուն սիրար բացուելուն տեղը կը նեղի , եւ ընդհանուր անդպայութիւն չը տեսնող մը կայ նէ , միայն նոյն իսկ քառզիչն է :

53. Միթէ հոս յարմար տեղը չէ՞ երկու խօսք ալ այն քարոզիչներուն վրայ զուրցել , զորոնք աշխարհը պերճախօս կ'անսուանէ : Երբեմն սրախ մէջ մեծ նեղութիւն , մանաւանդ թէ շփոթութիւն մը զդացի լսելով , որ աշխարհականներէն ոմանք լեզունին սրած էին եկեղեցական ոմանց դէմ , որոնք առանց զդալու յայսմ մասին առիթ տուած էին : Այս խածան քննիչները այսպիսի քարոզիչներու շինծու պերճախօսութիւնը եւ ոճերու ընարութիւնը այնպիսի կծու կերպով եւ խայթիչ ծաղրածութեամբ կը նշանակէին , որ բաւական էր բազմաթիւ ընկերութիւն մը զաւարձացնելու եւ ունկնդիրները իրենց կարծեաց զրաւելու :

Ստիպուած եմ ըսելու որ քանի մը եկեղեցականք գուցէ առանց զդալու , իրենց արտաքին վարմունքով կարծէք թէ կը հասաւաեն աշխարհականաց իրենց երեսը զարկած պերճախօսութիւնը : Հագուսանին՝ մազերնին՝ նայուածքնին՝ շարժուածքնին , մէկ խօսքով ամեն բան պերճութիւն մը կ'աղջէ , որուն շատ աւելի

յօժարութեամբ ժողովուրդը կը նախադասէ սուրբ քահանային ջերմեռանդ պարզութիւնը , ինչպէս նաեւ առաքելոյն չափաւորուած անհոգութիւնը : Դեռ աւելին կայ , այսպիսի քարոզիչներուն հնչման եղանակն ալ իւր հետ կը բերէ տեսակ մը գարշելի պերճութիւն , որուն հակառակ եմ :

Խօսքիրը՝ փոխանակ ընականաբար բերաններէն գուրս ելլելու , կարծէք թէ սխմուած եւ քաղցրացած թեթեւ կերպով գուրս կը ցատկեն կիսաբաց շրթունքներուն մէջէն , որն որ քարոզութեան ատեն մեղկութիւն մը թուլամորթութիւն մը , անախորժութիւն մը կը պատճառէ , որն որ աստուածային բանին մեծամեծ արդեանց անյաղթելի արդելք մը կ'ըլլայ : Ցիսուս Քրիստոս այսպիս չէր քարոզեր , եւ ոչ ալ այսպէս կը քարոզէն Ասկերեաններ , Քըսաւերեաններ , Տոմինիկոսներ , Ֆէրրերեաններ եւ ուրիշ շատեր . որոնք զարդարութիւն հաւասարապէս կը շարժէն թէ արժատաքին պարկեցտութեամբ եւ թէ ճառերուն զօրութեամբ :

54. Վերջապէս խօսք մըն ալ զուրցենք տեսակ մը մեղկ եւ անդօր քարոզիչներու վրայ : Այսպէս չեն վախկոտութեան համար , ապա թէ ոչ զանոնք վախկոտներուն կարգը կը դասէի . ո՛չ , երկչուա չեն , այլ բնականապէս թոյլ , անոյժ , եւ զբեթէ անդպայ , բան մը զիրենք չի շարժեր , կամ գոնէ բան մը չկայ , որ իրենց շարժումը

ցոյց տայ : Ահարկու ճշմարտութիւններն ալ այսպիսի քարոզիչներէ սփոփիչ ճշմարտութեանց պէս կը ճառուին : Չեն կրնար ազդու կերպով հնչել իրենց խօսքերը , լեզունին կը քաղցրացունէ եւ անուշութեամբ կ'առաջնորդէ անոնց մինչեւ պըռկունքներուն վրայ , ուր կը մարին , եւ եթէ երբեմն քիչ մը աւելի զօրութեամբ բառերը հնչուին , անոնք ալ ամպիսնին տակը չիջած կը մեռնին , կը կրկնեմ այսպիսի քարոզիչներ չեն գիտեր իրենց խօսքերուն ազդեցութիւնն մը ատալ , չեն գիտեր պարզ եւ ազդու հնչման զօրութիւնը , որն որ մեծ դժբաղդութիւն մըն է , վասնզի չեն կրնար հասկնալ աղուոր հնչման եւ արտաքերութեան մը ունկնդրաց վրայ ըրած սքանչելի արդիւնքը :

Գործք եւ աղէկ ըսուածք , ահաւասիկ քարոզութեան զլսաւոր արտաքին միջոցները , վարպետութեամբ զուրցուած բոտիկուէզին մէկ երեսը , չատ աւելի աղդեցութիւն պիտոր ունենայ . քան թէ մեղկութեամբ եւ թուլութեամբ հնչուած Պուրտալուին եւ Մասիլիոնին ամենագեղեցիկ ճառերը : Ո՞հ որչափ քարոզիչներ կը գտնուին , որոնց հոս ըսածս չատ աղէկ կը յարմարի : Նրկնչք յաջողէ՞ին , որ այս դիտողութիւններս իրենց օդտակար ըլլայն :

Եօ. Քարոզներու նկատմամբ աղդարարութիւններս լմնցնելու վրայ ըլլալով , աս

ալ ըսեմ , որ քարոզին վերջը բոլոր սըրտով Աստուծմէ խնդրելու է , որ պատվաշտցունէ եւ բոլորն ալ իւր ամենամեծ փառացը եւ հոգւոց փրկութեանը վերածէ :

Ըսեմ նաեւ որ քարոզէն վերջը քարոզին վրայ խօսելէ զդուշանալու է , մնոտի գովեստներ ճարելու ծածուկ դիտաւորութեամբ անարգելի եւ Ցիսուսի պաշտօնէի մը վերջն աստիճանի անարժա՛ն ընդունայնութիւն : Եթէ քարոզիչ մը կրնայ իր անձին վրայ վկայել ընդունայն գովեստներ չը փնտուելու եթէ ինքը իրաւցունէ չուզեր խօսիլ , եթէ ոչ քարոզը լող բանիքուն եկեղեցականի մը աղաչելու համար , պապէս զի իր կարծիքը զուրցէ պատշաճ գտատած աղդարարութիւնները տալու համար , ստուգիւ ասիկայ շատ աղէկ բանմը կ'ըլլար : Որչափ պակասութիւններ կ'ընենք շարադրութեան մէջ ալ զուրցուածքի մէջ ալ , եւ զորոնք ամէնքը կը գիտեն , եւ միայն մենք չենք ճանչնար , ուստի աղաչենք մէկը , որ ելլայլիքութեամբ զանոնք մեզի ցոյց տայ . եւ ջանանք այս մեզի տրուած աղդարարութեանց միջոցաւ զանոնք ուղղելու : Այս զմենք կատարելագործելու հոգը միշտ աւելի արդասաւոր պիտոր ընէ սուրբ պաշտօնիս :

Եօ. Քարոզ տալէն վերջը մեծասիս հըսկեցէք վրանիդ որպէս զի վարմունքներու վրդ յետո չի կոչէք հրապարակաւ ուրիշ-

ներու զուրցած այնչափ գեղեցիկ բանեւ
ըք : Երբեմն ծանր նեղութիւն զգացի
տեսակ մը քարոզիչներ տեսնելով, որոնք
քարոզի ատեն իրենց ունկնդիրներն հա-
ռաջելու եւ արցունքի շարժած ըլլալով,
հաղիւ թէ քարոզը լնցած թեթեւ, կա-
տակող, եւ ցնդած . եւ ան ալ սեղանի
վրայ, ուր ներկայ էին եկեղեցւոյ մէջ
քարոզին ունկնդիրներէն, եւ սրտերնին
շարժած անձինքներէն շատերը : Ասիկայ
ակնածութեան եւ խոհեմութեան պահաւ-
սութիւն մըն է, որն որ, գժբաղդաբար
կրնայ հաւատացունել տալ, որ այս տեսակ
վարուող քարոզիչը ասանկ բացայատ կեր-
պով ծանուցած ծշմարտութեանը վրայ ան-
ձամբ ի խոր թափանցած չըլլայ եւ այս ա-
մէն ինչ իրեն համար ուրիշ բան եղած
չըլլայ, եթէ ոչ հրապարակախօսութեան
դործք մը : Հսկեցէք ուրեմն վրանիդ, եւ
այնպէս ըրէք, որ աւելի գործքով, բան
թէ խօսքով ճարտարախօս ըլլաք :



ԳԼՈՒԽ Գ.

Ապաշխարութիւն—Այս խորհրդոյս գե-
րազանցութիւնը—Նորին ամենամեծ հար-
կաւորութիւնը, — Որուն գործադրութիւ-
նը, օգտակար եւ արդիւնակոր ընելու, հա-
մար քանի մը ծանուցումներ.

57. Եկեղեցականի մը համար գործոց
գործը՝ է ապաշխարութեան պաշտօնը :
Այս անսահմանաբար կարեւոր նպատա-
կին պէտք է ուղղէ բոլոր իւր գործքերը,
եթէ խոստովանութիւնը բոլոր իւր ե-
ռանդեան ջանքերուն վախճանը չէ . եթէ
բոլոր իւր հնարքները այս վերջին եւ հա-
մառօտ արգասեաց չեն դիմեր, ինքը յադ-
թանակ պիտոր չի կանոնէ, եթէք պիտոր
չի կարենայ ըստել թէ յաղթեցի, եթէ ոչ
երբ տեսնելու ըլլայ զմեղաւորները, որոնք
իր սուքերն իշնալով արտասուտթոր աշ-
քերով զինքը թախանձեն ու ինսդրեն իր-
մէ այն թողութիւնը . որ մի միայն կրնայ
անոնց խոռված հոգւոյն վերադարձունել
զմազաղութիւնը :

Ամպիռնէն մենք բազմութեան կը խօ-
սինք, եւ շատ անդամ ամբողջ ճառի մը
մէջ եւ ոչ խօսք մը կընենք մասնաւորա-
բար այս կամ այն ունկնդիրին վերաբե-
րեալ, բայց երբ անոնք կուգան զմեզ ա-
պաշխարութեան ատեանը գտնելու, ան
ատեն աեսարանը կը փոխուի, եւ ամե-

նեւին բառ մը չարտաքերուիր , որ յատկապէս ամոր չի վերաբերի :

Ամպիոնէն մենք ընդհանրապէս հոգւոյն վերքերը կը ծանուցաննենք , անոնց միայն անորոշ եւ հարեւանցի նայուածք մը կուտանք , իսկ ապաշխարութեան ատենին մէջ աչքերնուու առջին ներկայ ունինք այս վերքերը , անոնց խորութիւնը կը քննենք , թոյնը կը գտնենք , որոնց պէտք եղած անսխալ դեզը ի պատրաստի ունինք :

Ամպիոնէն մենք մեր ճարտարախօսութեանց մէջն , միայն առ ի շեղ (կողմնակի) կը ցուցնենք զդոխաքը իր տանջանքներով , երկինքը իր յաւիտենական հրձուանօք : Իսկ ապաշխարութեան ատենին մէջ շատ աւելի մեծ դործք մը կը կատարենք ի վարձ մէկ խոստովանութեան մը դժոխքը զոյելով , երկնից դռները կը բանանք :

Հաւատքնիս ստէպ կենդանացունենք այս ծանր խորհրդածութիւններով , եւ միշտ աւելի եւս համոզուինք ապաշխարութեան ատենին մէջ ի դործ դրած պաշտօններուս վերջին աստիճանի կարեւորութեան վրայ:

58. Այս ընդարձակ նիւթին վրայօք այնշափ ծանուցումներ եւ յանձնարարութիւններ ունիմ ընելիք որ , վերջին աստիճանի շփոթութիւն մը կը զգամ ընտրութեան մէջ , որուն համար կը խնդրեմ եղբայրակիցներէս որ հոս ըսած քանի մը խօսքերովու չի շատանան , այլ հոգ տանին կարդալու եւ դարձեալ կարդալու անթիւ

եւ աղէկ առաջնորդ խոստովանահարց ըստուած գրքերը , զորոնք ապահով եմ , որ ունին ձեռքերնին , եւ միայն կը թախսանձեմ որ մասնաւոր կարեւորութիւն մը տան այն խորհուրդին զոր այս թերթով կը համարձակիմ իրենց տալու :

Էջ. Ամէն բանէ յառաջ կ'ապսպերեմ որ եռանդներուդ ամէն հնարքները թափէք զմեզաւորները զրգուելու եւ ստիպելու որ խոստովանանք ըլլան , միշտ զինուած գըտնուեցէք մեղքին դէմ , որն որ միայն խոստովանարանին մէջ կը մեռնի , եւ այն ատեն միայն զէնքերնիդ վար ձգեցէք , երբ մեղաւորը զղացած ոտքերուդ առջն ծունկ չոբած ըլլայ :

Ազօ՞թք կընէք . Աստուծմէ ինողեցէ՞ք , որ զմեզաւորները դարձի բերելով ձեղի խաւրէ : Կ'աշխատի՞ք , միշտ զմեզաւորները դարձի բերելու , ուղիղ կամ անուղիղ նպատակաւ ըրէ՞ք . Ժողովրդապետութեան մէջ կը շրջազայի՞ք : Մեղաւորի մը այցելութեան դացէ՞ք . Եւ զանիկայ խոստովանարանը բերելու ժամադիր եղիք : Քարո՞զ կուտաք , ինչ որ ալ ըլլայ քարոզներուդ նիւթը , չմունաք այնպէս մը դարձնելու խօսքը , որ զմեզաւորները ի դարձ շարժելով խոստովանարանը բերէ : Միթէ ասիկայ չէ՞ այն տեղը , ուր ամեն ճառ եւ ամեն խօսք պէտք է բերէ զլսող մեղաւորները :

60. Ներկեցէք ինձ յարգելի Եղբայրակից-

ներս , որ ձեզի հարցմունք մը ընեմ , Ա-
խորժակոլիկ'աշխատի՞ք խոստովանութեան
պաշտօնին համար : Այս աստուածային
պաշտաման հոգւոց պատճառած անսահ-
ման բարիքները տեսնելով գրտերնուղդ մէջ
բորբոքուած բաղդանք մը կը դդա՞ք ինքը
վինքնիդ այս պաշտաման նուիրելու :
Վերջապէս կրնա՞ք դուք ձեզի ըսել որ
միայն Աստուծոյ փառաց եւ հոգւոց վըր-
կութեան նպատակաւ , սաստիկ կը բաղ-
ձաք առաշխարութեան ատեանը նստե-
լու : Եթէ այս ամեն հարցմունքներուս
ստորասական պատասխան մը կրնաք տալ .
օրհնեցէ՞ք սիրելիներս սրտերուդ բողոք
յուղմամբը՝ օրհնեցէ՞ք զԱստուած , Ո՞հ ,
ո՞վ գիտէ թէ քանի հաղարաւոր մեղաւոր-
ներ Աստուծոյ հետ հաշտեցնելու համար
կանչուած չըլլաք :

Բայց եթէ չէք սիրեր այս պաշտօնը ,
մանաւանդ եթէ հակարութիւն մըն ալ
կը դդաք , կարսկից ըլլալով չափաղանց
կը ցաւիմ ձեզի համար : Շատ աղէկ ըրած
կ'ըլլայիք , եթէ կղերանոցին մէջ կոչում-
ներուդ վրայ ուսմունք ըրած ատենիդ
խոստովանահօրներուդ եւ մեծաւորներուդ
յացտնած ըլլայիք , ինչ եւ իցէ . քննեցէ՞ք
թէ ո՞ւսկից յառաջ կուգայ այսպիսի հա-
կակրութիւն մը :

Մի՛ գուցէ խղճահարութենէ պատճա-
ռած ըլլայ , կամ չափաղանց վախէ մը
այն , թէ եւ զարհուրելի պատասխանա-

տուութեան համար , որն որ պէտք է միշտ
գուգակշեր ըլլայ Յիսուսի Քրիստոսի ան-
սահման զթութեան հետ , որն որ զմեզ
այսպիսի ծանրաբեռն պաշտօնի մը զնե-
լով . հարկաւ կը ճանչնար մեր թշուա-
ռութեան ու տկարութեան մեծութիւնը :
Մէկդի ձգեցէ՞ք խղճահարութիւնները ,
եւ վստահ եղիք աստուածային բարու-
թեան վրայ՝ որն որ ստուգիւ պիտոր չի
դատապարտէ ձենդ այսպիսի պաշտօն մը
վարենուդ համար , զարն որ յանձն չա-
ռիք , եթէ ոչ միայն հոգիներ փրկելու
համար : Բայց ո՞հ Աստուած իմ մի՛ գուցէ
ասոր պատճառը զաղջութիւննիդ ըլլայ :
Սուրբ քահանայնները եռանդուն քարոզիչ-
ները , ստուգիւ առաքելական մարդիկ
մեծ զուարձութեամբ օրեր եւ գիշերներ
խոստվանարանին մէջ կ'անցունեն ՝ ար-
դեօք նոյնը կրնայ ընել թեթեւ ճանդած ,
աշխարհասէր , խաղ , խումբ և խորակադարդ
սեղաններ սիրազ քահանայն . Ավագ մ , այս
տեսակ քահանայն մը համար խրժանվա-
նարանը մարտիրոսութիւն մըն է :

Որչա՞փ ներդութիւն կ'գդայ , երբ իրեն
ծանուցուի , որ մէկը իրեն կ'սպասէ խոս-
տովանարանին քովւ Խնչպիսի՝ շտապ խոս-
տովանորդիքը շուտով ծամբելու , որպէս
զի զբօսանքին , մսոտի ընթերցմանց եւ
խաղի ատենը չանցնի : Քող մը քաշնիք
այս թշուառութեանց վրայ :

Ոհաւասիկ , ամենասիրելիք , ինչ որ

պէտք է քննենք Աստուծոյ առջին , որպէս զի տեսնենք թէ ո՞ւսկից յառաջ կուգայ ասանկ սուրբ եւ օգտակար պաշտօնի մը դէմ ունեցած հակակրութիւննիդ : Գուցէ այս ալ ուրիշներուն նման փորձ մը ըլլայ՝ զոր Աստուծած ձեզի կը խաւրէ , որպէս զի մեծագոյն ըլլայ արդիւնքներդ այս աստուծային պաշտօնը ի գործ գրած ատեննիդ , խնդրեցէ՞ք Աստուծմէ եւ ստէպ խնդրեցէ՞ք աղօթքներուդ մէջ սէր եւ ախորժակ առ այս պաշտօնը :

61. Այս պաշտօնն յանձն առնելու վրայ եղող երիտասարդ քահանայից խորհուրդ կուտայի Յիսուսի եւ Ամենասուրբ կուտին սուրբ Խրտերուն իննօրեայ մը կատարելու . խոստովանահայրութեամ պաշտօնը , զոր յանձն առած են սրբաբար եւ օգտակար կերպով ի գործ դնելու պատճառաւ հարկաւոր չսորհքները ընդունելու համար: Այս իննօրեայ ջերմեռանդութեան մէջ անդամ մը , կամ աւելի եւս պատարագին անսարիւն զո՞ն ալ նոյն նպատակաւ նուրիբենին շատ աղէկ բան մը պիտոր ըլլայ:

62. Խոստովանահայր մը մանաւանդ իր պաշտօնին սկիզբը , եւ ընդհանրապէս բոլոր իր կենաց ընթացքը յարատեւաբար պէտք է որ կարդայ զրարոյականը , մանաւանդ աւելի եւս գործնական մասը , այս ինքն ապաշխարութեան , տամնաբանեայ պատուիրանաց , արդարութեան , դաշանց եւ խորհրդոց գլուխները , եւ հատուած-

ները , նմանապէս եւ կարդալու եւ ստէպ քաղուածքը ընելու է ապաշխարութեան սուրբ խորհուրդը օգտիւ ի գործ դնելու եղանակին վրայ գրուած լաւագոյն հառերը . վերջապէս պէտք է որ տեղեկութիւն ստանայ սիւնդուսական օրինաց , եւ վերապահեալ դէպքերու , եւ իրաւասութեան վերաբերեալ թեմական վճիռներու : Խոկ դէպքերը լուծելու համար կանոն մը բոնելու սկզբանց նկատմամբ , առանց կողմնապիրութեան , ծանր եւ ընդհանրապէս ընդունուած ու յարդուած հեղինակներուն հետ պէտք է խորհրդակցի , մանաւանդ անոնց հետ , որոնք որ սովորաբար թոյլ կամ չափազանց խիստ ըլլալու համարէ աղատ են :

63. Վերը ըսի որ շատ աղէկ բան է խոստովանութեան պաշտաման մեծ սէր մը ունենալ . ասիկայ բաւական չէ , հարկ է նաեւ զժողովուրդը հաւանեցունել եւ համոզել , որ մենք այնպէս կը սիրենք զայն որ՝ թէեւ չափազանց աշխատալի , այսուամենայնիւ մեզի համար ամենէն աւելի զուարձալի ժամերը անոնք են , զորոնք ապաշխարութեան ատեանը կ'անցունենք:

Ամեն կերպիւ հոդ տանինք գտնուած տեղերնիս այս թանկագին համբաւը ստանալու : Եթէ մեր վրայօք այսպէս մտածեն , մեղաւորները ոչ միայն առանց զմեզ ձանձրացունելու վախի , այլ մանաւանդ թէ հաճութիւն մը պատճառելու ստու-

գութեամբ կուգան . բայց եթէ ընդհաւ կառակն գիտնան , որ մենք չենք պիմբ այս պաշտօնը ու բոնի եւ հակակրութեամբ կ'երթանք խոստվանարանը , այն ատենը մեղաւորները վախով եւ ակնածութեամբ կուգան զմել գանելու . եւ շատեն , որ արդէն պատշաճ տրամադրութիւն մը չունէին իրենց ծանր եկած որոշումը ընելու , վերջապէս դարձերնին անորոշ ժամանակի կը թողուն :

Սուուգիւ ողբալի դժբաղդութիւն մը , որուն կրնանք պատասխանատու ըլլալ Աստուծոյ առջնու : Ըսե՞նք ուրեմն , ըսե՞նք ամէն տեղ եւ միշտ է հրադարակու եւ է բոռնու որ , մենք պատրաստ ենք մեղաւորներուն ծառայութեանը համար , ըսե՞նք որ մեզի համար անոնցմով խոստվանարանը շրջապատաժ տեսնելէն մեծագոյն զուարձութիւն մը չըլլար , եւ թէ մեծ նեղութիւն մը պիտօր զգանք եթէ զիտնանք որ իրենք մեր պաշտաման օգնութիւնը ինադրած առն զմեղ կամ յոդնեցունելու եւ կամ ձանձրացունելու վախը կ'ունենան :

Գալու ատեննին զիրենք ուրախութեամբ ընդունինք , եւ եթէ ո՛ եւ իցէ կերպիւ անկարելութիւն մը չի կայ ըսենք անոնց , եթէ օրինաւոր պատճառ մը զմեղ ուրիշ տեղ կանչէլու ըլլայ , զիրենք այն վայր կենին գո՞ ըսել չի կրնանուս ցաւը յայտնէնք իրենց , եւ զիրենք նորէն ընդունելու պատշաճ ժամանակը նշանակենք : Այսպի-

սի առիթներու մէջ ամեն տեսակ խստութենէ , ցասկոտութենէ եւ դժկամակութենէ զգուշանք :

64. Այսու ամենայնիւ շատ յարմար է խոստվանարանին մէջ անցունելու համար որոշուած ժամանակ մը ունենալ . այսօր այս ինչ ժամուն , վաղը ուրիշ ատեն մը երթալը մեծ անկարգութիւն մընէ . խոստվանորդիք չը գիտնալով թէ երբ զիսոստվանահայրը կրնան գտնել , եւ պարապտեղ գնացած ըլլալուն վախը ունենալով , շատ անգամ ալ այս խորհրդոյն մօտենալը զանց կ'ընեն :

Ժամը որոշելու նկատմամբ խոստվանահայրը միայն իւր հանգիտաց դիմելու չէ . մանաւանդ պէտք է վնասոէ թէ ժողովրդեան համար ո՛ր ժամը աւելի յարմար է : Որչափ արհեստաւորներ , ծառաներ եւ ուրիշ պաշտօնի մէջ գտնուած մարդիկ կան , որոնք միայն որոշուած ատեններ կրնան իրեն երթալ , եւ այս որոշուած ատենն ալ իրենք չեն կրնար փոխել , թէ որ երբեմն վիճակներուդ վերաբերեալ ծանր գործք մը կամ պաշտօն մը արգելք ըլլայ սովորական ատեն խոստվանարանը երթալու , հոգ տարէք կանխաւ խոստվանորդւոյ ծանուցանելու , որպէս զի պարապտ տեղը չսպասեն :

65. Որչափ ալ որ մէկը խոստվանարանը նստելու համար որոշած ժամենքը ունենայ , եւ ամէնքին ալ ծանօթ ըլլայ , այսու ա-

մենայնիւ պատշաճ չէ որ մերժուին առնըք, որ օրուան մէջ ուրիշ ատեն մը ուղեն զինքը տեսնել : Ամեն կանոն իր բացառութիւնն ունի : Խնչ տեսակ կ'ուզէ ըլլայ մեղաւոր մը այսպիսի շնորհաց այնչափ աւելի արժանի է որչափ որ աւելի երկար կ'ըլլայ իւր վերջին խոստովանութեան միջոցը, մանաւանդ եթէ պատրաստ ալ ըլլայ նոյն վայրկենին մէջ խոստովանելու : Հիւանդներ, ծերեր, ծննդականներ, երկար ճանապարհորդութիւն ընելու պարտաւորուած անձինք, եւ ուրիշ մասնաւոր պարագաներու մէջ գտնուած շատերը իրաւունք ունին ընդհանուր կանոնէն տնօրինուելու :

66. Զափազանց կարեւոր է որ խոստովանարանը երթալու ատեն խոստովանահայրը մէկուի ձգէ կանխաւ ունեցած զբաղմանց հոգը : Եթէ մէկը խղճի անհանգըստութիւն մը ունի, եւ կամ սկսած գործ մը՝ որուն վրայ արտաքոյ կարգի եռանդեամբ կ'զբաղի, եւ կամ միտքը դրած ըլլայ բարեկամին մէկուն այցելութիւն մը եւ կամ զուարծութեան համար զբօսանք մը ընելու . մէկ խօսքով, եթէ մէկը զինքը զրաւող եւ կամ ուշագրութիւնը ցըրուեցնող գործ մը ունենայ, եւ կամ այնպիսի բան մը, յորմէ ստիպուած բաղձայ որ խոստովանարանին մէջ շատ երկար ատեն չի մնայ . այս չար արամադրութիւնը, որուն մէջ կը գտնուի մէկը ամեն

խոստովանութեան ատեն ալ պիտոր զգացուի, ուստի եւ շատ մը հարցուփորձ պիտոր զանց առնուի, մեղքերուն ամբաստանութիւնը շատպով պիտոր ըլլայ, յորդորակները պիտոր համառօտին, եւ պազութեամբ, ցամացութեամբ, սրտնեղութեամբ եւ գժկամակելով պիտոր լսէ ըդխոստովանանքը, Եւ երբ տեսնուի որ ուրիշ խոստովանորդիք կուգան, այս սեւամաղձը կ'աւելնայ, ուսկից յառաջ կուգան շատ եւ ծանր անպատճենութիւններ կազաչել որ ամեննեւին չի մոռնաք այս խորհրդածութիւնը :

67. Մէկը խոստովանարանը երթալու ստիպուած ըլլալով, պէտք է որ քիչ մը ատեն խորսնին առջեւ կենայ, խորին ամփոփմամբ պատրաստական աղօթքը ընելու համար : Շատերը զանց կ'ընեն այս օգտակար աղօթքը, եւ կամ անանկ ցնորմամբ ու կանխազբաւած մտքով կընեն, որ իրենց համար ուրիշ բան չէ, եթէ ոչ կամ ունակութիւն մը, եւ կամ ընդունայն արարողութիւն մը : Այսու ամենայնիւ ըստոյզ է որ խոստովանորդւոյ մեծ շինութիւն պիտոր պատճառէր տեմնելլը՝ որ խոստովանահայրենին իրենց ունկնդրութիւն չի տուած քանի մը սիրալիր վայրկեաններ անցունէր Ցիսուսի Քրիստոսի հետ :

Նմանապէս եւ խոստովանարանը երթալու ատեն՝ մեծ պարկեշտութեամբ երթալու է առանց գահավէժ քայլերու,

որն որ նշան պիտոր ըլլայ գործքը շուտով մը լինցունելու բաղձանաց : Ամենեւ նայուածք չի գուրի խոստովանորդւոյն վրայ, մանաւանդ անոնց որ խոստովանարանին աւելի մտ են, եւ անձանց նկատմամբ ալ ո՛չ նախադասութիւն ըլլայ եւ ո՛չ ալ նախամեծար ընդունելութիւն, մանաւանդ հարուստներու եւ օրիորդաց համար :

68. Խոստովանահայրը մեծապէս զգուշանելու է զապաշխարողները իւր խոստովանարանին չի կապելու . այլ ընդարձակ իշխանութիւն տալու է անոնց ուժի խոստովանահօր դիմելու եւ խոստովանելու քանի անգամ որ պէտք ըլլայ : Ընդունելի բան չէ ոմանց մէկ խոստովանահօրէ ուրիշի դիմելը . չար իրենց համար, եթէ իրենց տրուած ազատութիւնը չարաշար կը գործածեն, բայց չարագոյն եւ կամ հազարիցս աւելի չար թէ՛ իրենց եւ թէ՛ մոզի համար, եթէ բռնութեամբ զիրենք մեր խոստովանարանին կապենք, եւ կամ թէ այս պատճառաւ ստիպէինք զիրենք առ ահի հազար սրբապղծութիւններ դործելու :

Հստ իմ կարծեացս, այն խոստովանահօր կուրութենէն աւելի ողբալին չըկայ, որն որ ինչպէս շատ անգամ կը հանգիսի, այնպէս կը համոզուի որ խոստովանորդիք առանց վախու եւ ակնածութեան ամեն պակասութիւննին խոստովանին, ուստի

եւ կ'արգելուն որ ուրիշ խոստովանահօր դիմեն . եւ ուրիշի զացած ատեննին պատիժ կ'սպառնան, եւ իրօք ալ մէկ կամ երկու անգամ ուրիշի դիմած ըլլանին իմանալով պաղութեամբ ընդունելնէն զատ, երբեմն ալ ծանրյանդիմանութիւններ կուտան :

Ես կը բողոքեմ . եւ ընթերցողներէս կը խնդրեմ որ հաւատան ինձ որ ամեն ըսած բառերս աստուածաբանօրէն կշռած այնպէս կ'արտարերեմ : Եթէ խոստովանահայր մը այս պակասութիւնը, եւ անոր ծանր հետեւութիւններուն վերահասու ըլլալով չուզէր ուղղուիլ, եւ շարունակէր յայտնի ցուցունելու որ մեծ ցաւ պիտի զգար, եթէ խոստովանորդիք կերպով մը զինքը թողուին : Եւ եթէ ասիկայ սոսկ անգամ մը կամ երկու անգամ պատահէր, եւ այսպէս զերութեան մէջ պահէր իւր խոստովանորդիքը, ես զինքը չէի արձակներ :

Նոյն ինքն ալ այսպէս խօսելու էր մի եւ նոյն պարագայից մէջ գտնուողներուն վրայ, եթէ ինքն ալ տեսնէր առաքելութիւն* ընտղներուն ամեն օր տեսածը .

* Առաքելութիւն կ'ըսուի այն սքանչելի և օգտական սովորութիւնը որ Եւրոպիոյ գրեթէ ամեն կողմը տարածուածէ, այսինքն քանի մը հոգելից և եռանդուն Քահանայից ընկերութիւնը, որոնք թեմական եպիսկոպոսաց հաւա-

այսինքն եթէ տեսնէր շատ մը հոգիներ ,
որոնք ծանր մեղքերը սովորական խոստո-
վանսահարց խոստովանելու չը համարձակե-
լով օրբապղծութեան վիճակի մէջ կը զըտ-
նուէին . Ողորմելի՛ հոգիներ . որչափ փոյթ-
եռանդութեամբ առաքելութենէ օգուտ
կը քաղեն իրենց խղճմտանքը կարգի դր-
նելու , եւ հոգիներուն խաղաղութիւնը
կրկին ձեռք բերելու , որուն քաղցրու-
թենէն երկար ժամանակներէ ի վեր զըր-
կուած էին :

Ավ գուք , որ այս տողերը կը կարդաք ,
ով գուք Ցիսուսի Քրիստոսի Քահանայք .
ով որ ալ ԸԱաք , Ըսեցէ՛ք : Եթէ խոստո-
վանորդոց քաղմութիւն մը առնիք . մա-

նութեամբ և հրաւիրանօք թեմերու մէջ
քաղաքներ , աւաններ , և գիւղեր յրջա-
պայելով , գացած տեղերնին տասը՝ տա-
սըն եւ հինգ օր , ըստ պահանջման պա-
րագայից , կանգ կ'առնեն , և այս միջոցիս
ոմանք ընդհանուր ութօրեայ կրթութիւն
կուտան , ոմանք քարոզութեան կ'զբաղին
ոմանք ժողովրդեան խոստովանութիւն-
ները կը լսեն , ոմանք ալ տղայոց քրիս-
տոնէական վարդապետութիւնը մեկնե-
լու կը պարապին . Թափօրներ կը կազ-
մեն , հրապարակական աղօթքներ կ'ը-
սեն , ամէն անդամուն հոգեւոր առատ
պտուղներ քաղելով առաքելութիւն
ըրած տեղերնին :

նաւանդ եթէ ջերմեռանդ ու երկիւղած
անձինքներ են , հաստատ գիտցէ՛ք , որ ա-
սոնց մէջ ոմանք կրնան սրբապղծութեան
մէջ գտնուիլ մանաւանդ եթէ գիտնան որ
դուք ո'չ միայն չէք ուղեր որ անոնք ու-
րիշ խոստովանահօր դիմեն , այլ նաեւ
քիչ մըն ալ խիստ էք խոստովանանքնե-
րուդ մէջ :

Ըսածո յարդելի հեղինակութեամբ մը
կ'ուղեմ հաստատել : Ահաւասիկ այս նիւ-
թիս նկատմամբ Սուրբ Լիգուորիին վար-
դապետութիւնը :

— Եթէ առաքելութենէ ուրիշ օգուտ
մը չի քաղուէր եթէ ո'չ այս միայն որ դար-
ման տարուէր այնչափ սրբապղծ խոստո-
վանութեանց , որ թէ արք եւ թէ՛ կանայք
կ'ընեն ամօթխածութեան համար մեղքեր-
նին պահներով , եւ մանաւանդ կանանց ,
որոնք աւելի ամօթխած կ'ըլլան , միայն
այս պատճառը բաւական էր առաքելու-
թեան գործադրութեան մեծ փափագ մը
ունենալու : Այս վատ խոստովանութեանց
մեծ աւելը աւելի փոքր հասարակութեանց
մէջ ստէպ կը պատահի , ուր խոստովանա-
հարք սակաւաթիւ են , եւ որովհետեւ կամ
ազգական ու ծանօթ են , եւ կամ գոնէ
երկրացի են , որ միշտ մէկզմէկ' կը տեսնեն ,
խոստովանորդիք մեղքերնին կը պահեն .
եւ բոլոր կեանքերնին սրբապղծութեան
մէջ կ'անցտնեն թշուառութիւննին խոս-
տովանահօր յայտնելու համար կրած ամօթ-

խածութեան պատճառաւ : Շատերը նոյն իսկ մահուան կէտին ալ չեն համարձակիլր լութիւնը ընդհատելու եւ թշուառութիւնին յայտնելու : Ուստի ասիկայ առաքելութենէ քաղուած ամենամեծ պտուղ- ներէն մէկն է , այսինքն գարման տանիլ այնչափ չար խոստովանութիւններու . ո- րովհետեւ առաքելութեան ատեն խոստո- վանորդիք գիտնալով , որ այն խոստովա- նահարելը օտար են եւ զիրենք չեն ճանչ- նար , ու քանի մը օրէն ալ պիտոր հեռա- նան , եւ ա'լ ամեննեւին զիրենք պիտոր չի տեսնեն . եւ միւս կողմանէ ալ քարոզ- ներէն սարսափած ըլլալով , մեծ դիւրու- թեամբ կը թափեն պահուած այնչափ մեղ- քերուն թոյնը : — (1)

Ասկէց կը հետեւցունեմ որ յայսմ մասին խոստովանորդւոյ լիուլի ազատութիւն տալու է , սակա կրկնելէ ալ գո՞չ ըլլալով , աւելի յաճախ խոստովանողներն ալ աղ- ջրութեամբ գրգռենք որ , երբեմն եր- բեմն , եւ կամ գոնէ տարին անդամ մը ուրիշ քահանայի խոստովանին . Եւ եթէ չուզէին այս աղատութենէն ալ օգուտ քա- զել , եւ եթէ այս մեր յորդորանացը դէմ դնէին , այսու ամենայնիւ այսպիսի վար- մունքի մէջ միշտ ամենամեծ օդուտ մը պիտոր տեսնուէր , այսինքն յայտնել որ մենք ոչ միայն ուրիշի խոստովանանք ըլ-
(1) Լիդուորի բառակ Բ. առ նորընդէր նորինուո՞ս թէ - 44 :

լալներուն համար չենք ցաւիր , այլ մա- նաւանդ թէ իրենք այլոց խոստովանանք ըլլալով ալ մեր հաճոյքը կը կատարեն : Ա- պիկայ բաւական է խոստովանորդւոյ պէտք եղած խղճի ազատութիւնը տալու համար : Այս յօդուածին վրայ երկարօրէն խօսեցայ , բայց չեմ զղջար , այս խորհրդածութեանը չափաղանց կարեւոր ըլլալուն համար :

69. Նոր խոստովանորդի մը ձեզի ներ- կայացածին պէս , իրբեւ հին խոստովան- որդի մի՛ ընդունիք : Գուցէ ձեզի չի ներ- կայացած քիչ մը վարանած ըլլայ , գուցէ չափէն աւելի երկշու ըլլալով վախնայ պա- զութեամբ ընդունուելու :

Տեսնելով որ ասիկայ առաջին անդամ ներկայացող մէկն է , խոստովանութիւնը չակած սիրալիր եւ հայրագորով խօսքերով քրոլոր վատահութիւնը ձեզի գրաւելու ջա- նացէ՛ք : Խոստովանութիւնը լմնցածին պէսըսէ՛ք որ չի վախնայ , այլ մոտածէ որ հօր մը կը խօսի : — Ստուգիւ , ըսէ՛ք իրենց , գուք ալ այն խոստովանորդւոյ նման , որոնք առաջին անդամ խոստովանահօր մը կը ներկայանան , քիչ մը երկիւղ ու նեղու- թիւն կ'զգաք , չի գիտնալով թէ ինչպէս պիտոր վարուենք մէկզմէկու հետ . բայց հանդիսաւ եղիք եւ մի՛ խոռովիք , կարելի եղածին չափ իմ կողմանէս պիտոր օգնեմ աղէկ խոստովանութիւն մը ընելու համար , եւ ապահով եմ որ Աստուծոյ օգնութեամբ հոգինիդ խաղաղ վիճակի մէջ զնեմ : —

Այսպիսի անուշ՝ խօսքերով խոստովանորդին կը պատրաստուի առանց վախու եւ նեղութեան խոստովանելու, որն որչաւ կանապէս կարեւոր է:

Նոյնպէս շատ աղուոր բան կ'ըլլար այս տեսակի յառաջարանէ մը վերջը, եւ խոստովանորդոյն իր մեղքերը ամբաստանելէն յառաջ, եթէ նոր խոստովանորդոյ մը ըսուեր որ եթէ անձանց խոստովանութեանց վրայօք սրտին մէջ տափնապ մը ունի, աւելի աղէկ կ'ըլլար որ աւ մեն բանէ յառաջ զանոնք յայտնէ: — Հաւատացէ՞ք, կրնաք ըսել, եթէ անցելոյն վրայ անհանդատութիւն մը ունիք, անշուշտ կրնաք ինձ ըսել. ես կուզեմ ձեզի օգնել Աստուծոյ հետ հաշխաներդ կարգի գնելու, եւ հոս միայն այս բանիս համար նստեր եմ: Ուրեմն անցելոյն վրայ զձեղ խոռվող բան մը ունի՞ք: Տեսնենք: — Ես կարծեմ որ այս եղանակը շատ հանձարեղ բան մը ըլլայ, եւ եթէ ըստ պատշաճի ի գործ դրուի շատ աղուոր արդիւնք մը պիտոր ունենայ:

70. Կան խոստովանահարք, մանաւանդ երիտասարդներ, որոնք ամենքն ընդհանրական խոստովանութիւն կը պահանջն, ասիկայ զեղծում մըն է. ընդհակառակն կան ուրիշներ ալ, եւ ասոնք երիտասարդ չեն. որոնք երբէք ընդհանրական խոստովանանք չեն ուզեր, աս ալ ուրիշ զեղծում մըն է, ստոյգ ըլլալով որ ընդհանրա-

կան խոստովանանքը ստէպ հարկաւոր է կամ զոնէ շատ օգտակար:

Ես կը մտածեմ որ երբ աղաշխարող մը ընդհանրական խոստովանանք ըլլալու յայտնի բաղձանք մը ցոյց կուտայ, պէտք է զանիկայ գոհ ընել եթէ խղճահար անձ մը չէ, եւ կամ թէ միայն հածոյից արդիւնք մը չըլլայ այս բաղձանքը, եւ կամ առանց օրինաւոր պատճառի չուղէ, երբ կը տեսնուի որ այսպիսի խոստովանութիւն մը վնասակար չէ, աղէկ է որ ի գործ դրուի:

Երբեմն միջին ճամբայ մը կը բռնուի իր համառօտելու համար, անցած կենաց ամբողջութեան վրայ հարցու փորձ մը կը նեն, եւ կամ որոշուած ատենէ մը սկսելով քանի մը տարուան վրայ տեսութիւն մը կընեն: Ներեն ինձ ընթերցողք, այս ամենը ուրիշ բան չէ, եթէ ո՛չ այնպիսի սպեզանի մը որ ո՛չ զխոստովանորդին կըրնայ գոհ ընել, եւ ո՛չ ալ զխոստովանահայը, գրեթէ ընդհանրական խոստովանանքի մը հարկաւոր եղածին չափ ատեն կը կորսուի: Յետ այսորիկ, երբ մէկը կը կարծէ որ խոստովանութեան վերջը հասած ըլլայ, կը հանդիպի որ այս թէ եւ անկատար տեսութիւնը այսպիսի բաներ գտած ըլլայ, որոնք կարգաւորեալ ընդհանրական խոստովանանք մը կը պահանջն, ի գործնականին խորհուրդ կուտամ այս յօդուածին մէջ տուած ծանուցմանն հետեւելու:

71. Մասնաւորապէս կը խնդրուի խոստովանահարցմէ որ եկեղեցական օրինաց դէմ յանցաւոր գտնուողներու շատ ներռողամիտ չըլլան, եթէ մեր օրերը ողբալիքան մը կայ այս է, որ այս օրէնքին նըկատմամբ այնպէս կը վարուին, իրբեւ թէ մենաւելին եղած չըլլային, եւ կամ իրբեւ թէ պարզ խորհուրդներ ըլլային եւ ո՛չ պատուիրան: Ո՛րչափ մարդիկ իրենք զիւրենք կը անօրինեն առանց պատճառի ալ որն որ Աստուծոյ առջին քննելով կարող ըլլայ ծանր ըսուիլ: Ո՛րչափ խոստովանահարք ալ այսպիսի մնոտի պատճառներով գոն կ'ըլլան, եւ աչք կը գոցեն այնպիսի օրինազանցութեանց վրայ զորոնք երբեմն կրնային արգելուլ:

Սաէսկ եղանակին մէջ անուշ, եւ սկըզբանց մէջ խստութեամբ կրնան ընդունուիլ այնպիսի բաներ, զորոնք շատ մը խոստովանահարք չէին համարձակեր պահանջելու իրենց խոստովանորդւոցմէ: Փորձեն ի գործ գնելու հոս իրենց ըրած յանձնարարութիւնս, եւ պիտոր տեսնեն որ այս փորձը միշտ անպտուղ չի մնար:

72. Կը գտնուին մոլար խղճի տէր խոստովանորդիք, որոնք երբեմն մեծ խղճահարութիւն ցոյց կուտան ամենաթեթեւ պակասութեանց վրայ, եւ անխոտվ ամենածննդ յանցանքներ կը գործեն: Ստիպուած ենք ըսելու ո՞վ է որ երբեմն զիսոստովանորդիքը այս ողբալիք աղիտութեան

մէջ կը պահէ: Խոստովանահայրը, փոխանակ զիսիլճը քննելու, զայն կը մլեն, կ'ընդունին ինչ որ իրենց կը արուի, առանց մեկնութիւն մը պահանջելու՝ երբէք չեն խրատէր, բան մը չեն մեկնէր, ըստ այնմ ալ խոստովանորդւոց վրայ կածի կուրութիւնը, եւ խղճի չար վիճակը:

Որչափ խներ կան, զրորինակ, որ խոստովանութեան մէջ կ'ամբաստանեն առանց միւս մեղքերէն աւելի կարեւորութիւն մը ատլու մէկ կամ երկու անդամ անձի մը վրայ չար խօսած ըլլային, այս ամբաստանութիւնը աղօթքի մէջ մտաց ցընորման և թեթեւ անհամբերութեանց մէջ խօթուած է: Ունակացեալ եւ անմտագիր խոստովանահայր մը ամենը մէկէն մտիկ կ'ընէ այս մեղքերը, եւ չուտով ամբաստանութեան վերջ տալով երկու խօսքով ալ յորդոր մը կ'ընէ, եւ ապաշխարանքը դնելով արձակումը կուտայ:

Բայց եթէ այս խոստովանորդին արտաքոյ կարգի պատահամբ արթուն եւ զգաստ խստովանահօր մը հանդիպելով, վերոյիշեալ խոստովանութիւնը անոր ալ ընէ, այս խոստովանահայրը գիտնալով որ շատ անզամ մահու չափ կը մեղանչուի սիրոյ դէմ, գոն չըլլար այս պարզ ամբաստանութենէն թէ — էրկո՞ կամ երե՞ անէած շար իշո՞ւց ընկերե՞ ո՞ւէ, — այլ պիտոր ուղէ գիտնալ թէ այս եղած բամբասանքը մի գուցէ ծանր ըլլայ, եւ շատ

անգամ կը գտնէ որ իրօք այնպէս է : Աւելի եւս , չարախօսութեան տեղ դրաբարառաւթիւն մը պիտոր գտնէ : Եւր խուզարսկութիւնները յառաջ տանելով պիտոր տեսնէ որ այս մեղքը ունակութիւն մընէ , եւ երկար ատենէ ի վեր արմատացած ունակութիւն մը : Եւ եթէ ուզէ այսպիսի մեղքերու ծանրութիւնը խոստովանորդոյն հասկըցունել . անիկայ , անհաւատալի՞ բան , պաղութեամբ կը պատասխանէ թէ չի կընար այնպէս ըլլայ ինչպէս որ հաւատացունել կ'ուզէ այս նոր խոստովանահայրը . բայ որում սովորական խոստովանահայրը երբէք ծանր կարեւորութիւն տուած չէ :

Այսպիսի խոստովանորդի մը սիսալմունքէ ազատելու եւ զանիկայ լուսաւորելու համար , շատ անգամ ազէկ կ'ըլլայ անոր ընդհանուր քննութիւն մը ընել , եւ մասնաւորապէս ամենայն զգուշութեամբ անոր նայուածքը այն յանցանքներուն վրայ ձըդիլ տալ , որոց վրայ որ սարսափ մը զգացունել կ'ուզուի , եւ աւելի եւս համոզելու համար , ըսելով որ միայն եւ մասնաւորապէս այս յանցանքներուն համար է որ իրմէ ընդհանրական խոստովանանք կը պահանջուի , ասանկով այս կէտին վրայ հրաւիրելով անոր ուշադրութիւնը , կանսկելով կ'արգելու նոր մեղքերու ամբոխ մը , եւ ունակութիւննին կը ջնջէ :

73. Վերջին աստիճանի անուշ հեղու-

թիւն գործածուի ամենուն հետ : Ոմենուն հետ կ'ըսեմ . վասն զի արդէն անուշութիւն ցոյց կը արուի ոմանց , որոնք , ինչպէս կ'ըսեն , ընսոանեաց Բննիամիններն են , բայց ընդհակառակն ուրիշ որչափներու զգուանք եւ պաղութիւն պահուած կ'ըլլայ , եւ երբեմն ալ դառն եւ բարձրաձայն յանդիմանութիւններ , այն աստիճան որ խոստովանարանին բոլորտիքը գտնուող խոստովանարանին ստիպուած են անկէց հեռանալու խոստովանանօր ըսածները չի լսելու համար : Եւ այսպիսի ալէկոծութեան աղմուկը լսողներէն ո՞րը կընայ ըսել որ այն շիոթութիւն հանոլլ Յիսուսի Քրիստոսի Տեղապահը ըլլայ խաղաղութեան եւ գթութեան ատենին մէջ :

Աղէ՞ , որչափ շուտ մոռցաւ այս խիստ դատաւորը որ իր առջին ծունկ չոքած ողորմելի անառակ որդին՝ Հօր քալցր տիտղոսով զինքը ողջունեց , եւ խոնարհած զիլով ըսաւ իրեն—Հայր իմ օրհնէ՛ զիս , վաճն զի մեղայ :

Զգուշանանք , այո՛ զգուշանանք ամենայն ուշադրութեամբ մեր խստութիւններով զիսոտովանորդիններս գայթակղեցունելէ , եւ հոդ տանինք բերաննին չը դոցելու , երբ հարկ է որ բանան խըդամբանքներու վրայ զարհուրելի կերպով ըեռնաւորուած ծանր մեղքերը խոստովանելու համար :

Քէ որ ընականապէս ցաւկոտ բնութեան

տէր էք , կրկնապատիկ ուշադրութեամբ հսկեցէ՞ք վրանիդ ապաշխարութեան աւտենին մէջ , ուր չի նստած ամենասուրբ կուսին Սարեմայ միջնորդութեամբ՝ թախանձանօք խնդրեցէ՞ք Ցիսուսէն պատշաճ համբերութիւնը եւ հեղութիւնը :

74. Ըսի որ հօտին բոլոր ոչխարներուն դէմ խստութիւն չի գործածուիր , այլ անօրինուածներ կը գտնուին , որոց համար հովիւը պահած է մեծագոյն սիրոյ չնորհքը : Ասիկայ այնպիսի կէտ մըն է , որուն վրայ չենք կրնար ըստ բաւականի հսկել . Երբէք չի գործածէք եւ ո՛չ ջերմեռանդական յորդորներու մէջ ալ այն ազգու եւ զօրաւոր խօսքերը , որոնք բնականապէս չափէն աւելի տարածուած նախանձէ շարժած անձի մը պրկունքներուն վրայ կը ներկայանան . մանաւանդ երբ այլասեռ անձի հետ կը խօսուի , աւելի եւս եթէ երիտասարդ մէկը ըլլայ , երբ անոր փրկութեան համար աշխատելու չափէն աւելի եռանդ մը կ'զգացուի . եռանդ , որ ուրիշ շատերուն համար չի զգացուիր , մի՛ վրաստահիք , զգուշացէ՞ք այս եռանդեան աշխոյմէն . պաղ մոխիր ցանեցէ՞ք այս կրակին վրայ , որն որ թէեւ ծածկուած , այսու ամենայնիւ չի կրնար մաքուր ըլլալ , զգուշացէ՞ք այս սիրոյ եւ խնամոց զգացուն ցոյցերէ , որոնք ուրիշ բանի չեն ծառայեր , մանաւանդ թէ կրնան վտանդաւոր ալ ըլլալ , որն որ շատ աւելի աղէկ

Ո՛չ միայն խօսքերնուդ , այլ նաեւ նայ յուածքներուդ վրայ ալ հսկեցէ՞ք , ոմանց խստովանութիւնը լսելու ատեննիդ չըտեմնող աչք ունենալու էք : Ես «Սուրբ Քահանայ» դրքին մէջ խորհուրդ տուի որ խստովանահարք խստավանութիւն լսած ատեննին սովորաբար ձեռքերնին փոքրիկ խաչելութիւն մը ունենան , զոր յոդանածութեան , սրտնեղութեան , եւ կամ փորձութեան ատեն համբուրեն . եթէ փորձութիւնը յանդգնի վրանին յարձակելու այս սուրբ տեղը . նմանապէս համբուրելու են ոմանց խստավանութիւնը լսուած ատեն , եւ մինչեւ այս խոստավանութեանց վերջերը աղէկ կ'ըլլայ որպաչքերնին Աստուածային Փրկչին երկըբապագելի վերքերուն վրայ սեւեռած պահն (1) : Ո՞հ , այս այս արթնութիւն եւ պարկեցած պահապանութիւն ունեցող անձը հարկաւ գոհ եւ երջանիկ կ'ելլէ խոստովանարանէն :

75. Աղէկ բան չէ կանանց խստավանութիւնը երկարցունել մանաւանդ եթէ երիտասարդ ըլլան , իրաւցունէ ողբալի բան պիտոր ըլլար , եթէ առիթ տայիք նշանակելու որ շատ աւելի երկար ժամանակ կը գործածէք օրիորդաց , քան թէ ուրիշներու համար : Զարութիւնը միշտ պիտոր սրէ իւր նետերը այն բարի համբաւին վտանդովը զոր ամեն խոստու

(1) Սուրբ Քահանայ էբե 319 .

վանահայր պարտաւոր է կատարելապէս
անարատ պահելու :

Դժբաղդաբար երբեմն կը պատահի որ
երիտասարդ եւ խղճահար ապաշխարող-
ներու հանդիպիք, որոց խոստովանու-
թիւնները հետեւաբար սովորական ապաշ-
խարողներուն խոստովանութենէն աւելի
երկար կ'ըլլան : Եթէ այս խղճահարը
ընդհանրապէս անանկ ճանչցուած ըլլար,
մեծ անպատեհութիւն մը յառաջ չէր
գար, միայն թէ սպասողներուն ձանձրու-
թեան պատճառ պիտոր ըլլար . բայց ե-
թէ իբրեւ խղճահար գիտցուած չըլլար,
ան ատենը իրը շատ տարբեր պիտոր ըլ-
լար . ասանկ դէպքի մէջ խորհուրդ կու-
տամ խոստովանութիւնը կարելի եղածին
չափ կարծեցունելու (թէպէտեւ մեծ
քաղցրութեամբ), եւ երբեմն ալ նաեւ
ընդհատելու . մնացորդն ալ ուրիշ աւուր
թողով, Քանի մը առիթներու մէջ կրնայ
մէկը մասնաւոր ժամ մըն ալ որոշել այս
տեսակ մարդկանց խոստովանութիւնը
լսելու, եւ թողլու համար որ ուրիշները
իրենցմէ յառաջ անցնին :

Մասնաւորաբար եթէ սպասողներու
մէջ էրիկմարդիկ կը գտնուին այս վերը
յիշուած միջոցներուն կամ մէկը եւ կամ
միւսը անշուշտ ի գործ դնելու է . այս
խղճահարներուն ճամբայ տալու համար,
որոնք պատճառ կ'ըլլան էրիկմարդկանց
խոստովանարանէն հեռանալու մէյմըն ալ

չի դառնալու մտքով : Եւ ո՛չ ալ թոյլ տա-
լու է այն օրիորդաց որ յաճախ խոստո-
վանելու գան, այսինքն չաբթուն մէջ
քանի մը անգամ : Այս սովորութիւնը
ընդհանուր չըլլալով աշխարհ իւր խոր-
հըրդածութիւնները պիտոր ընէ, զայն
իրենց կատակներուն եւ երբեմն ալ կծու
դատաքննութեանց նիւթ ընելով :

Այսպիսի առիթներու մէջ վասակար է
ալեկոծութեան դէմ դնելը եւ մեղի հա-
կառակ՝ նետուած դատաքննութիւնները
անարդէկը : Ասիկայ այն դժբաղդ ժայռն
է, որուն դէմ կը նաւաբեկին այնչափ
անխօնեմ քահանապք, որոնք իրենց բարի
դիտաւորութեան՝ եւ այս յաճախ խոստո-
վանութեանց մէջ խոստովանորդւոց տը-
ռւած շատ մը բարի խորհուրդներու վրայ
անհոգ կրթնած կը յամառին. եւ չեն ու-
զեր համենալ որ շատ աւելի աղէկ էր ի-
րենց բարի համբաւը անարատ պահել,
քան թէ ստէպ խոստովանարանին քովը
ընդունիլ այս օրիորդները :

76. Զարաչար պիտոր մեկնէր իմ զի-
տաւորութիւնս ով որ ըսածներէս հետեւ-
ցունէր թէ ուրեմն ընդհանրապէս ստի-
պելու չէ դժոգովուրդը սուրբ խորհուրդ-
ներու յաճախ մօտենալու : Ես մանաւանդ
թէ կրցածիս չափ կը յորդորեմ զիսոստո-
վանահայրերը միշտ աւելցունելու շա-
բաթական խոստովանողներուն թիւը :

Այս աղէկ առաջնորդուած հոգիները քա-

հանային ամենամեծ մխիթարութիւն կը
պատճառեն :

Անդամ մը անսոնց սրտերուն մէջ հաս-
տառուն աստուածալաշտութեան ճշմա-
րիս եւ ուղիղ գալաջարը կաթեցունելէ
վերջը, եւ խոնարհութեան, եղայրի-
րութեան, հեղութեան, եւ անձնուրացու-
թեան գործնական մեծ զգացմունքը թե-
լաջրելէ ետքը, ամենասուրբ ուրախու-
թեամբ սրտերնիս կը լեցուի ամսոնց ամեն
շաբաթ մեծադոյն եռանդեամբ Յիսուսի
Քրիստոսի շաւիդներուն հետեւիները, եւ
միշտ ալ մեծադոյն կատարելութեան հաս-
ներու համար իրենց առաջարկուած ամեն
միջոցները յօժարութեամբ ընդունիլները
տեսնելով :

Ես այնպէս կը մտածեմ որ եռանդուն
եւ նախանձայոյդ խոստովանահայր մը կըր-
նայ շատ մը անձանց այս սուրբ խոր-
հուրդներու շարաթական յաճախութեան
բարիքը պատճառել : Շատ քիչ անդամ
կը պատահի որ խոստովանորդիք համար-
ձակին նախ իրենք այս շնորհքը խոստո-
վանահօրմէ խնդրելու, խոստովանահայրը
ինքնին պէտք է որ որոշէ, գոնէ պակա-
սաւոր կը գտնուի եթէ խորհուրդ վատայ:
Նախ սկսի համոզելու որ ամեն զվաս-
ւոր տօնախմբութեանց օրերը սուրբ խոր-
հուրդներու մօտենան, յետոյ յորդորէ կա-
նոնաւոր կերպով ամեն ամիս խոստովա-
նելու, ապա տասն եւ հինգ օրը, եւ վեր-

ջապէս ալ շաբաթը անգամ մը : Խոհե-
մարար վարուելով, եւ այս յաճախութե-
նէն յառաջ եկած ամենամեծ օգուտները
խոստովանորդուոց աչքին առջեւ դնելով.
Ես այնպէս համոզուած եմ որ շատերը
պիտոր որոշեն այս սովորութիւնը ստա-
նալու, որոնք եթէ աննախանձ եւ ան-
փոյթ քահանայի մը հանդիպէին, երբէք
պիտոր չի վարժէին :

Մասնաւորապէս երիտասարդները ան-
կարող են երկար ատեն իրենք զիրենք
Աստուծոյ շնորհաց մէջը պահելու, թէ որ
եռանդեան մատակարարած հնարքներով
գրեթէ բռնի չստիպուին սուրբ խորհուրդ-
ներուն յաճախելու : Միայն երկար ժա-
մանակ փորձառու եղած քահանայք կըր-
նան տեսնել այս խորհրդածութիւններու
իրաւացի ըլլալը :

77. Հոստեղ խոստովանահարց ուշա-
դրութիւնը կը հրաւիրեմ այն դժբաղդա-
բար շատկեկ գտնուած ապաշխարութնե-
րուն վրայ, որոնք արտաքին աստուած-
պաշտութեան կրթութեանց երեւելի պա-
կասութիւններ ալ խառնելով բարեպաշտու-
թեան այնպիսի նշանակութիւն մը հնարե-
ցին որ ըստ ինքեան եւ ոչ մտքերուս ան-
կիւնը պիտոր ծագէր :

Այս անձինք շատ մը տարիներէ ի վեր
շարթուն մէջ քանի մը անդամ Յիսուս
առնելու, եւ ամէն օր բարեպաշտական
որոշուած կրթութիւններ ընելու սովորու-

թիւնը ունին : Իրենց համար էականը , եւ կարեւորաց մէջ « առաւելադրոնն »՝ է հաս զօրդութեան մըն ալ չը պակախլը , եւ միայն մէկ հատիկ Ոչջոյն մըն ալ չը թողուլլ . իսկ պակասութիւննին ուղղելու՝ եւ գոնէ աղու կերպով անոնց դէմ կռուելու նրա կատմամբ իրը կը տարբերի . ասիկայ թէեւ ընդհանրապէս պատշաճ կը սերուի , բայց պէտք եղած վերջին աստիճանի կարեւուրութիւն մը չի արուիր : Այսչափը բաւական չէ , երբեմն այն աստիճան կը կռւրանան որ խոստովանահօրմէն անդամ կը պահեն այս սպակասութիւնները , այնպէս որ խոստովանահայրը չի գիտեր զիսնաւու հարկաւոր եղածը :

Կ'ուղէի որ խոստովանահարք այս կէտախ վրայ ամենամեծ ուշադրութիւն մը ընէին : Թէ որ կարող ըլլան այս հոգեւոր կուրութիւնը նշմարել , (որն որ շատ դիւրին բան չէ) զանց չընեն իմացունելու եւ լուսաւորելու այս տեսակ ողորմելի կոյրերը , եւ ճանչցունելու անոնց գաւանած բարեւպաշտութիւններուն դէմ ըրած անիրաւութիւննին . եւ եթէ պատշաճ տեմնուի արդիւն մինչեւ անդամ այն սուրբ խորհուրդներուն մօտենալը , զորոնք անցած կեանքերնուն մէջ չարաչար ընդունած են :

Եւ անոնց իրենց սովորական վարմանց մէջ գանուած ծանր անկարգութիւնները աւելի աղէկ կերպով հասկըցունելու համար

համոզեն զանոնք տարուան մը կամ երկու տարուան վրայ ըստ պահանջման հարկին խղձի քննութիւն մը ընկերու , եւ յետ այնորիկ ալ ուշադրութեան հսկեն տեսնելու համար թէ արդեօք այս տեսակ տեսակ միջոցները իրենցմէ յուսացուած արդիւնքը ցոյց կուտա՞ն թէ ո՛չ :

78. Պարզապէս հոգեւոր խորհրդակցութեան համար խոստովանարանէն դուրս կրնա՞ն ունկնդրութիւն տալ կանանց Ո՛չ երբէք . եթէ երիտասարդ են : Շատ քիչ անդամ . եթէ տարիին առած են : Ա՛ընդունիմ որ այս հոգեւոր խորհրդակցութիւնը կարենայ օգտակար ըլլալ , բայց կանանց համար շատ անդամ ժամանակի կորուստ մըն է , եւ նոյն բանը խոստովանարանին մէջ ալ կրնայ ըլլալ : Ընդհանուագի խօսելով տուներնուն մէջ խոստովանորդւոց այցելութիւնը չընդունին . եւ ո՛չ ալ անոնց այցելութիւնը ընեն իրենց տանը մէջ : Այսպիսի վարմունք մը կրնայ խոստովանահարց չափաղանց օգտակար ըլլալ , մինչեւու խոստովանորդիք ալ բան մը չեն կորսնցուներ :

Չենք կրնար երբէք ըստ բաւականի ըսել թէ որչափ կարեւոր ըլլայ քահանայի մը համար վրանին խօսուելու առիթ չի տալը կանանցմէ ընդունուած եւ կամ անխօնեմութեամբ անոնց տրուած չաճախ այցելութեանց համար : Քանի անդամ լալու ստիպուեցայ , քահանայից ոմանց կուրու

թիւնը տեսնելով, որոնք իրենց բարեկամներուն խիստ զիտողութեանց, եւ նոյն իսկ մեծաւորաց սպառնալիքներուն դէմ ալ կը յամառէին տուներնին կանայք ընդունելու, եւ կամ անոնց տուները երթալու, բանի տեղ չի գնելովիրենց նկատմամբ եղած ժողովրդեան դատաքննութիւնը:

Զար քահանայի մը վրայ ասիկայ զարմանք չի պատճառեր, բայց բարի եւ անստգտանելի վարք ունեցող քահանայի մը համար այս տեսակ վարմունքը ուրիշ կերպով չի մեկնուիր. եթէ ոչ ցնորքի եւ կամ ծուռ դատողութեան տալով: Այսու ամենայնիւ այս խորհրդածութենէն՝ աւելի պարզ բան մը չի կրնար ըլլալ, այսինքն թէ: Հարէւառը չէ որ ևս այս ննշ անշին ունցած անտեսած, եւ բացացահաղէն հարէւառը է որ համբաւած անտրադ պահէմ:

79. Վերջ կուտամ այս զլխոյս, մասնաւորապէս խոստովանահարց յանձնելով որ աղօթք ընկն, եւ շատ աղօթք ընկն Աստուծմէ իրենց արուած խոստովանորդւոց բաղմաթիւ գերդաստանին համար: Ո՛հ, եթէ շուտով լսուած աղօթք մը կայ, ստուգիւ խոստովանահօր մը իւր անսուակ որդւոց համար ըրած աղօթքն է: Թողադօթէ՛ ուրեմն անոնց համար՝ հոգւոյն բոլոր եռանդեամբը, եւ մասնաւորաբար անոնց համար աղօթք ընէ, որոնք որ փորձութեան դէմ կը կուրին, որպէս զի չիյնան,

այնչափ աւելի աղօթք ընէ որչափ որ ծանրէ փորձութիւնը: Երբեմն ալ այս դիտմամբ սուրբ եւ անմահ պատարագին զոհը թողմատուցանէ, եւ սրբոց օրինակին հետեւելով երբեմն ալ ծանրկեկ ապաշխարանք մը ընէ աստուածային արդարութիւնը հաշտեցունելու համար:



եղած ինսամբը տանելու համար յատուկ գպրոցներ կանգնուած են, եւ հետզհետէ ալ կը կատարելագործեն այսպիսի կրթութեան միջոցները, սակայն արեւելքի մէջ ո՞չ դժբաղդաբար դեռ երկար ատեն պէտք է որ այս կարեւոր ուսմունքն ալ զարդանայ ու ծաղկի ի պէտս այնչափ ու զորմելի արարածներու, որոնք քաղաքական թշուառութեանց եւ մանաւանդ կրօնական տգիտութեան մէջ կը հեծեն. ուստի կը խնդրեմք որ ընթերցողը կարեկից ըլլան համարձակութեանս, որով խուլ համար դիւրադոյն եւ գործնական կրթութեան եղանակ մը կ'առաջարկեմ յարգոյ ծողովքապետաց եւ Հոգաբարձու քահանայից ի զիւրութիւն իրենց խոստովանահայրութեան պաշտօնին կատարման, որն որ թէեւ անկատար, սակայն այսու ամենայնիւ միշտ ոչնչէն աւելի ալէկ ըլլալով կրնայ օգտակար ըլլալ. Ազգերնուու մէջ զտնուած խուլ-համերց կարելի եղածին չափ կրօնական կրթութիւն մը տալու, որն որ գուցէ յետոյ գրգիռ մը ըլլայ բարեսէր անձանց՝ զայն աւելի եւս կատարելագործելով ի գործ դնելու, ո՞չ միայն ի կրօնական, այլ եւ ի քաղաքական կրթութիւն այնչափ թշուառներու, որոնք առանց այս կրթութեան անպետ մնալով Ազգին ալ ծանրաբեռնութիւն են, մինչեռ կրթութելով կրնային անոր օգտակար անդամ ըլլալ:

Խորլ—համերը—ասոնց կրօնքի ամենահարկանոր նիւրերու մէջ կրրութիւնը առարք խորհրդոց մօտենալու արժանի ըլլալու համար

80. Յացանի է որ չի կրթուած խուլ-համերք կրօնքէն ամենեւին տեղեկութիւն մը չունին, եւ անոնց ի գործ ցրած քանի մը կրօնական գործքերը սոսկապէս եւ ճշգորէն պարզ նիւթականութիւններ են, ինչպէս որ շատ անդամ տեսնուած է այն խուլ-համերց վրայ. որոնք կրթուելնէն յառաջ, այնպէս կը կարծուէր որ, հասկրնային կրօնական գործքերը, եւ այնպէս ալ կընդունուէին: Սակայն պատշաճ կրթութիւն մը ստանալէ վերջը, խոստովանելու ստիպութեցան որ ամենեւին բան մը չէին հասկնար ո՛չ պատարագ լսեներէն, ո՛չ ամենասուրբ Հաղորդութեան երկրպագութենէն եւայլն: Ուստի ամենեւին կասկած չիկայ որ չի կրթուած խուլ-համերք կատարելապէս տգէտ ըլլան բոլոր յայտնեալ ճշմարտութեանց ինչուան աւելի հիմնականներուն նկատմամբ ալ, որոնք գիտնալու հարկաւոր են հարկաւորութեամբ միջոցի:

Եւրոպայի գրեթէ ամեն մեծամեծ քաղաքներու մէջ այս թշուառներուն պէտք

81. Ինչպէս որ կ'երեւի այնչափ դժուարին չէ խուլ-համերց կրթութիւնը, որն որ մանաւանդ թէ ըստ ինքեան ամենագիւրին բան մըն է : Եւ իրօք, եթէ աղէկ մը գիտուի, կը տեսնուի թէ ինչ ազդեցութիւն որ կ'ընէ հաշենը տղայոց բանականութեանը վրայ, նոյնը կ'ընէ նշնը խուլ-համերց բանականութեանը վրայ, Տղայոց հանճարը ականջներուն միջոցաւ կը կրթուի, իսկ ին-լ-համերցը աչերու միջոցաւ, եւ ահաւասիկ . ինչպէս :

Տղայ մը ամեն անդամ որ կը տեսնէ այն նիւթը որ հաց կ'ըսուի, կը լսէ որ մայրը կ'արտաքերէ այս հնչիւնը հաց, յորմէ կը հասկընայ որ այն հնչիւնը հաց նիւթը կը նշանակէ : Ամեն անդամ որ կը տեսնէ միւս նիւթը որ ջուր կ'ըսուի, կը լսէ որ մայրը կ'արտաքերէ այս հնչիւնը ջուր, ուստի եւ դիւրաւ կը հասկընայ որ, այս հնչիւնը կը նշանակէ ջուր նիւթը : Նմանապէս ալ երբ կը լսէ ուժեւ, լուսն եւային բառերուն հնչիւնը :

Եթէ նոյն կեպով ալ շատ անդամ խուլ-համեր ցոյց արուի հաց նիւթը եւ ամեն անդամ ալ քովը գրուին հաց գրերը, կը հասկընայ որ այսպէս շարուած այս երեք գրերը այն նիւթը կը նշանակեն . Ջուրը ցոյց տալով, եւ շատ անդամ զնոյնը կը կ-նելով կը հասկընայ որ ջուր յարմարած չորս գրերը այս նիւթը կը նշանակեն . նոյնը ըսելու է, երբ անոր ցոյց արուի

ուժեւը, լուսնը եւայլն. եւ գրուի ուժեւ, տաշն եւայլն :

82. Ասկից կը հետեւի որ տղան այն հաց հնչիւնը յածին պէս մտքին մէջ կը ծագի այս նիւթին գաղափարը, թէ եւ աչքին առջեւ ներկայ չունենայ զայն : Նոյնպէս ալ երբ խուլ-համերը գրուած տեսնէ այս երեք հաց գրերը, մորքին մէջ կը ծագի մի եւ նոյն գաղափարը, թէ եւ այն վայրկենին մէջ հացը չը տեսնէ : Ուստի անտարակոյս է որ խուլ-համերը աչքերուն միջոցաւ կարող ըլլայ եւ իրօք ալ ստանայ այն ծանօթութիւնը, զոր խուլ չեղող անձ մը կ'ստանայ ականջներուն միջնորդութեամբը :

Արդ խուլ-համերց կրթութեան համար նախ եւ յառաջ ըլլալիք բանը՝ է անոնց գիր գրել սորվեցունելլ, որով ետքէն անոնց ցոյց արուի՝ որ այն գրերը տարբեր յարմարութեամբ շարուած զատ զատ նիւթեր նշանակելու կը ծառայեն :

Երբ այս գրերը զծելու վարժի, անոր նիւթ մը ցոյց կը արուի, զոր օրինակ համեր ցը, քովը հաց գրելով, եւ իրեն ալ նոյն հաց բառը գրել կը արուի, եւ շատ անդամ, միշտ նիւթը ցոյց տալով . յետոյ հացը աչքին առջեւէն հեռացունելով այս երեք հաց գրերը ներկայ մարդու մըն ալ ցոյց կը արուի, որն որ անմիջապէս կերթայ հացը կ'առնէ եւ կը բերէ : Այս կերթայ պով խուլ-համերը դիւրաւ պիտոր հասկը-

նայ որ այն այնպէս յարմարած երեք զրեռը միշտ հաց կը նշանակեն , եւ ուրիշ բան չէ , եթէ ո՞չ հաց : Նոյն բանը ուրիշ նիւթերու նկատմամբ կրկնելով , պիտօր հասկընայ որ նիւթերը գրով կը նշանակուին :

83. Կրթութեան սկիզբը նախադասուելիք նիւթերն են հետեւեալները , հարդ , ին , որև , լուսին , ասուու , առանկ , երկեր , իրակ ջար , պարուղ հաւ , հաւին : Որովհետեւ նշանէս պիտօր տեսնուի , խուլ-համբը շուտով պիտօր սփիպուի ճանչնալու այն գրերուն յարմարութիւնը , որոնցմով որ նշանակուած են իրերը : Խուլ-համերքանի մը մարդ ցոյց կը տրուի , ամբն անդամ հարդ գրելով : Նոյնը պէտք է ընելք բանի մը կին ցոյց տալով : Եետոյ շրջադայող , ուտող , աշխատող մարդ եւ կին ցոյց տալով կը դրուի , կնդանի հարդ , կնդանի ին : Յետոյ ցոյց տրուի մարդ մը կամ կին մը իրերեւ մեռած , աչքերը դոց , նշանակելով որ ո՞չ կուտեն եւ ո՞չ ալ կը շրջադային եւայլն . որոնք գեսնին տակը կը թողուին , յորմէ ետքը կը գրուի մեռած հարդ , մեռած ին :

Տունկ բառին մեկնութիւնը սորվեցուանելով ծառ մը ցոյց կը տրուի , կամ մացառ մը , կազմաք մը , եւայլն , միշտ առանկ գրելով , մինչեւ որ հասկընայ թէ այս բառով միշտ բայսերը կը նշանակուին : Բայց պարուղն նշանակութիւնը սորվեցուանելու համար խնձոր մը ցոյց կը տրուի , թուղ մը

կամ ընկոյզ մը , եւայլն , որպէս զի հասկընայ թէ այս բառով կը յայտնուին տունկերուն բերքերը :

84. Այսպէսով խուլ-համբը վերոյիշեալ թանձրացեալ նիւթերուն անունը ճանչնալէն եւ նշանակել գիտնայէն վերջը , հարկ է որ բարույն եւ լորին վերացեալ գաղափարին անցնիլ տաք : Այս նպատակաւ առողջ խնձոր մը ցոյց տալու է , գըրելով բարէ պարուղ , թարմ եւ աղէկ եփած հաց մը , գրելով բարէ հաց : Այս եղանակը կրկնելու է մինչեւ որ հասկընայ որ բարը բառը այնպիսի նիւթերու կը պատկանի , որոնք որ հաճոյ եւ ախորժելի յատկութիւններ ունին . նոյնը ընկելու է նաեւ հակառակ բաներու նկատմամբ ալ , ցոյց տալու է աւրուած ինձոր մը , փտած կազմամբ մը , մքլած հաց մը , եւ (պատուղ , տունկ , հաց) բառերէն վերջը գրելու է առ , մինչեւ որ հասկընայ թէ այս պառը ֆիսակար եւ անախորժ յատկութիւն ունեցող նիւթերու կը սեպհականուի :

85. Անկից վերջը շատ դիւրին կ'ըլլայ բարոյական բարույն եւ չարին գաղափարին անցնիլլ : Նատ անդամ կը կրկնուի աղքատի մը ողորմութիւն տալու գործողութիւնը , եւ կը գրուի ողբաննէն : Գետնէն ինող մը վերցուանել , որն որ ինք իրմէ չի կրնար ելլեւ կայնիլ , եւ կը գրուի օդնուննէն : Եետ այնորիկ իրերւ թէ ընկերունէս մէկը կը ծեծենք , եւ կը գրուի պար

ՆԵԼ: Ուրիշի պատկանեալ բան մը գաղտուկ վերցունել կը ձեւացուի, եւ կը գըրուի հողմանը: Յետ որոյ ողբարսութիւն եւ օդունիւն բառերուն քով կը գրուի հարէ, հաճութեան եւ հաւանութեան ցոյցեր արտայատելով, եւ զբնել ու հողմանը բառերուն քով ալ չը կը գրուի, զզուանքի ու տհաճութեան ցոյցեր յայտնելով: Ասանկով շոււտ մը պիտոր հասկընայ որ այն բարոյական գործքերը, օրոնք գովասանաց՝ արժանի են. բարէ կ'ըսուին, իսկ արհամարհանաց արժանինի եղածներն ալ չը կ'ըսուին:

Առանց երկար ատեն ուշացունելու պէտք է ծանուցանել խուլ-համեր ընել բային նշանակութիւնը: Ցոյց կը արուի կին մը, որ հաց կ'ընէ, եւ կը գրուի ին հաց ընել. մարդ մը որ գործ կ'ընէ, եւ կը գրուի հորդ հորդ ընել: ծառ մը որ պըտուղ կ'ուտայ, եւ կը գրուի հորդ պատուղ ընել. հաւ մը որ հաւկիթ կ'ածէ, եւ կը գրուի հորդ հորդ ընել: Մինչեւ որ խուլ-համբը հասկընայ այս բառին գօրութիւնը:

86. Այսուհետեւ կընայ Աստուծոյ մէկ գաղափարը արուիլ այսաէս: Աշխարհքիս արարչագործութեան մէկ պատկերը առնելով ցոյց կը արուի խուլ-համեր այն յարգելի ծերունին, որ ամեն բան կ'ըստեղծէ, արեւը, լուսինը, աստղերը, մարդը, կինը, տունկերը, կենդանիները, եւ այլն, եւ կը գրուի Աստուծոյ, եւ ասիկայ շատ անդամ կրկնելու է մինչեւ որ հաս-

կընայ՝ որ ցոյց արուած ծերունին այն բառով կ'անուանուի: Յարմար միջոցներ գործածելով ցոյց կը արուի որ անիկայ ըրաւ արեւը, եւ կը գրուի Աստուծոյ ընել որևէ. ըրաւ լուսինը, եւ կը գրուի Աստուծոյ ընել լուսինը, ըրաւ մարդը եւ կինը, եւ կը գրուի Աստուծոյ ընել հարդը, Աստուծոյ ընել ինը, եւ այն: Յետ այսորիկ ցոյց կը արուի որ այն երեւցած բաներուն ամբողջ ջութիւնը աշխարհք կ'ըսուի, բոլոր պատակերին բոլորափքը գրելով աշխարհն, աշխարհն աշխարհն, եւ վերջապէս Աստուծոյ ընել աշխարհն: Այսուհետեւ նշաններու զօրութեամբ ջանալ պէտք է հասկրցունելու համար որ, Աստուծոյ վերկիննըն է մեր աշխարհն պահուած ու ծածկուած, անանկ որ զինքը չենք կրնար տեսնել:

Եթէ արարչագործութիւն ներկայացունող պատկեր մը չը գտնուի բաւական է որ ձեռքով բան մը դագրուի, միայն թէ որ ըուուին զլխաւոր նիւթերը, արեւը, լուսինը, մարդը, եւ քանի մը տունկերը ու կենդանիիք:

Այս կերպով խուլ-համբը երկինքը գրտնուող եւ մեղմէ պահուած ու անտեսանելի էակի մը գաղափարը կ'ունենայ, որն որ ամեն բան ստեղծեց: Ստուգիւ ասիկայ չի կրնար Աստուծոյ մէկ կատարեալ գաղափարը ըլլալ, այսու ամենայնիւ քիչէ շատէ մեծ էակի մը գաղափարը կուտայ, որն որ ամեն բան ստեղծելու համար պէտք

եղած գորութիւնը եւ կարողութիւնը ուսնի : Թերի գաղափար մը , որն որ աղէկ մը իրը զննելով , շատ ստորին ալ չէ այն գաղափարէն , զոր ունին Աստուծոյ նկատմամբ շատ մը քրիստոնեայ գռեհիկ տղայք . որոնք ճշգրիտ ծանօթութիւն մը չունին ո՞չ անոր հոգեւորութեան , ո՞չ անսահմանութեան , եւ ո՞չ ալ աշխարհիս յոչնչէ գոյացութեան վրայ , մինչդեռ շատերը այնպէս կ'երեւակայեն որ՝ Աստուծած այնպէս արարիչ ըլլայ ամեն բանի . ինչպէս որ է որմագիրը տան մը նկատմամբ :

87. Այսափ ինչ սորվեցունելէ վերջը գաղափար մը տալու է այն զանգուածին որն որ հորու , ինչ կը կազմէ . գրելով

մարդ

կին

հոդի հորդին

հոդի հորդին

մեկնելով որ այս երկու բանը հոդի հորդին , միացած կը նշանակեն հորդ , ինչ ։ Մեկնուի որ հորդինը այն մասն է որ կ'երեւի կը շօշափուի , ձեռք , կուրծք , գլուխի , ոտք , եւ այլն . նշաններով ցոյց տալով որ այս ամեն բաններուն ի մի բաղադրութիւնը է հորդին : Յետոյ ալ կը ծանուցուի որ միւս հոդի ըստուած նիւթին ալ մարմնոյն մէջն է , որն որ անոր պէս ո՞չ կը տեսնուի , եւ ոչ ալ ձեռքով կը շօշափուի , եւ թէ երբ մարդ՝ կամ կին մը կը մեռնի , այս հոդին կամ երկինք կ'երթայ , երին+ գրելով եւ ցոյց տալով , եւ կամ դժոխք , աշխարհն քիս տակը ցոյց տալով , եւ դժոխ+ գրելով

Հոգւոյն յերկինս երթալը ցոյց տալով ուրախութեան եւ ցնծութեան ցոյցեր յայտնելու է , հասկըցունելու համար որ , հոն տեղ ջայելսնուն կայ , եւ ի դժոխս երթալը իմացունելու ատեն մեծ ցաւոց եւ հեծութեան ցոյցեր յայտնելու է , հասկըցունելու համար որ , հոն տեղ դանջնուն էր կրտսէն :

Հասկըցունելու է որ երկինքը միայն բարի հոդին կ'երթայ , որն որ ողբանական կուտայ , օդուանիւն եւ ուրիշ բարի հոդ+եր կլնէ . իսկ դժոխսքը ար հոդին կ'երթայ , որն որ իւ հոդու , իւ պարի , եւայլն :

88. Ասկէց վերջը սորվեցունելու է խուլ-համեր ուուլ բայլն նշանակութիւնը : Հաց մը տալով գրելու է հաց ուուլ , ինձոր մը տալով ինձու ուուլ եւայլն . մինչեւ որ այս ուուլ բայլն գօրութիւնը իմանայ , ուսկից վերջը հասկըցունելու է որ , Աստուծած երկինքը կուտայ բարի հոգւոց , եւ դժոխքն ալ չարերուն , գրելով Աստուծած ուուլ երին+ բարի հոդին : Աստուծած ուուլ դժոխ+ ար հոդին :

Այս ճամբառի խուլ-համրը քիչ ատենուան մէջ պիտոր սորվի որ մարդ եւ կին մարմնէն զատ ուրիշ դյութիւն մը ունին աչաց անտեսանելի , որն որ մարմնոյ հետ չի մեռնի , եւ որուն պահուած է ուրիշ կեսնք մը , ուր Աստուծած կը վարձատրէ բարի գործքերը եւ կը պատժէ չարերը : Այս կերպով , թէեւ վեր ի վերոյ , պիտոր հասկըցնայ ըստ պահանջման սրբոյն Պօղոսի Ա-

ռաքելոյն թէ . Ե Ասուսած , և որ ինչը էն
չն լինէ պարզեադու : (1)

89. Այնուհետեւ ջանալու է խուլ-համեր
սորվեցունելու աւելի եւ նուազ , մէծ եւ
փոր , հաւասար եւ անհաւասար , վակն եւ
անվակն ան , այս եւ ո՛չ բառերուն զօրու-
թիւնը . ինչպէս նաեւ թիւերը մինչեւ տասը :

Մէկ կողմը չորս խնձոր կը գրուի , եւ
միւս կողմն ալ երեք . չորս խնձորներուն
քով կը գրուի աւելի , եւ երեք խնձորնե-
րուն քով նուազ : Նմանապէս տասը հաւ-
կիթ մէկ կողմը , եւ հինգ հատ ալ միւս
կողմը , երեք քար մէկ կողմը կը գրուի եւ
երկուք ալ ուրիշ կողմը . միշտ գրելով ա-
ւելի եւ նուազ բառերը , մինչեւ որ հաս-
կընայ որ աւելի համեմատական առաւե-
լութիւն մը կը նշանակէ , եւ նուազն ալ
համեմատական պակասութիւն մը :

Այնուհետեւ ցոյց կը արուի բարձր ծառ
մը) լեռ մը , բարձրահասակ մարդ մը ,
գրելով ծառ մէծ , լւս մէծ , մարդ մէծ : Եւ
տունկ մը ցոյց տալով , կամ փոքրիկ բը-
լուր մը , կարճահասակ մարդ մը , կը զըր-
ուի բառն ի փոր , լւս փոր , մարդ փոր :

Երկու հատ հաւասար աթոռ ցոյց կը
տրուի , կամ երեք հաւասար դրամ , կամ
գաւաթ . ամեն նշանակութեան ատեն դը-
րելով հաւասար , յետոյ ալ անհաւասար ա-
թոռներ , դրամներ , ամաններ , եւ այլն ,
գրելով անհաւասար :

(1) Եբք. ՃԱ. 6 :

Թղթի մը վրայ քանի մը գիծ կը քաշուի ,
որոնց վերջը կը գրուի կափճան , կծիկ մը ,
չուան , ժապաւէն , եւ կամ թել քակե-
լով , երբոր ասոնց ծայրը կը համնի , կը
գրուի վակն ան : Նմանապէս երբ ձաշը կը
լմնայ , կամ օրը մթնելով իրիկուն կ'ըլ-
լայ կը գրուի կափճան : Այսուհետեւ կա-
տարեալ շրջանակ մը կը գծուի , եւ նշա-
նակելով որ հոն միակերպ կը պտղտի , եւ
կէտ մը չոնի ուր վերջանայ , հոն ալ կը
գրուի անվակն :

Յատուկ նշաններով կը հարցուի թէ
կընայ մէկը սանդուխսէ մը վեր ելլել , եւ
գլսով ստորասական պատասխան մը տա-
լով կը գրուի այս : Կը հարցուի թէ կընայ յ
մէկը պատէ մը վեր ելլել , եւ դիխով բա-
ցասական պատասխան մը տալով կը գը-
րուի ո՛չ կը հարցուի թէ գաւաթ մը ծուռ
կը խմուի : Այս : Փարչ մը ջո՛ւր : Ո՛չ
կընայ մէկը աթոռ մը վերցունել : Այս :
Տանը սիւներէն մէկը : Ո՛չ . Եւայն : Մին-
չեւ որ հասկընայ որ այս բառը հաստա-
տութեան նշան մընէ , եւ ո՛չ ալ մխտո-
ղական :

Քանի մը նիւթեր կը համրուին խուլ-
համեր քով , առաջին թիւը 1 նշանակե-
լով , երկրորդը 2 , եւ այսպէս հետեւա-
բար մինչեւ 10 , որն որ կըթութեան ըս-
կիզը կը բաւէ :

90. Այսափ բան սորվելէն եւ հասկընալէն
վերջը խուլ-համբը ըստ բաւականի տրա-

մաղրուած կ'ըլլայ ամենասուրբ Երրորդութեան ալ ծանօթութիւնը ունենալու, որն որ կ'ըլլայ գրելով Աստուած եւ վարն ալ երեք աստուածային անձինք, այսպէս:

Աստուած

Հայր—Որդէ—Հոդէ սուրբ.

Նշաններու զօրութեամբ կը մեկնուի որ Հայրը Աստուած է, Որդին Աստուած է, Հոդին սուրբ Աստուած է: Յետ այնորիկ կը գրուի:

Երրորդուրինি

Հայր—Որդէ—Հոդէ սուրբ

Անկից զերջը Երրորդութիւն Աստուած—Աստուած Երրորդութիւն եւ այս շատ անգամ, որպէսզի հասկընայ թէ մի եւ նոյն բան է: Ետքէն ալ Հայր Աստուած—Որդին Աստուած, —Հոդին սուրբ Աստուած:

Այսուհետեւ

Երրորդուրինি

3. Անձնք

1. Անչ Հայր . 2. Անչ Որդէ . 3. Անչ Հոդէ սուրբ:

Աստուած

3. Անձինք

Հայր Աստուած—Որդին Աստուած—Հոդին

սուրբ Աստուած

Աստուած

3. 4.

Ետքէն կը գրուի Երրորդութիւն ընել աշենի, Հայր ընել աշենի, Որդին ընել աշենի, Հոդին սուրբ ընել աշենի, Աստուած ընել աշ

իտրենի, որպէսզի սորվի որ ամենասուրբ Երրորդութեան համար ալ ըսելու է՝ ինչ որ կ'ըսուի Աստուածոյ նկատմամբ, այսպէս Հօր, Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ համար. բայց միշտ Աստուածոյ Երրորդութեան Հօր, Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ անունները լիշտած ատեն, երկրպագութեան սիրոյ եւ մեծարանաց ամեն հնարաւոր ներգործութիւններ եւ ցոյցեր ընելով :

94.Գուցէ ըսուի որ այս կերպով խուլ-համրը չի կրնար ամենասուրբ Երրորդու-թեան խորհրդոյն կատարեալ եւ ճիշտ գա-ղափարը ունենալ, զորն որ ես ալ կ'ըն-դունիմ Բայց այս առարկութիւնը ինձի ը-նողին կը հարցունեմ որ տղայքը քրիստոնէ-ական գարդապետութիւն սորված ատեննին միթէ ասկից շատ աւելի բացայատ գաղա-փար մը կ'ստանա՞ն արդեօք: Ես կը մտածեմ որ տղայքը շատ հասարակ կերպով կը սոր-վին Աստուածոյ միութիւնը եւ Երրորդու-թիւնը, եւ զբեթէ այնպէս եւ այնչափ՝ որչափ որ կրնայ հասկընալ խուլ-համրը՝ իրօք աստուածաբանները հազիւ թէ կրնան սահմանել անյն բառին նշանակութիւնը՝ Ասկից զատ գիտնալու է որ խուլ-համրը կրթութեան մէջ յառաջ երթալով, եւ ոչ թէ յառաջուան կատարելապէս խաւար, այլ քիչ մը լուսաւորուած մտքովը հետք-հետէ զննելով կրնաքին գրեթէ նկրթական ցոյցերը, զոր օրինակ պատկերներ եւ պատ-մական դէպքերը ներկայացունող նկար-

ները կամաց կամաց իրաց ծանօթութիւն առնելու մէջ կը յառաջանայ : Որն որ միշտ աւելի եւս նշանակելով մեկնելու է մարդեղութեան սուրբ խորհրդոյն նկատմամբ :

92. Պէտք է ցոյց տալ խուլ-համեր ամենասուրբ կուսին Մարիամու աւետման պատկերը, հասկըցունելով որ հոն գծագրուած կուսին անունը Մարիամ է, եւ նոյն ատեն անոր շատ, եւ տեսակ տեսակ պատկերները ներկայացունելու է, ամեն մէկուն քովը կամ վրան Մարիամ գրելով : Այս կերպով պիտոր սորվի որ այնչափ պատկերներու մէջ, եւ այնչափ խորան-ներու վրայ յարդուած կինը Մարիամ կ'ըսուի :

Յետոյ նշաններով ցոյց կը տրուի խուլ-համեր որ որդին ամենասուրբ Երրորդութեան 2. անչը իջաւ ինա, և Մարիամ : Ուսկից վերջը Յիսուսի սուրբ ծննդեան պատկերը մէջտեղ բերելով պէտք է ցոյց տրուի որ Մարիամ այն մանկան մայրն է . որ է Որդին, ամենասուրբ Երրորդութեան 2. անչը, զոր շուտով պիտոր իմանայ եթէ ցոյց տրուի անոր շատ մը տղայքը գրկերնին բռնած մայրեր, եւ ամեն անդամ գրելով Ֆայր, եւ յետոյ ալ Մարիամ՝ Ֆայր Որդու :

Մարմնացած, այսինքն Մարիամէն ծնած Որդույ իրեն յատուկ անունը կը տրուի Յիսուս Քրիստոս, եւ շատ մը ամենասուրբ կուսին գիրկը եղած տղային պատկերները ցոյց տալով ամեն անդամ կը գրուի Յիսուս-

Քրիստոս : Նտքէն այս տղան ցոյց կը տրուի մեծցած տաճարին մէջ վարդապետաց հետ, յետոյ կատարեալ մարդ ժողովրդեան քարոզ տուած ատենը, յետ այնորիկ հետզ-հետէ ձաղկուած, վշով պսակուած, խաչի վրայ գամնաւած, մեռած, գերեզման տարուած, եւ միշտ ալ Յիսուս Քրիստոս գրելով :

Զոր օրինակ ձաղկուած եւայլն, ներկայացած ատեն, անոր ցաւակցութիւն ցոյց տալու է երկրպագութեան նշանները ընելով . մանաւանդ համբուրելով անոր արիւնը եւ վէրքերը, եւ միանդամայն բարկութեան, եւ զգուանաց, նշաններ ցոյց տալու է անոր ամբարիշտ դահիճներուն դէմ : Ասնցմէ վերջը մահուանէ յարուցեալ ցոյց տալու է, որն որ երկինքը կը համբառնայ, եւ միշտ գրելով Յիսուս Քրիստոս : Այսունետեւ ամենասուրբ Երրորդութեան պատկեր մը ճարելով խուլ-համեր ցոյց տալու է որ Յիսուս Քրիստոս է ծիչդ անիկայ, որ Հօր Աստուածոյ աջ կողմը նստած է, աղաւնիի կերպարանքով Հոգեւոյն սրբոյ հետո :

93. Այս կէտիս խուլ-համեր ուշադրութիւնը նորէն գրաւելու է ամենասուրբ Երրորդութեան խորհրդոյն վրայ հասկըցունելով որ Աստուածային Անձանց Հօր, Որդւոյ, եւ Հոգւոյն սրբոյ մէջ ամեննելին անհաւասարութիւն չիկայ նշանակելով որ ունհաւասարութիւն ո՛ւշ հաւասարութիւն այս : Ինչպէս որ նոյն ատեն հասկըցունելու է

նշաններով որ Յէսուս Քրիստոս է ամենաւ
սուրբ Կուսին Մարդու արգանդը իշած
եւ ի Սորբանա ճնած Որդին եւայլն Այ-
նուհետեւ ցոյց արուի որ Հոյր Աստուած
ու մարդ : Հոդին առողջ Աստուած ու մարդ :
Որդին Աստուած այս մարդ . Յիսուս Քրիստոս
Որդի , մարդ Աստուած :

94. Այս ամենքը հասկցունելէն վերջը
հարկաւոր է ճանչցունել որ անիկայ մեր
Փրկիչն է : Այս դիտմամբ խուլ-համեր
մեղքին գաղափար մը տալու է, ցոյց տառ
լով անոր աղտոտած աղակի մը, աղտօտ
ձեռք մը , եւ կը գրուի արտո , եւ այս
եւս շատ անգամ , մինչեւ որ հասկնայ
թէ այսպէս կ'ըսուի ո՛ եւ իցէ աղտեղու-
թեան , Յետ այնորիկ խուլ-համեր աչքին
առջեւ պէտք է լուալ եւ մաքրել այն աւ-
րասները , անանկ որ ապակին ալ , ձեռքն
ալ , ստանան իրենց նախկին մաքրութիւ-
նը , եւ այս գործողութիւնն ալ կը գրուի
ըստացուածն է :

Ասկէց վերջն ալ խուլ-համեր առջեւ
չար գործքեր ընել կը կեղծուի , ինչպէս
է ողնաւ ուրնել կառաղը-նեամբ մոլոնիլ եւայլն ։
Ամեն մէկ գործքի ատեն գրելով Նույն Ընդ-
հակառակն ալ քանի մը բարի գործքեր ընե-
լու է , զոր օրինակ ողբաննեան դաւ , օքնել ,
եւայլն : Եւ ամեն մէկ բարի գործքի ատեն
գրելու է առաջնութիւնն : Այնուհետեւ
հասկցունելու է որ մեղքը հոգւոյն աղտը
եւ արասն է զրելով , Նույն հոդի արտո :

Ինչպէս նաեւ լոր հոդի ճը մշղ արտառը չի
կրնար երկնաք երթալ : Անկից վերջը հոդ
տանելու է որ խուլ-համերը ըմբռնէ որ
ամենքն ալ թէ այր եւ թէ կին մեղօք
արտաւորած ենք , Յետ այնորիկ խաչե-
լութիւնը առնելով վէրքերէն վազած ա-
րիւնը ցոյց տալու է , հասկցունելով որ
այս արիւնը կը գործէ Նույն արտէն
ըստացուած :

95. Այս ատենս սորվեցունելու է խուլ-
համեր սիրել բային նշանակութիւնը :
Ցոյց տալու է մայր մը , որ կը գրկէ եւ
կը համբուրէ իւր տղան . քոյր մը , որ
նոյնպէս կը վարուի իր քրոջը հետ , եւ
կը գրուի սէրեւ : Նմանապէս անձ մը ցու-
ցնելու է , որ սիրավիր կերպերով ուշր-
հաւնիւն կուտայ , եւ կը գրուի սէրեւ : Ան-
կից վերջը հասկցունելու է որ ինչպէս
մայրը զտղան , քոյրը զքոյրը , եւ ողորմու-
թիւն տուող անձ՝ կը սիրէ զաղքատը ,
այսպէս ալ Աստուած սէրեւ վարչը , Պիտի ,
եւ այս սէրյուն համար Որդին ամենասուրը
բարեւնիւնն : 2. անձը իջաւ ամենասուրը
կուսին Մարիամու արգանդը , մսուրի
մը մէջ ծնաւ , խաչին փրայ մեռաւ , իր
արեամիը ըստացուած ընելով մեր հոդւոց , ա-
նոնց վրային մեղքը ջնջելու համար , որոնք
այսպէս լուացուած միանելէն վերջը ուժ-
յունիւն կ'երթան , ու ալ դժոխ չեն երթար:
Ուստի եւ նոյն ատեն գրելու է Յիսուս
Քրիստոս ըստացուած հոդի , Յիսուս Քրիստոս

Փրկէւ : Փրկէւ մը որ հոգիներուն վրայէն պատուերը կը մաքրէ ու զանոնք բարձրաբանի :

96. Աս ալ սորվելէն վերջը , գաղափար մը տալու է խուլ-համեր ապաշխարութեան եւ ամենասուրբ հաղորդութեան խորհուրդներդէն . բայց նախ մեղաց թողութեամբ՝ հետեւեալ կերպով : Անձի մը դէմ նախատափ գործք մը ընել կը կեղծուի , զոր օրինակ ապտակելու , կամ ըրունութեամբ անկից բան մը յափշտակելու կամ կորդելու , եւայլն : Եւ ամեն մէկ նախատափ գործքի ատեն նախառին + կը գըրուի , այն ատեն նախատուած անձը այնպէս ցոյց տալու է որ , իբրեւ թէ սաստիկ բարկացած ըլլայ , եւ ուզէ պատժել դնախատողը , որն որ ծունկի գալով , եւ ձեռքերը մէկզմէկու միացուցած թողութիւն խնդրելու ձեւը կ'ընէ . այս գործողութեան վրայ նախատուածը զիջանիլ , եւ հաշտութիւն ընել , կը ձեւացունէ . հաշտ , եւ սիրալիր աչքով դնախատողը զիտելով եւ զանիկայ ոտքի կայսնեցունելով այնպէս պէտք է հասկրցունէ որ՝ ա'լ ամենեւին բան մը չունի անոր դէմ , եւ այս ատեն գրելու է նողունիւն , հասկրցունելով որ այն գործողութեան անունը նողունիւն է :

97. Այնուհետեւ խոսդովանառնեւն գաղափար մը կը առուի : Անձին մէկը անանկ կը ձեւացունէ իբրեւ թէ քսակը կամ ժամացոյցը գողցուած ըլլայ , եւ հարցմունքի

ձեւեր կ'ընէ ասոր անոր , գիտնալու համար թէ՝ ո՞վ է գողցեր . հարցուածներէն մէկը կեղծուած յանցանքին տէլ ձեւանալովի իբրեւ եղած հարցմունքէն քիչ մը շըփոթած եւ նաեւ ամըցցած երեւնալով , ձեռքերով երեսը կը գոցէ , եւ յետոյ ալ հաւանութիւն ցոյց կուտայ , այո՛ , ըսելով եւ նշանացի ալ հասկրցունելով եւ կը զրուի խոսդունունիւն . մէկ ուրիշ մը ծեծ կերած ձեւանալովի իր ցաւած ըլլալը կը յայտնէ հարցման ձեւերով , ներկայ գտնըւողներէն կը վնատուի թէ՝ ո՞վ ծեծած ըլլայ , մէջերնէն մէկը նշանով կը հասկրցունէ թէ ինքն է ծեծողը , նորէն կը գրուի խոսդունունիւն : Այսպէս ուրիշ կերպերով յառաջ կ'երթըցուի , մինչեւ որ խուլ-համբը հասկընայ որ գործուած յանցանքի մը յայտարարութիւնը խոսդունունիւն կը սուի : Մի եւ նոյն ատեն գողութեան , ծեծի , եւայլն , յանցաւորները զղջալու ձեւեր , եւ խոստմանց նշաններ ընելու են , ալ այնպիսի յանցանքներ չընելու , եւ այն ատենն ալ գրելու է զղում :

Այս ատենս մէկը այն դիրքը ձեւացունելու է , որուն մէջ կը գտնուին խոստվանորդիք խոստովանանք եղած ատեննին , եւ հասկրցունելու է խուլ-համեր որ այն ատենը զղջամիշ գրդերուն խոսդովանունիւնը կ'ընէն , եւ մէջէերով նախառուած Աստուածը նողունիւն կուտայ , որով հոդին որապէն կը մաքրուի եւ երբ ճարդը կը մեռնի , հոդին

Երիբնաւը վայելելու կ'երթայ : Այս կերպով խուլ-համրը շատ դիրութեամբ պիտօր հասկնայ որ քրիստոնեայք իրենց մեղ-քերը քահանային կը խոստովանին անոնց թողութիւնը ընդունելու համար :

98. Այս ատեն թղթէ նշխարով մէկուն հազորդութիւն տալու ձեւը ընելու է, եւ նշանացի հարցունելու է թէ, եկեղեցիներու մէջ հազորդուող անձինք ի՞նչ կընադունին : Այս ատենը հասկըցունելու է որ կ'ընդունին զնորդին Աստուած Հարություն, Յիսուս Քրիստոս : Ասով խուլ-համրը պիտօր ըմբռնէ որ ամենասուրբ Հաղորդութիւնը միւսներուն պէս հասարակ կերակուր մը չէ : մանաւանդ թէ ան ատենը վերահասու պիտօր ըլլայ թէ ի՞նչ պատաճառով քրիստոնեայք այս սուրբ խորհրդոյն այնչափ յարգութեան, մեծարանաց, եւ երկրպագութեան, ցոյցեր կ'ընեն :

Խուլ-համրը արդէն բային նշանակութիւնը սորված ըլլալով, պէտք է անոր մեկնել որ ունեցած բարիքներուս ամենքն ալ Աստուած մեզի կուտայ : Պը-րելով Աստուած հաց բալ, Աստուած հարուժան բալ, Աստուած Երին+ բալ : Եւ այսպէս ուրիշ բարիքներ, որոնք կընան նշանով ցոյց արուիլ :

99. Յետ այնորիկ մարդ մըներկայացուանելու է, որն որ աղքատի կերպարանքով եւ ձեւով իրեւ թէ հաց, հագուստ եւ այլն կը մուրայ, եւ գրելու է ազնի+, եւ

կըկնելու է մինչեւ որ խուլ-համրը հաս-կընայ որ բան մը ուզելու ներդործութիւնը այս բառով կ'անուանի : Որով դիւրութեամբ կընայ հասկընալ որ երբ քրիստոնեայք ամենասուրբ հաղորդութեան, կամ խաչելութեան մը առջին ծունկ չոքած են, ազնի+ կ'ընեն : Աստուածմէ հաց, կարողութիւն, երկինք, եւային կը խնդրեն :

Եւ որովհետեւ խուլ-համրը կը տեսնէ որ քրիստոնեայք ամենասուրբ կոյս Մարիամու պատկերին առջեւն ալ աղօթք կ'ընեն, մեկնելու է որ Մարիամու ազնի+ կ'ընեն, որպէս զի իրենց համար միջնորդէ ու բարեխօսէ, ասովի բարեխօսութիւնն դաղափարը անոր կը տրուի հետեւեալ կերպով : Ներկայ գտնուողներուն մէկը միջնորդութիւն ընելու ձեւեր կ'ընէ ուրիշ անձի մը համար, որն որ մուրացկանի կերպով հոն քիչ մը հեռու կեցած կ'ըլլայ, նշաններով հասկըցունելով որ ուզած բաները իրեն համար չեն՝ այլ հոն քիչ մը հեռու գտնուած աղքատին համար են, եւ գրելու է բարեխօսութիւն :

100. Խուլ-համեր այսչափ ծանօթութիւն տրուելին վերջը, զոր երբէք պիտօր չը կարենար ինքիրմէ ստանալ, այնուհետեւ բանականութեան բնական լուսովը, եւ կրօնքին արտաքին ցոյցերը տեսնելով շատ աւելին պիտօր հասկընայ, եւ պիտօր կարենայ գոնէ նշաններու միջոցաւ իւր տարակոյները յայտնել, եւ անոնց մեկնուա-

թիւնը պահանջել : Դիւրաւ կրնայ այնչափ կրթութիւն ստանալ որչափ որ ունին այնշափ գռենիկ եւ անկիրթ քրիստոնեայ արդայք , որոնք սուրբ խորհրդոց ընդունելութիւնան արժանի սեպուած են :

Այնուհետեւ կրթողն ալ մեծ դիւրութիւն կ'ունենայ միշտ աւելի բաներ սորվեցունելու , մանաւանդ պատկերներու , նկարներու եւ տպուած բաներու միջնորդութեամբ :

Պատկեր մը ցոյց տալով , որուն վրայ արքայութիւնը տպուած կամ քաշուած ըլլայ , մեկնելու է որ հոն է Աստուած ամենասուրբ Երրորդունենաց , հոն կը գանուի Մարիամ եւ արտայանենա գացած ուրիշ շատ մը բարի հոգիներ , որոնք առանց Համբանէ կը ժայելն , եւ մեզի համար կը բարեինան :

Դժոխքին պատկերը ցոյց տալով , հասկըցունելու է որ հոն կը գանուին չար հոգիները , որ կը դանչնեն առանց վախճանէ յուսահատութեամբ եւ կատաղքար , ինչպէս որ երեսներուն վրայ յայտնի կ'երեւի :

401. Դիւրին Կ'ըլլայ այնուհետեւ մահու չափ եւ ներելի , այսինքն մէծ եւ չորս մեղաց գաղափարը տալու , ցոյց տալով ծանրապէս չար գործքեր , ինչպէս մարդ սպաննել , եւ թեթեւապէս չար գործքեր , ինչպէս փոքր հարուած մը տալ ուրիշին : Յետ որոյ հասկըցունելու է որ մահու չափ ժանք կամ մէջքերը զմարդը դժոխք կը տամին : իսկ ներելի նէնև կամ չորս մեղքերը քաւած :

բան կըտանին , որուն պատկերը ցոյց տալով խուլ-համրը պիտոր տեմնէ այն հոգիներուն գէմքերուն վրայ վատահութիւնը եւ խաղաղութիւնը , եւ ան ատենը հասկըցուանելու է , որ անոնք քաւարանէն աղատելով եւինու պիտոր երթան :

Նոյնպէս ալ կրթողը կրնայ հրեշտականերու եւ զեւերու ծանօթութիւնը տալ , ցոյց տալով որ առաջինները բարի հոգի են , եւ երկինն են . իսկ միւսները չար , ուստափի եւ դժոխն են , զասոնք ներկայացուանող պատկերները ըստ ինքեան բաւական կ'ըլլան զիսուլ-համրը կրթելու :

Այնուհետեւ դիւրին կ'ըլլայ հոգւոյ գաղափարը տալ , հասկըցունելով որ բան մըն է ո՛չ երկայն , եւ ո՛չ լայն , ո՛չ բարձր , եւ ո՛չ ցած , որն որ ո՛չ աչքով կը տեսնուի եւ ոչ ալ ձեռքով կը չօշափուի , եւայլն Յորմէ ետքը մեկնելու է որ Աստուած հոգի է , մը հոգին հոգի է . հոգի են հրեշտակաները : հոգի են սուրբառաները :

Նմանապէս եւ դիւրին կ'ըլլայ մեկնել խուլ-համեր բարի հորինութելու եւ չափ եւրինութելը : Կրթողը գլուխը ձեռքին կրթընցուցած , եւ աչքերը տեղ մը սեւեւուած մոտածելու ձեւը կառնու , եւ ան ատենը գրելու է մատծել : Ի՞րիշէլ : Յետոց այն դիրքը փոխելով հաստատ մտքով նըսշանակելով բարի գործք մը ըրած ըլլալու : եւ կը զրուի մատծել բարի հորիշել : Ուրիշ անդամ եւ ուրիշ դիրքով հասկըցունելու 8

լու է չար գործք մը ըլլած եւ զրելու է լու բան հրածել : Յետոյ գը- րելու է բարձ հրածել , առաջնորդնին է . իսկ ար հրածել մղդ : Ասանկով խուլ-համ- ըը ըստ բաւականի տրամադրուած՝ արժա- նի կ'ըլլայ ասկաշխարութեան եւ ամենա- սուրբ Հաղորդութեան խորհուրդներու մօտենալու՝ որ է գլխաւոր նպատակնիս :

102. Վերջապէս համոզուելու է որ՝ ի սկզբանէ ծանուցուած կրթութեան բանա- լին ունեցողը կրնայ կրթել զխուլ-համը նշաններու միջնորդութեամբ , որոնք աշ- քերու վրայ ազգեցութիւն ունին , ինչպէս որ կը կրթուին տղայք հնչման միջնորդու- թեամբ , որն որ ականջաց վրայ կ'ազդէ : Որով կրնանք խուլ-համերց վերոյիշեալ կրօնական կրթութենէն զատ , կարդալու եւ գրելու մէջ վարժեցունել , քերականու- թիւն սորվեցունել , եւ յետոյ ալ հետըգ- հետէ ամեն զիտութիւն եւ արհեստ- ներ , ինչպէս որ ամեն մարդ կրնայ գու- շակել մինչեւ ցարդ տրուած օրինակնե- րէն . որոնցմէ յայոնապէս կ'երեւի որ խուլ-համը նիւթական ծանօթութիւննե- րէն շատ դիւրաւ կրնայ հոգեւոր եւ վե- րացեալ ծանօթութեանց անցնիլ :

103. Վերջին աստիճան ցաւ պիտոր ըգ- գայի , եթէ ընթերցողներէս ոմանք այս ցոյց տուած եղանակս անբաւական դա- տելով խուլ-համերց կրթութեան . նոյն համոզմամբ ձեռնամուխ ըլլային , ու կա-

տարեալ տղիտութեան մէջ ընկղմած թո- ղուին այս ողրոմելի արարածները , որոնք կրնային իրմէ վերոյիշեալ կերպերով օդնու- թիւն գտնել : Պէտք է ըսեմ որ ո՛չ միայն յայտնապէս կ'երեւի ինձ թէ՝ այս ոճը բա- ւական աղդու է խուլ-համերց հաղորդե- լու սուրբ կրօնական ամենահարկաւոր ծանօթութիւնները , այլ եւ թէ փորձն ալ շատ անգամ ըրած են իմաստուն եւ բա- րեսէր անձինք , որոնք իրենց վորձերուն յաջող ելքը տեմնելով քաջալերուցան կա- նոնաւորեալ դպրոցներ բանալու , որոնց մէջ կրօնական կրթութենէ զատ արհեստ- ներ ալ կը սորվեցունեն խուլ-համերց , որոնք իրենց աշխատանքով պատուաւոր եւ արդիւնաւոր վիճակներու ալ կը հաս- նին :

104. Ուստի եթէ տեղ մը լքուած խուլ- համը մը գտնուելու ըլլայ , կը թախանձեմ ի սէր Յիսուսի զարժանաւոր ժողովրդա- պետը կամ զնողաբարձու քահանացն՝ որ անմիջապէս փորձի ձեռնամուխ ըլլալու քարեհաճին , ապահով ըլլալով որ իրենց աշխատութեանց յաջող ելքին վրայ չափէն աւելի պիտոր միսիթարուին : Բայց եթէ ծանրատաղտուկ զբաղմունքներով պա- շարուած ըլլան , ան ատենը պատշաճ կը տեմնէի որ գոնէ ուրիշ բարեպաշտ քա- հանայ մը , կամ հոգեսէր անձ մը գտնե- լով անոր յանձնէին այս ողրոմելիներուն կրթութեան փորձը :

Իրաւցունէ ողբալու արժանի բան, անատանելի նեղութիւններ կրելով եւ կենաց վասնգով աշխարհքիս ծայրերը, բարբարոս ու վայրենի մարդկանց մէջ երթալու փափաքը կ'զգացուի հաւատքներուս ճշշմարտութիւնը քարոզելու այն ողորմելի մարդկանց՝ որոնք տգիտութեան յութիւնարի մէջ ընկդմած են. մէջերնիս եւ քովերնիս կը տեսնուին այն ողորմելիներուն նմանները, որոնք ալ նմանապէս զուրկ են այս ճշմարտութեանց լուսէն, եւ այսու ամենայնիւ անտարբերաբար եւ անհոգութեամբ իրենց տգիտութեան մէջ ապրելու եւ մեռնելու թոյլ կը տրուի :



ՅՈՒ ԴՈՒ ԱԿ

103. Սահմանած փոքրիկ գործալմացաւ, որն որ Աստուծոյ փառաց եւ հոգւոց փըրկութեան համար սաստիկ փափաքով սկըսայ, եւ կը վերջացունեմ եռանդուն մաղթանքներ առ Աստուած խարելով, որ պէսզի յաջող ելքով իմ չնչին աշխատանքս պսակելու բարեհամի:

Ամենասիրելի եղացրակիցք, ներեցէք որ դրիչը ճեռքէս չի ճգած, ես վերջին անդամ պաղատիմ ճեղի յանուն Յիսուսի Քրիստոսի, որուն պաշտօնեայ էք, եւ յանուն այնչափ մեղաւորաց, որոնց համար իւր սուրբ եւ անզին արիւնը թափեց, բոլոր եռանդեամբ մէջ տեղ ելլելու՝ աւետարանական այգիին մէջ աշխատելու համար, զոյն որ այս Աստուածային Հովիւը ճեղի վստահացաւ :

Յիսուս Քրիստոս իր տեղը մեզի տուաւ, այս աշխարհքիս վրայ ապրած ատենը ժողովուրդներ զինքը կարծես թէ բազմապատկած տեսան, տգէտները կրթելու, վշտացածները միմիթարելու եւ մեղաւորները դարձի բերելու համար: Բայց իւր ամենացաւալի չարչարանաց եւ սուրբ մահուան նախընթաց օրը ընդհատեց իւր գործքերը, եւ մեղաւորաց վրայ ամենամեծ գութ եւ կարեկցութիւն մը ցուցընելով, քահանայութիւնը հաստատեց, որ-

պէսզի զանոնք փրկէ, այսինքն ուրիշ էն-
չը ճը հաստատեց, իր տեղը եւ իւր ա-
նուամբը ընելու՝ ինչ որ ինքը իւր մահկա-
նացու կենաց մէջ ըրած էր՝ աշխարհքիս
փրկութեան համար :

Յիսուսի Քրիստոսի կենդանի պատկերներ,
անոր աստուածային պաշտօնը մշտն-
ջենաւորելու անձառելի իշխանութեամբ
ճոխացած փրկիչ քահանայք, համապա-
տասխանենք մեր կոչման, եւ միշտ ջա-
նանք աւելի արժանաւոր ըլլալու այն բար-
ձրը վստահութեան, որով զմեզ կը պա-
տուէ : Փրկենք հոգիները, փրկենք ըստ ո-
րում մեզի յանձնուած է մնոնց յափտե-
նական փրկութիւնը: Աղատենք թշնամւոյն
ձեռքէն Յիսուսի Քրիստոսի սիրելի ոչխար-
ները, ընդհատենք անոնց դժոխքին ճամ-
բուն մէջ ըրած քայլերը, որն որ արդէն
բաց եւ յօժար է զանոնք կլլելու, եւ
փրկութեան ճամբուն մէջ առաջնորդելով
բանանք անոնց այն գեղեցիկ երկինքը,
ուսկից որ ցիշա վարնուելու արժանի
եղան, եւ զորն որ դարձեալ Աստուած ի-
րենց կը չնորհէ :

Անհաշտ պատերազմ հրատարակենք այն
պակասութեանց դէմ, որոնք աւելի մաս-
նաւոր ոյժ մը ունին նախանձաւորու-
թեան եռանդնիս մարելու : Պատերազմ
ուրեմն, եւ մահու չափ պատերազմ մը-
տաց ցնորման դէմ, որ զմեզ ցամքեցու-
նելով կը գաղջացունէ: հեշտախտութեան

դէմ, որ զմեզ մարմնաւոր դարձունելով
անասուններու կը հաւասարեցունէ: ազա-
հութեան դէմ, որ սրտերնիս դարաննե-
րու մէջ զետեղած ոսկիներուն հետ կը
կապէ, ամբարտաւանութեան դէմ, որ
Աստուծոյ փառքը անկից յափշտակելով
մեր ծառայութեան կը գործածէ, եւ ան
ալ այնպիսի պաշտօնի մը մէջ, որ բոլո-
րովն աստուածային է, եւ մարդ շատ
փոքր տեղի մը ունի . գաղջութեան դէմ,
որ ամենասուրը գործքերն անդամ գժկա-
մակութեամբ ընել կուտայ, դատարկու-
թեան դէմ, որ ժողովրդեան գայթակ-
ղութիւն է, եւ աղքիւր այնչափ թշուա-
ռութեանց :

Բայց այսչափով ալ գոհ ըլլալու չէ յօ-
ժարամիտ ջանքերնիս, զերկիրը հերկելէն
վերջը ցանենք եւ հնձենք, հիմը ձգելէն
վերջը շէնքը բարձրացունենք, ուստի ախ-
տերը քակելէն եւ ջնջելէն վերջը ընտիր
առաքինութիւններով ալ սրտերնիս զար-
դարենք : Կենդանի հաւատք, հաստատ
յոյս, բորբոքուած սէր, աստուածային
եռանդ, վասպուն նախանձ, խորին խո-
նարհութիւն, խիստ մահացուցում, գո-
րովալից սիրտ, եւ անխախտ աստուած-
պաշտութիւն, անայլայլելի հեղութիւն,
անյաղթելի անշահախնդրութիւն, շնիչ
պարկեշտութիւն, աստուածային սուրբ
կամաց կատարեալ համակերպութիւն : Ա-
հաւասիկ այն առաքինութիւնները, զորոնք

սուրբ քահանայի պէս պէտք է որ բոլոր
սրտով մշակնաք, եւ առանց որոց հարկաւ
հազար պարագայներու մէջ պակասաւոր
պիտոր գտնուինք սուրբ վիճակներուն
խիստ պարտաւորութեանց մէջ :

Յարդելի եղբայրակիցք, կը մօտենայ
այն ահաւոր օրը, անմասիանձ եւ անհոգ
քահանային համար աղետից եւ թշուա-
ռութեանց օրը, անձկութեան օրը, երբ
աստուածային դատաւորին առջին երեւ-
նալով ամենախիստ համար մը պիտոր տանք
պաշտօններուս պարտաւորութեանց կա-
արման կերպին վրայ : Խնչպի՞սի դժբաղ-
դութիւն, եթէ Յիսուս Քրիստոս : Տու-
ժամաց անպէսունեան +* : (1) ըսած ատեն, սը-
նոտի գործքեր ցոյց տանք փոխանակ բա-
րի գործքերու, որոնցմով դրեթէ հիւ-
սուած ըլլալու էր կեանքերնիս :

Օր մը սուրբ քահանայ մը լսելով երիտա-
սարդ եղբայրակցի մը մահը, որն որ հազիւ-
թէ առաջին պատարագը զուրցած մնոեր
էր . կենդանի հաւատքով մը հառաչեց :
ՎՈ՞վ երջանիկ իրեն, որ միայն մէկ պատա-
րագի մը նկատմամբ համար պիտոր տայ :

Բայց շատ տարբեր պիտոր ըլլայ մեր
հաշիւը : Ո՞րչափ պատարագներ ո՞րչափ
լսուած խոստովանութիւններ, որչափ
քարոզներ, որչափ այցելած հիւանդներ,
որչափ կրթուած տղայք ու տղէտներ,
որչափ փրկուած հոգիներ : Եւ բոլոր այս

(1) Դ. մ. մ. Ժ. 2 :

պաշտօններու մէջ ի՞նչպիսի պատասխա-
նատուութեան արդիւնք մը չի ծանրա-
նար վրանիս :

Երջանիկ ենք, եթէ աղէկ ըրած ըլլա-
յինք այս ամեն գործքերը, որովհետեւ ա-
ւելի բացայաց յուսով կրնայինք ներկա-
յանալ ահեղ դատաւորին աթոռին առ-
ջեւ, բայց ո՞հ, քահանայական կեանքեր-
նուս մէջ որչափ անջրպեսներ, որչափ
պարապներ սլիտոր գտնուին : Որչափ
խորհուրդներ կրնայինք տուած ըլլալ, ու
չենք տուած : Որչափ խղճի խայթեր կըր-
նայինք շարժել մեղաւորաց, ու չենք շար-
ժած : Որչափ աշխատանքներ կրնայինք
կրած եւ կամ սկսած ըլլալ, ու չենք կը-
րած : Որչափ անգամ կրնայինք մեղաւո-
րաց ետեւէն վաղած ըլլալ, ու չենք վա-
զած : Որչափ աղօթքներ կրնայինք մասնց
դարձին համար Աստուծոյ ըրած ըլլալ, ու
չենք ըրած : Որչափ ապաշխարանքներ
կրնայինք այս ողորմելի անսպակներուն
փրկութեանը համար քաշած ըլլալ, ու
չենք քաշած : Վ. Երջապէս որչափ հոգի-
ներ կրնայինք փրկած ըլլալ, որոնք գու-
ցէ արդէն դժոխք ինկած են. Եւ կամ հոն
երթալու վրայ են զաղջութեան մէջ քը-
նացած ըլլալով եռանդ չունենալներուս
պատճառաւ :

Արթնանա՞ք ուրեմն, սիրելի եղբայրա-
կիցք: Արդ ժամ իսկ է մո՞ւ կ' գո՞ւ շաբանու-
(1) Հառաջ. ԺԳ. 44 :

Եւ շտապինք անգամ մը վերջ տալու այն
ամեն բաներու, որոնք կրնան յաւիտենա-
կան եւ անօդուտ խայթերու պատճառ
ըլլալ :

Ո՞վ երկրպագելի սիրտ Յիսուսի միշտ
ամենաղթած եւ սիրող . թոյլ տուր որ ես
քու ոտքերուդ առջին դնեմ այն բարե-
պաշտ խորհուրդները, զորոնք քեզմէ ա-
ռած համարձակեցայ այս գրքոյկով եղբայ-
րակիցներուս հաղորդելու : Օրհնէ՛ զանոնք
ո՞վ Տէր , սրբէ այս խորհուրդները , եւ
սրտանց կը խնդրեմ , տուր անոնց այն
դադանի օծութիւնը , եւ աստուածային
դօրութիւնը , որ ապահովապէս զանոնք
աղդու եւ գործունեայ ընէ :

Այս շնորհքը քեզմէ կը խնդրեմ ո՞վ Յի-
սուս , ամենասուրբ Կուսին Մարիամու բա-
րեխօսութեամբը , այն քու գորովագութ-
եւ բարի Վօրդ , որուն որ բան մը չես
կրնար զլանալ , մանաւանդ երբոր քու
պաշտօնեաներուդ համար կը միջնորդէ :

Գովեալ լիցի Յիսուս Քրիստոս
եղիցի միշտ եւ հանապազ , ամեն

ՅԱՆԿ ԳԼՈԽՈՅ



| | | |
|----------------------------|---------------------|-----|
| Տառաջարան | • • • • • • • • • • | Ե. |
| Ա. Մեկնութիւն Քրիստոնէական | • | |
| վարդապետութեան | • • • • • • • • • | 7 |
| Բ. Քարոզ | • • • • • • • • • | 18 |
| Գ. Ապաշխարութիւն | • • • • • • • • | 57 |
| Դ. Խուլ-համերց կրթութիւնը | • • • | 90 |
| Ցորդորակ | • • • • • • • • | 117 |



ԱՐԵՎԱՏՅԱՆ
ՎՐԻՊԱԿՆԵՐՈՒ
ՈՒՂԻՂՆԵՐՆ

- | | | |
|---------|--------------|--------------|
| 18-ՃԱ. | հաստատել | հաստատել |
| 18-ԽԲ. | դործածելնիս | դործածելնիս |
| 21-ՃԱ. | շունչ | շունչ |
| 22-ԽԲ. | քարողչութեան | քարողչութեան |
| 22-Լ. | մէկ | մէկը |
| 31-ԽԶ. | զի | զի |
| 62-Ճ. | աղօթքներուդ | աղօթքներուդ |
| 74-Թ. | անձանց | անցած |
| 79-ԼԱ. | ցաւկոտ | ցաւկոտ |
| 102-ԽԵ. | Առաջուած | Առաջուած |



Spec 104

ՀՀ Ազգային գրադարան



NL0108817

